

1907

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ  
ԵՎ ԲԱՂԱՐԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ





Նոր շրջան VII տարի

Հրատ. IXX տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՂԵՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Ի Բ

№ 2

Փ Ե Տ Տ Ր Ո Ւ Ա Բ

1907



ԹԻՖԼԻԾ

Տպարան „ՀԱՅՐԱԿԱՆ“ Ընկ. Մողար., վեճ., 8,  
1907

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 2

*Ելես*

	<i>Ելես</i>
1) ԲՐԱՆԴ Դրամատիկական պօէմա հինգ գործողութեաժը Հենրիկ Էքսենի . . . . .	5
2) ԱՐՁԱԳԱՆՔ, բանաստեղծութիւն, Խուղի-Փէր-ի . . . . .	27
3) ՄՈՎՍԵՍ Թէ ԴԱՐՎԻՆ? Պրօֆ. Ա. Դոդելի . . . . .	38
4) ԴՐՍԻ ԶՈՀԵՐ, (պատմուածք) Գաղթականի . . . . .	53
5) ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՍԿԻԶ, Ե. Բահամուրի . . . . .	58
6) ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Անկախի, . . . . .	60
7) Ի՞նչ եւ ՈՒԶՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄԾԿՐԱՏՆԵՐԸ Դէղ Եւ Լաֆարզի Շ.-ի . . . . .	77
8) ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ Բ. Իշխանեանի . .	86
9) ՔՆՆԱԴԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ 1) Գ. Պէխանով, «Ոյժ եւ բռնութիւն» 2) «Ֆիդայական գրա- կանութիւն» 1. Ա. Ահարոնիան «Աքատութեան ճանա- պարհին». 2. Ա. Յովհաննիսեան «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները», «Գորդեան հանգոյց». 3. Ա. Մէլք—Սողոմոնեանի հրատարակած «Արեան Զայներ» 4. «Գրոշակի» շարականները նուերած դաշնակցու- թիան սուրբ վկաներին, մարտիրոսներին եւ առաքեալ- ներին: 3) «Начальная русская хрестоматия для армянъ», составилъ Седракъ Мандинянъ, 1-ая книжка. Խուսերէն հատընտիր հատուածներ հայերի համար, կազմեց Ա. Մանդինեան, Ա. դրբոյկ. Հրատա- րակութիւն «Գուտտենբերգ»-ի 4) Արշակ Աթաեան «Աալ- մասու».	96
10) ՆՈՐ ՄԱՅԱԾ ԴՐՔԵՐ . . . . .	111
11) Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ . .	112
12) ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրորդ Պետական դուման.— Մեր կացութիւնը:	—
13) ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տնտեսական զարգացումը ինքը ստեղ- ծում է լուրջ յեղափախական գործօններ:	—
14) ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ. . . . .	—
15) ՅԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	156

ԲԱՑՈՒԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 թ.

## „ԲԱՆՈՒՈՐ“

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ, ՏՆՏԵԽԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ  
ԴՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

Բաժնեգինն է 6 րուբլի տարեկան:

Բագուից դուրս 7 ր. 50 կ.

Արտասահմանի համար 10 ր.

Առանձին համարը 5 կուգ.:

Հասցէն՝ Բակու, րոճակիա գազետ «Բանօր»

ԲԱՑՈՒԾ Է ՆԱԴՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 թ.

## ԽՐԱՑ

Երգիծաբանական-պատկերագարդ շաբաթաթերթի  
Տարեկան գինն է՝ Թիֆլիսում 4 ր. Ուրիշ տեղեր՝ 5 ր.:

Հասցէն՝ Տիֆլիս, Ռեդակցիա «Խատաբա».

Խմբագիր հրատարակիչ Աստ. Երիցեան

ԲԱՑԻԱԾ է ԲԱԺԿՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՄՇԱԿ“

ՔՍՂԱՔՍԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(35-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1907

ԹԻԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿ» կը հրատարակի նոյն պլողակամով և նոյն  
ուղղութեամբ:

Ամեն օր բացի տօներին յաջրդող օքերից:

Բաժանորդագինը. «ՄՇԱԿ» տարեկան գինը 10  
սուբլի է, տամնեմեկ ամսւանը՝ նոյնագիս 10 ռ., տամն  
ամսւանը՝ 9 ռ., ինն ամսւանը՝ 8 ռ., ութը ամսւանը՝  
7 ռ., եօթն ու վեց ամսւանը՝ 6 ռ., հինգ ամսւանը՝  
5 ռ., չորս ամսւանը՝ 4 ռ., երեք ամսւանը՝ 3  
ռ., երկու ամսւանը՝ 2 ռ. և մի ամսւանը 1 սուբլի:

Արտասահմանեան զաժանորդագրութիւնը. Ամ ե-  
րիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան  
6 գոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ.  
Պարսկաստանի բաժանորդները՝ 10 սուբլի.

«ՄՇԱԿ» գրւել կարելի է Խմբազրատանը (Բա-  
զարնայտ և Բարոննեկայտ վիոլոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գլ-  
րւելու համար և առհասարակ նամակներ և ծրաբներ  
ու գրկելին պէտք է գիմել հետեւեալ հասցեալ. ՏԱՓ-  
ԼԻԾԵ, Ռեդակցիա „ՄՇԱԿԵ“, խոկ արտաստհմանից՝  
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները բնդունում են բոլոր լե-  
զուներով:

Ապառիկ բոժանորդագրութիւն չէ վնդունում:

1887

Ի. ՏՈՒԻ

1907

## „ՀՅՆԹԵՍ ԸՄԱՐԵԱՅ“

Ո Կ Ս Ո Կ Մ Ն Ա Թ Ե Բ Թ Բ Ռ

Կը մտնէ իւր զոյութեան քամներորդ տարեշրջանը, և կը շարուշնակուի իր ծանօթ ուղղութեամբն և ծրագրով: «Հանդէս Ամուրհայ» իրքն Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մասենագրութեան, բանասիրութեան, լեզուարանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան, պատմութեան վերաբերեալ քննագատական ուսումնասիրութիւններ—ինքնագիր և թարգմանածոյ: Զանց պիտի չանոււին հայ ականաւոր ու գրադէտ անձնաւորութեանց կենսագրութիւններ: Նոյնպէս քննագատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեու լրերու, նոր հրատարակութեանց ևն:—Տարեկան բաժնեգինն է 10 ֆր. 4 ր.—  
կանխիկ:

Խ Մ Բ Ա Գ Բ Ո Կ Թ Ե Ա Ն Հ Ա Ս Ց Ե Ն

A la Rédaction de la Revue „Handess“, Vienne  
(Autriche) VII 2 Mechitharistengasse 4.

ԲԱՑՈՒԱԾ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յ Ա Ս Կ Ե Ր ”

Մանկական պատկերագրդ ամսագրի

Խմբագրութեան հասցեն՝ Թիֆլիս, Բէհրութեան փողոց  
№25, (Тифлисъ Редакция журнала «Лекеръ» կամ Tiflis  
(Gauakas) Pedak, de jurn. «Hasker»)

Խմբագրի հրատարակիչ՝ Կ. Ա. Վահանիկ

Բ Ա Յ Ի Ա Ծ Ե  
Բ Թ Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն  
Բ Ա Զ Մ Մ Վ Վ Վ Պ Ե Պ Ւ Ր

Բ Ա Զ Մ Մ Վ Վ Վ Պ Ե Պ Ե Պ Ւ Ր Ա մ ս ա թ ե ր թ Ս. Ղ ա զ ա ր ու Հ այ-  
կ ա կ ա ն ։ Ճ ե մ ա ր ա ն ի ն , հ ա յ պ ա ր ե ր ա թ ե ր թ ե ր ու է-  
ր ի ց ա գ ո յ ն ը , ի ր վ ա թ ս ն ե ր ո ր դ չ ո լ ր ո ր դ տ ա ր ե շ ր-  
ջ ա ն ի ն մ է ջ պ ի տ ի մ ա ս ն ա կ յ ի ն , ա ւ ե լ ի հ զ օ ր թ ա-  
փ ո վ , ա զ գ ա յ ի ն մ տ ա ւ ո ր վ ե ր ա ծ ն ո ւ թ ե ա ն :

Ի ր ն պ ա տ ա կ ի ն հ ա ս ն ե լ ու հ ա մ ա ր , Բ ա զ մ ա յ է ա յ  
կ ը ն ե ր կ ա յ ա ց ն է հ ա յ ժ ո ղ ո վ ր դ ե ա ն բ ա ժ ի ն մ ը՝ բ ո-  
լ ո ր ո վ ի ն ա զ գ ա յ ի ն զ ի տ ո ւ թ ե ա ն ց ն ո ւ ի ր ե ա լ .

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ ե Մ Մ Վ Վ Վ Պ Ւ Ր Ա ն .

ա յ ս տ ի տ ո ս ի ն ն ե ր ք ի ն կ ը ն ե ր կ ա յ ա ց ո ւ ի ն բ ա ն ա-  
խ օ ս ո ւ թ ի ւ ն ն ե ր՝ Հ ա յ ո ց պ ա տ մ ո ւ թ ե ա ն , Մ տ ա ե ն ա-  
զ ր ո ւ թ ե ա ն , Լ ե զ ո ւ ա բ ա ն ո ւ թ ե ա ն , Ծ ի ս ա դ ի տ ո ւ թ ե ա ն  
Գ ե ղ ա ր ո ւ ե ս տ ն ե ր ո ւ վ ր ա յ , ա յ լ ն .

Հ ա յ կ ա կ ա ն ձ ե մ ս ր ա ն ի կ ը յ ա ջ ո ր դ է բ ա-  
ժ ի ն մ ը՝ ն ո ւ ի ր ե ա լ գ ե ղ ե ց ի կ դ պ ր ո ւ թ ե ա ն ց , ո ւ ր կ ը  
ն ե ր կ ա յ ա ց ո ւ ի ն բ ա ն ա ս տ ե ղ ծ ո ւ թ ի ւ ն ն ե ր՝ օ տ ա ր զ ը-  
ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ն ե ր է , ի տ ա լ ա կ ա ն է ն , մ ա ս ն ա ւ ո ր ա-  
պ է ս , ո ր ք ի չ ծ ա ն օ թ է ա զ գ ի ն : Բ ա զ մ ա վ է ւ զ ի « զ ը-  
ր ա կ ա ն » բ ա ժ ի ն ն ո ւ ն ի վ է պ ե ր , ն ո լ ր ա վ է պ ե ր , —  
թ ա տ ե ր գ ո ւ թ ի ւ ն ն ե ր , և ա յ լ ն :

Վ ե ր ջ ա պ է ս Բ ա զ մ ա վ է պ ի տ ի ո ւ ն ե ն ա յ ն ա հ ի  
հ ա մ ա զ գ ա յ ի ն Գ ի տ ո ւ թ ե ա ն ց ո ւ Գ ի ւ ո ւ ե ր ո ւ ն ո ւ ի-  
ր ե ա լ բ ա ժ ի ն մ ը , ո ր ո ւ ն պ ի տ ի ա շ խ ա տ ա կ յ ի ն ե ւ-  
ր ո պ ա յ ի հ ա մ ա լ ս ա ր ա ն ն ե ր է ն վ կ ա յ ե ա լ հ ա յ բ ժ ի շ կ-  
ն ե ր և մ ա ս ն ա գ է տ ն ե ր : Տ ա ր ե կ ա ն գ ի ն ն է ֆ . 10:

Դ ի մ ե լ R é d a c t i o n de la Revue « B a z m a v e p ». St.  
L a z a r e — V e n i s e .

ОТКРЫТА ПОДПИСКА  
НА 1907 Г.

На журналъ

# „СОВРЕМЕННАЯ ЖИЗНЬ”

Журналъ выходитъ одинъ разъ въ мѣсяцъ приближайшемъ участіи Бельтова. Редакція считаетъ возможнымъ съ достаточной ясностью кратко выразить цѣль, преслѣдуемую журналомъ: она состоить въ изложеніи и всесторонней разработкѣ теоріи Маркса. Подписка принимается въ главной конторѣ редакціи журнала „Современная Жизнь“: Москва, Неглинная, 4, «Журнальное Дѣло» и во всѣхъ книжныхъ магазинахъ.

Подписная цѣна на годъ—10 руб.;  $\frac{1}{2}$  г.—5 руб.  $\frac{1}{4}$  г.—2 руб. 50 коп. Заграницей на годъ—12 руб. 40 к.  $\frac{1}{2}$  г.—6 руб. 20 к.  $\frac{1}{4}$  г.—3 руб. 10 к.

Отдѣленіе конторы редакціи въ Петербургѣ при книжномъ складѣ Б. О. Соловьевой и Б. Г. Никольской. Петербургъ, Троицкая, 3.

Продолжается подписка на послѣднюю четверть 1906 г.

Продолжается подписка  
на газету

# БАКУ

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой въ Баку: на годъ 7., р., 11 м. 6 р. 50 к., 10 м. 6 р., 9 м. 5. р. 50 к., 8 м. 5 р., 7 м. 4 р. 50 к., 6 м. 4 р., 5 м. 3 р. 50 к., 4. 3 р., 3 м., 2 р. 50 к., 2 м. 1 р. 50 к., 1 м. 1 р. Съ пересылкой въ другіе города: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р., 50 к., 10 м. 7 р., 9 м., 6 р. 50 к., 8 м. 6 р. 7 м. 5 р. 50 к., 6 м.

За гравюру: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписываться можно на всѣ сроки, но не піаще какъ съ первого числа каждого мѣсяца.

За персыль адреса просить высыпать 5 семикопеечныхъ марокъ.

Отдѣльные публикации „Баку“ продаются въ конторѣ газеты и у разносолниковъ по 5 к.

ԹԵՐԱԿԻՆԻ է ԲԵՇԵՆՈՐԴՅՈՒԹԻՒՆ

1907 թ.

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

(Նոր շրջան՝ ՎՊ տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ռ Դ Ա Գ Ի Ն Բ

Առաջակային	տարեկան	10 լ.	(32 գ.)
Կլոս տարին 5 ամսական	5 քառկանգ	12 լ.	(18 գ.)
ամսական	90 կ.	ամսական	(3 գ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մասմաս(5—5 լ.), եթե դուք վճարու լինում է մայիսին։ Տարրով զգացնելու ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիտացիների և բանուորների համար բաժանորդագինն է (Մուրճ)։ Տ ըստ լի տարեկան, որ կարելի է վճարել մասմաս(4-4)լ.։

Համար 6. Տիֆլիս «Մուրճ» Tiflis «Mourtch»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՈՒՄ է

ԹԻՖԼԻՍԱՆԴՐԻ և Ամբաղբաստանը (Ճայթափառեան փողոց, տ. № 12)

«Փուտենբերդ», «Կենտրոնական», «Նովա Բնի» (Գողովինովիլի), արք. Բատոնի գիմաց) պրախանութներում և «Փարս» Կիոսկում (երկուն, ճրադ.) և այլուրիան այլ տեղերից պէտք է դիմու Տիֆլիս,

въ редакцио журнала «МУРЧЪ».

Առաջակային Տիֆլիս, Rédaction de la revue «MOURTOH».

ՅԱՅԹԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵՈՒՄ է ամեն լիգուով։ Յայտարարութիւնների համար վճարում են։ 1 երես բանող յայտարարութեան համար 10 լ., 1/2 եր., 5., 1/4 եր.—2 լ., տողակաղ (կորպ.)—40 կ.։

Խմբագիր՝ Եվհոն ՍԱՐԳՍՅԱՆ

# ԲՐԱՆԴ

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՈԵՄԱ

Հինգ գործողութեամբ

ՀԵՆՐԻԿ Ի ԲՍԵՆԻ

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Յըանդ, նրա մայրը, Եյնար նկարիչ,  
Ազնէս, Փոխտ, Բժիշկ, Պրոբստ, Ռիս-  
տեր, Դալրոցական ուսուցիչ, Հերդ, Գիւ-  
ղացի, Նրա որդին՝ պատանի, Երկրորդ  
զիւղացի, Կին, Երկրորդ կին, Թրագէտ:

Հոգեւորականութիւնն, պաշտօնեաներ, Ժողովուրդ, տղամար-  
դիկ, կանայք, երեխաներ, փորձիչը անապատում. անտեսա-  
նելի երգող խումբ, ծայն:

Գործողութիւնը կատարւում է XIX դարի 60-ական թաւականներում,  
մասամբ Նորվեգիայի արեւմտիան ծովափի՝ Ֆիորդի մօտ զիտեղուած մի  
զիւղում, մասամբ նրա չըշակացրում:



## ԱՐԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Զիւնապատ լիոնաղաշտեր. թահնձր մշուշով ծածկուած. մոայլ  
հղանակ. վաղորդեան կիսաղջամուզի: Քրանդը ամբողջապէս  
ուեպգեստ, փայտը ձեռին և մախաղը մէջքին, վեր է բարձ-  
րանում արևմտեան ուղղութեամբ. Գիւղացին իր պատանի որդու  
հիւն հետեւում է նրան որոշ հեռաւորութեան վրայ:

ԳԻՒՂԱՅՑԻՆ. (Բրանդի յնտեւից). Մնցորդ, մի շոտ-  
պիր... Ռուր հեռացար:

ԲՐԱՆԴԻ. Ես այսաեղ եմ:

ԳԻՒՂԱՅՑԻՆ. Կր մոլորուես: Մշուշը թահնձրացաւ,  
և երկու քայլի վրայ ոչինչ չի երկում...

ՈՐԴԻՆ. Այսաեղ ճեղքուածքներ են:

ԳԻՒՂԱՅՑԻՆ. Այսաեղ ճեղքուածքներ են, — լոնեմ  
ես դու:

ԲՐԱՆԴԻ. Եւ մենք կորցրել ենք բոլոր հետքերը:

ԳԻՒՂԱՅՑԻՆ. (Ճշալով). Կանգնիր: Տէրն աղատի...  
Մենք սասցարանի վրայ ենք ընկեր. Այդաւեղ փխրուն է  
սասցցր: Դու այդպէս ամուր մի քայլիր:

ԲՐԱՆԴԻ. (Ականջ դնելով). Ես լոււմ եմ ջրվէժր...

ԳԻՒՂԱՅՑԻՆ. Վատակը սաոցի կեղեի տակ իր համար  
հուն է բացել: Այսաեղ խոր է. մինչև յատակը  
չես էլ համնիլ: Կր ընկնես չես էլ պրծնիլ:

ԲՐԱՆԴԻ. Դու լսել ես որ իօմ ճանապարհը տանում  
է գէոլի այն տեղ, յառաջ:

ԳԻՒՂԱՅՑԻՆ. Իսկ եթէ չկարողանաս յաղթել զը-  
ժուարութիւնը: Նայիր, դու բայլում ես փխրուն կեղե-  
իւզրայով: Կանգնիր: Միթէ կեանքը թանգ չէ քեզ-  
համար:

ԲՐԱՅՆԻ. Ես—առաքուած եմ. Ես չեմ կարող չլսել  
ինձ առաքողին:

ԳԻՒՂԱՅԻՆ. Իսկ ով է նու:

ԲՐԱՅՆԻ. Ասուուած:

ԳԻՒՂԱՅԻՆ. Իսկ դու ինքդ ով ես:

ԲՐԱՅՆԻ. Պաստոր:

ԳԻՒՂԱՅՅ. Պաստոր չլինի, այլ նոյնիսկ ովոբառը  
կամ ինքը եպիսկոպոսը, տակից ողողած սառցակեղիի  
վրայ քայլելով քեզ կը կործանես, արեւ չի ծագիլ:  
(Զգուշութեամբ մասնալով նրան): Լսիր, ինչքան հ  
խելօք, զիտունլինես, բայց չես կարող յաղթել այն ինչ  
ուժից վեր է, Ցես գառ: Մի յամառիր: Ախր մենք  
երկու գլուխ չունենք խօս: Եթէ այս մէկը կորցնենք,  
ուրիշը մրտեղից վերցնենք, մինչի մերձաւոր գիւղը մօտ  
նօթ վերստ է, իսկ մշուշը այնքան թանձր է որ ոչինչ  
չի երիւմ:

ԲՐԱՅՆԻ. Փոխարէնը թանձր մշուշը չի թողնի որ  
մոլորդ կըակը մեզ գէպի սիստ ճանապարհ թարթի:

ԳԻՒՂԱՅՅ. Իսկ այստեղ մեր շուրջ վտանգաւոր  
առուած լներ են:

ԲՐԱՅՆԻ. Մենք կ'անցնենք նրանց վրայով:

ԳԻՒՂԱՅՅ. Զրի վրայով ես քայլելու, ի՞նչ է: Զա-  
փից անց ես արդէն վստահոնում վրադ. տես չես կա-  
ռող խօսքդ կատարել:

ԲՐԱՅՆԻ. Բայց Մէկը ապացուցեց, որ հաւատով  
կարելի է ծովի երեսով էլ, ինչպէս ցամաքի վրայով,  
անցնել:

ԳԻՒՂԱՅՅ. Էհ, հին ժամանակներում քիչ հրաշքներ  
են եղել. վարձիր մեր ժամանակներում նոյնը—և ջրի  
տակը կը գնաս:

ԲՐԱՅՆԻ. Մնաս բարնվ (ուզում է շարունակել ժա-  
նապարհը):

ԳԻՒՂԱՅՅ. Դէպի մահ ես գնում!

ԲՐԱՅՆԻ. Եթէ Ասուուած ուղում է ինձ մահ ու-  
զաքակել—ողջունում եմ այն!

**ԳԻՒՂԱՅ.** (Կամաց). ԽԵՆԹԱՑԵԼ Է, ԻՆՉ Է:

**ԲՐԴԻՆ.** (Համարեա արտասուալից): Հայր, վերադասնանք: ԵՐԱՌՈՒՄ Է որ անձրև ու վատ եղանակ է լինելու:

**ԲՐԱՆԴ.** (Կանգ առնելով եւ կըկին մօտենալով նորանց). Լսիր, դու ինձ ասացիր թէ աղջիկդ այնտեղից՝ ֆիօրդից բեզ լուր է ուղարկել թէ իր մահը մօտ է. բայց խաղաղութեամբ չի կարող հոգին տալ, վերջին անգամ չտեսնուելով քեզ հետ:

**ԳԻՒՂԱՅ.** Սուրբ ճշմարտութիւն է:

**ԲՐԱՆԴ.** Եւ մինչի մյս օրն է ժամանակ տուել:

**ԳԻՒՂԱՅ.** Այո, այո:

**ԲՐԱՆԴ.** Ոչ աւելի ուշ:

**ԳԻՒՂԱՅ.** Ոչ:

**ԲՐԱՆԴ.** Ուրեմն, շտապիր դէպի նրան!

**ԳԻՒՂԱՅ.** Իսկ եթէ անկարող եմ?.. Վերադասնանք!

**ԲՐԱՆԴ.** (Ծհտակի նայելով նրա վրայ): Որպէսպի նա հանդի խաղաղութեամբ՝ դու կը տայիր հարիւր դալեր?

**ԳԻՒՂԱՅ.** Կը տայի!

**ԲՐԱՆԴ.** Իսկ երկու հարիւր ?

**ԳԻՒՂԱՅ.** Տունս տեղս կը տայի, միայն թէ նա իր աչքերը փակեր խաղաղութեամբ!

**ԲՐԱՆԴ.** Իսկ կեանքդ?

**ԳԻՒՂԱՅ.** Իսկ կեանքս?... ի՞ն, բան ասացիր!...

**ԲՐԱՆԴ.** Դէ, պատսախանիր!

**ԳԻՒՂԱՅ.** (Քորելով ականջի յետեւը), Օհ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, ախր ամեն բանին աշխարհումս չափ ու սահման կայ: Մի մօռացիր որ կին ունեմ, երեխաներ ունեմ...

**ԲՐԱՆԴ.** Եւ նա, Որի անունը տուիր, նմանապէս մայր ունէր:

**ԳԻՒՂԱՅ.** Դէ էդ էլ հին ժամանակներումն է պատահել, երբ քիչ հրաշքներ չեին կատարւում. իսկ այժմ այդպիսի հրաշքների մասին չի լսւում:

**ԲՐԱՆԴ.** Վերադարձիր! Դու թէն ապրում ես, մե-

ուստի ես: Դու չես ճանաչում Աստծուն, և նա քեզ չի  
ճանաչում:

ԳԻՒՂԱՅ. Շատ չես խիստ!

ՈՐԴԻՆ. (Քաշում է հօրը). Գնանք տուն!

ԳԻՒՂԱՅ. Գնանք, միայն պէտք է որ նա էլ դայ  
մեզ հետ:

ԲՐԱՆԴ. Եւ ես?

ԳԻՒՂԱՅ. Թէ չէ, եթէ Աստաւած մի արասցէ, դու<sup>1</sup>  
կորչես, և, ինչ որ գժուար է ծածկել, տարածուի թէ  
մենք միասին ենք ուղևորուել, ինձ դատի կ'ենթարկեն:  
Իսկ եթէ կիրճի կամ լճի մէջ գանեն դիակդ՝ այն ժա-  
մանակ իսով ինձ կը շղթայեն:

ԲՐԱՆԴ. Դու այն ժամանակ կը տուժես Աստաւածոյ  
դործի համար:

ԳԻՒՂԱՅ. Եռ դործ չունիմ ոչ նրա, ոչ էլ քո բա-  
ների հետ: Իմ հոգսերն էլ ինձ բաւական են: Դէ եկ  
միասին վերադառնանք!

ԲՐԱՆԴ. Մնառ բարով! (Հեռու լսում է իուլ որ-  
դուսդոց):

ՈՐԴԻՆ. (Ծալով). Փլում է:

ԲՐԱՆԴ. (Գիտացուն որ լոնել է նրա օձիքից):

Թողիր:

ԳԻՒՂԱՅ. Զի կարիլի!

ԲՐԱՆԴ. Թողիր:

ՈՐԴԻՆ. Գնանք:

ԳԻՒՂԱՅ. (Մաքսութով բրանդի հետ): Ախ, գրողը  
ինձ տանի!..

ԲՐԱՆԴ. (Դուրս ալրծնելով եւ ծիւնի վրայ զլորե-  
յով նրան): Անշուշտ վերջ ի վերջոյ կը տանի! (Քնում է):

ԳԻՒՂԱՅ. (Նստած ծիւնի վրայ եւ ուսերն տրորե-  
յով). Օհ, օխ. յամառ և ինչպէս ուժեղ!.. Եւ այդ նա  
անուանում է Աստաւածոյ դործ! (Տեղից բարձրանալով  
կանչում է) Լսիր:

ՈՐԴԻՆ. Նա արդէն վերհում է:

ԳԻՒՂԱՅ. Հա տեսնում եմ հրէն (էլի կանչում է).

լիր ինձ! Զես յիշում որտեղ էր որ մենք կորցրինք  
մեր ճանապարհը? Ո՞րտեղից է որ մենք շեղուեցինք:  
ԲՐԱՆԴ. (Մառախուղի միջից). քեզ չե հարկաւոր  
խաչը ճանապարհի բաժանման տեղում.—գու գնում ես  
բանուկ ճանապարհով:

ԳԻՒՂԱՅ. Ախ, Աստուած տայ քո ասածդ լինի?  
Այն ժամանակ երեկոյեան մօտ մենք տանը կը լինենք!  
(որդու հետ դիմում է դէպի արեւելք):

ԲՐԱՆԴ. (Ասիի բարձրից է երևաւմ եւ ականջ է  
լինում, շուր գալով դէպի այն կողմը, ուր զնացին նրա  
ուղեկիցները): Տուն են գնում.—գու, ողորմելի ըստ-  
րուկ. Ո՞հ, եթէ քո կրծքում բղիսէր կամքի աղբիւրը, և  
միայն ոյժդ պակասէր, ես կը կարճէի քո ճանապար-  
հը, ուրախութեամբ կը տանէի քեզ սեփական խօնջած  
ուսերի վրայ, կը քայլէի վիրաւոր ուաքերով թեթե ու  
զուարթ! Սակայն օգնելնրան ովչէ էլ ուզում նոյնիսկ այն,  
ինչ որ անկարող է, հարկաւոր չէ:

(Գնում է առաջ)

Հըմ... կեանք! Զարմանալի է ինչպէս բոլորը գող-  
դողում են կեանքի համար: Առաջին պատահած հաշ-  
մանդամը այնպիսի կշիռք է տալիս կեանքին, որ կար-  
ծես աշխաբհի փրկութիւնը և մարդկանց հոգիների բռ-  
ժումը դրուած է նրա ապիկար ուսերի վրայ: Կրանք  
պատրաստ են զոհել, միայն ոչ կեանքը, ոչ. նա բոլո-  
րից թանգ է:

(Կարծենս մի ըան յիշելով և մալուալով)

Երկու միտք էին մանկութեանս ժամանակ ինձ զբա-  
ղեցնում, անվերջ ծիծաղցնում. մի բան որի համար  
պառաւ դաստիարակուհիս պինդ պատժում էր ինձ:—  
Յանկարծ պատկերացնում էի ինձ խաւարից վախեցող  
բուխն կամ ջրից վախեցող ձկան, և սկսում հոհուալ: Ես  
վանում էին ինձնից այդ մաքերը, բայց իզո՞ւր: Սակայն  
իսկապէս ինչն էր ծիծաղս յարուցանում: Ես աղօս գի-  
տակցում էի անհաշտելի տարբերութիւնը այն բանի մէջ՝

թէ ինչպէս է և ինչպէս ովկար է լինէր, զանազանութիւնը բեռը կրելու պարագի և այն կրելու անքնդունակութեան մէջ։ Եւ համարեա թէ իւրաքանչիւրը իմ հայրենակիցներից—սոսով, թէ հիւանդ—յիշած ձկան կամ բուի նման են։ Խորխորատում աշխատել և ապրել խաւարի մէջ նրա ճակատագիրն է, և նէնց այդ է նրան վախեցնում։ Խփւում է ան ու գողի մէջ եզերքին և վախենում իր մութ բանտից, աղերսում օդի և պայծառ արեի մասին! (Կանգ է առնու, կարծես մի լանից շանթահար, եւ ականչ լուս):

Կարծես երդ լինի!.. Այն, ծիծաղ և երգ։ Ահա «ուրա»... գարձեալ, գարձեալ... հինգ անգամ։ Արեգակը ելնում է, և մշուշը նոսրանում։ Ես հայեացքովս կրկն ըմբռնում եմ հեռուն։ Ահա լիուան կողերի վրայ կանդնած է մի ուրախ խումբ, վաղորդեան ճառագայթների վտյլի մէջ։ Մնաս բարե են ասում իրար և ձեռներ սեղմում... Թերեցին գէպի տրեելք բոլոր մնացածները, իսկ երկուսը իրանց ճանապարհը բռնել են գէպի արեմուտք։ Իրար ուղարկում են վերջին հրաժեշտը ձեռներով, թաշկինակներով և դատակներով...»

(Արեգակը քանի գնում է ամելի տժով և թափանցում մշուշի միջով։ Քանի երկար կանգնած է, աշխատելով ջոկել ննուու երկու ծամբորդներին):

Այդ երկուսից կարծես ճառագայթներ լինեն արձակում։ Նրանց կարծես ինքը մշուշն է ճանապարհ տալիս, գորգի նման նրանց ոտերի տակ են փուռում ցախինին և դիմացը ժպտում է երկինքը։ Երկի քոյր և եղբայր են։ Զեռք ձեռքի տուած ընթանում են կարծես պարի մէջ։ Աղջիկը հազիւ է գիպչում գետնին, իսկ միւսը ճարպիկ է և ճկուն։ Աղջիկը թուաւ յանկարծ մի կողմ... նրա յետից երիտասարդը... հասաւ, բըռնեց... Ոչ, ձեռքից դուրս պրծաւ։ Վազգում են, խաղալով։ հնչում է ծիծաղն ինչպէս երգ։

(Եյնար եւ Ազնէս, ծանապարհորդական թեթեւ հազուսով, երկուսն էլ հետալով, տաքացած, դուրս են վա-

զրւմ բաց տեղում շարաճճիօթէն խաղալով։ Մշուշը փառաւ-  
տուել է։ Հեռնելում պարզ արեւ առաօտ է կանգնած։

**ԷՅՆԱՐ.** Ագնէս, իմ քնքոյշ գողարիկ թիթեռնիկ,  
ես տեհնչում եմ քեզ բոնել խաղալով. ես քեզ կը զրա-  
ւեմ ճարալիկ շինած ցանցի մէջ և երգելով հանգոյց-  
ներ կը կազմեմ քեզ համար։

**ԱԳՆԵՍ.** (Թոշկոտելով դէմք զարձրած դէպի նա  
եւ շժողնելով իրան ըռենել) Ես՝ թիթեռնիկ եմ, ուրեմն թող  
ինձ թռչկոտել, ծաղիկների մեղրահիւթով հազենալ. սի-  
րում ես դու, չարաճճիկ տղայ, խաղալ—դէ վաղիք յետե-  
ւիցս, չաշխատելով բոնել։

**ԷՅՆԱՐ.** Ագնէս, իմ քնքոյշ գողարիկ թիթեռնիկ,  
անտեսանելի ցանց է քեզ համար հիւսուած, եղեր զե-  
փիւոից աւելի կայտառ, դարձեալ գերի կը նկնես դու  
ինձ մօտ։

**ԱԳՆԵՍ.** Ես թիթեռնիկ եմ, դէ թող որ ես ծաղկից  
ծաղիկ թռչկոտեմ ցօղագարդ գաշտերում, իսկ եթէ ինձ  
թարթում ես ցանցիկ մէջ—ոսկեղոյն թերիս չկպչես։

**ԷՅՆԱՐ.** Զգուշութեամբ, թիթեռնիկս, ձեռքիս վրայ  
կը բարձրացնեմ սրտիս մօտ և այստեղ կը փակեմ. այս-  
տեղ ամբողջ կեանքդ կը խաղաս, հողիս, ամենաքաղցր  
խաղերով խնդալով։

(Եղկուսն էլ իրանք այդ չնկատելով, մօտենում են  
մի դիք պատաստածքի եւ կանգնում են համարեա ու-  
ղիղ անդունդի շրթունքնեն)։

**ԲՐԱՆԴ** (Բղասում է). Է՞յ, զգնյշ։ Անգուդից մի քայլ  
էք հեռու!»

**ԷՅՆԱՐ.** Ո՞րտեղից է ձիչը։

**ԱԳՆԵՍ.** (Ծոյց տալով դէպի վեր) Նայիր այնտեղ։

**ԲՐԱՆԴ.** Հեռացէք, քանի ուշ չէ։ Դուք ձիւնի  
հիւսքի վրայ էք, անդունդի գլխին։

**ԷՅՆԱՐ.** (Դրկելով Ագնէսին, ծիծաղում է) մեզ հա-  
մար հարկ չկայ վախենալ։

**ԱԳՆԵՍ.** Մեր առջև դեռ ամբողջ կեանքն է—խինդ  
ու ծիծաղի համար!»

ԷՅՆԱՐ. Արեգակից լուսաւորուած ճանապարհն է մեր առջև, նրա վերջը հարիւր տարուց յետոյ է, ոչ տուած:

ԲՐԱՆԴ. Ուրեմն միայն այն ժամանակ դուք անդունդը կընկնէք:

ԱԳՆԵՍԼ. (Շարժելով շղարշը): Օ, ոչ... այն ժամանակ մենք երկինք վեր կը ուղանանք:

ԷՅՆԱՐ. Նախ երջանկութեան, հեշտութեան դար, զիշերից զիշեր հարսանեաց ճրագներով, հարիւր տարի սիրային խաղեր...

ԲՐԱՆԴ. Իսկ յետոյ:

ԷՅՆԱՐ. Յետոյ—կրկնն տուն, դէպ երկնային ապահանքը:

ԲՐԱՆԴ. Ուրեմն, այնտեղից էք դուք:

ԷՅՆԱՐ. Թէ չէ որտեղից:

ԱԳՆԵՍԼ. Այս, ի հարկ; այժմ մենք գտիս ենք ահա այն հովտից, որ արեկլքում է:

ԲՐԱՆԴ. Ես կարծում եմ ձեզ տեսայ լեռնային եւ լիէջի մէջքին:

ԷՅՆԱՐ. Մենք այն տեղ այս բոպէիս հրաժեշտ էլինք տալիս մեր բարեկամներին, դրօշմելով զրկախառնութեամբ, պինդ ձեռներ սեղմելով և համբոյլներով մեղ համար այնքան թանգարին յիշողութիւնները:—Իշխէք այստեղ: Ես ձեզ կը պատմեմ թէ ինչպէս հրաշալի է ամեն բան շինել Աստուած—և մեր հրձուանքը կը հասկանաք... Դէ բաւական է կանգնէք այդուեղ ցցուած ինչպէս սառցի սիւն: Հալէք շուտով:—Ահա այդպէս աւելի լաւ էք նախ պէտք է իմանանք—ես նկարիչ եմ. և հենց միայն այդ բանը նրա կողմից այնքան սիրալիր է, որ նա բացաւ իմ երկակայութիւնը և տուաւ ինձ գիւթական ոյժ—մեռած կտաւից կեանք վերաստեղծել, ինչպէս նա ինքը մեռած բոժոժից կեանքի է կոչում թիթեռնիկին!... Իսկ ամենից լաւը այն է, որ նա իբրհ հարսնացու ինձ տուաւ Ագնէսին! Ես հարաւից եմ, հեռուից, քայլում էի իմ ճամբորդական արկղով...

**ԱԳՆԵՍ.** (Ոզեւոցուած): Ինչպէս թագաւոր ուրախ,  
հպարտ և հանդարտ!.. իսկ որքան երդեր զիտէ... Ուղ-  
ղակի անթիւ:

**ԷՅՆԱՐ.** Եւ ահա ես բնկայ հէնց այն զիւղը, ուր  
բժիշկները ուղարկել էին սրան՝ ապրելու, այսաեղ ծծելու  
լեռնային օդ, արեգակի լոյսը, խեժածոր սոճիների ցո-  
ղըն ու բուրմունքը... Իսկ ինձ լեռներ էր ուղարկել  
ինքը Աստուած, մի զաղանի ձայն ինձ անդադար պըն-  
զում էր որ ես ընութեան գեղեցկութիւններ վնասուեմ  
լեռնային գետակների ափերին, սոճիների տակ և ժայ-  
ռերի դազաթներին: Ահա հէնց այնուեղ ես ստեղծե-  
ցի իմ գլուխ գործոցը. արշալոյսի փայլը—որա այտերի  
վրայ, սրա հրաշալի աչքերում—բախտի ցոլը... իմ  
հանդէպ թռչող ժպիտը!..

**ԱԳՆԵՍ.** Բայց ինքզ չեիր զիտակցում թէ ինչ ես  
անում. կեանքի բաժակից խմում էիր անհոգ, մինչեւ  
որ մի գեղեցիկ օր չարձանացար իմ զիմաց, ոլատրաստ  
վերադարձի!

**ԷՅՆԱՐ.** Միոյն այդ ժամանակ գլխովս անցաւ մի  
միոք—թէ ես մոռացել եմ նրան առաջարկութիւն անել:  
Ուրան: Շուտով առաջարկութիւն արի, խւզյն համա-  
ձայնութիւն ստացայ, և ամեն բան կարգի էր: Մեր  
ծեր բժիշկը այնքան ուրախ էր, որ մեր սլատուին տօ-  
նախմբութիւն կատարեց և մենք երեք օր անցկացրինք  
այնտեղ պարելով և ուրախանալով: Եւ ֆոխտը և լենս-  
մանը, նոյնիսկ ինքը պաստօրը, էլ չեմ ասում տեղա-  
կան ջանիների մասին, բոլորն էլ եկան այդ տօնին:  
Դեռ զիշերը մենք ճանապարհ ընկանաք. բայց տօնախմբ-  
բութիւնը դրանով չվերջացաւ. բոլորը խմբով եկան  
մեզ ճանապարհ զցելու դրօշակներով և երդերով...

**ԱԳՆԵՍ.** Եւ հովիառվ մենք ոչ թէ բայցլում էինք—այլ  
զոյզ զոյզ կամ խմբովին պարելով...

**ԷՅՆԱՐ.** Արձաթէ դաւաթներից մենք զինի էինք  
խմում...

ԱԳՆԵՍ. Իսկ դիշերուայ լուսթեան մէջ հնչում  
էին երգերը...

ԷՅՆԱՐ. Հիւսիսից դէպ հովիտը վար սողացող մշուշը  
հլութեամբ մեզ զիջում էր ճանապարհը:

ԲՐԱՆԴ. Իսկ այժմ ձեր ճանապարհը դէպի ուր է:  
ԷՅՆԱՐ. Ուղիղ մինչև քաղաքը...

ԱԳՆԵՍ... Ուր ես եմ ապրում:

ԷՅՆԱՐ. Նախ մենք պէտք է անցնենք ահա այն  
զագոթները, յետոյ իջնենք դէպի ֆիօրդը, ուր մեզ  
սպասում է եղերի նժոյգը իր ալեծածան ծխագոյն բաշով.  
ամբողջ թափով նա մեզ կը ոլացնի հարսանիք: Իսկ  
այնտեղից—ինչպէս կարապներ մեր առաջին թռիչըը  
կուղենք դէպի օրհնած հարաւը:

ԲՐԱՆԴ. Իսկ այնաեղ...

ԷՅՆԱՐ. Այնտեղ մեզ սպասում է երկուսով միասին  
մի կեանք, հրաշալի երջանկութիւնը, ինչպէս հեքիաթ,  
ինչպէս երազանքը և մի վեհ ցնորք... Այս առաւօտ ձիւ-  
ների մէջ, առանց քահանայի խօսքի, մենք նշանուե-  
ցանք անհոգ կեանքի հետ, պսակուեցանք բախտի հետ:

ԲՐԱՆԴ. Իսկ ով ձեզ պսակեց:

ԷՅՆԱՐ. Բարեկամների նոյն խումբը, որ մեզ ճանա-  
ուրարհ էր ձգում: Նա բաժակների գնդանգոցի տակ անիծեց  
յաւիտեան գժբախտութեան ամենափոքր ամսին անգամ,  
որ կարող էր մոայլել մեր հորիզոնը. մեր կենցաղից ա-  
ռաջուց աքսորեց բոլոր չարագուշակ խօսքերը և մեզ  
օրհնեց ուրախ կեանքի համար:

ԲՐԱՆԴ. (ուզում է զնայ): Մնաք բարով:

ԷՅՆԱՐ. (Զարմացած յառաւ է դէպի նա): Կանգ-  
նէք... գուք կարծես ծանօթ էք ինձ...

ԲՐԱՆԴ. (Սառնութեամբ): Ես ձեզ օտար եմ:

ԷՅՆԱՐ. Բայց յիշում եմ, ինչ որ մի տեղ մենք  
հանգիպել ենք իրար, ընտանիքում թէ դպրոցում:

ԲՐԱՆԴ. Մենք դպրոցական ընկերներ եղել ենք,  
այս: Այս ժամանակ ես տղայ էի, իսկ այժմ տղա-  
մարդ եմ:

ԷՅՑՆԱՐ. ՄԵՐԵԿ... (յանկարծ ձշում է): Դու Բրանդ-  
գլն ես: Այս, այս, նա ինքն է: Այժմ ճանաչեցի:

ԲՐԱՆԴԻ. Իսկ ես քեզ վաղոց:

ԷՅՑՆԱՐ. Ողջոյն քեզ ամբողջ հոգուց, ընկեր: Նա-  
յիր վրաս... Դէ իհարկէ էլ նոյն տարօրինակն է, որ  
զոհ իր հասարակութեամբ խոյս էր տալիս մեր ընկերա-  
կան խաղերից:

ԲՐԱՆԴԻ. Ես ինձ օտար էի զգում ձեր մէջ: Իսկ քեզ  
ես սիրում էի, յիշում եմ. թէն դուք բոլորդ հարաւա-  
յին գաւառներից եկածներդ այլ բնաւորութեան էիք քան  
ես, որ ծնուել եմ ֆիօրդի մօտ, անանտառ մօայլ ժայռերի  
ստուերում:

ԷՅՑՆԱՐ. Հա այստեղ մի ինչ որ տեղում քո հայ-  
րենի ծուխն է:

ԲՐԱՆԴԻ. Նրա միջով է անցնում իմ ճանապարհը:

ԷՅՑՆԱՐ. Հեռու:

ԲՐԱՆԴԻ. Այս, հեռու... Այն տան մօտով, ուր ես  
լոյս աշխարհ եկայ:

ԷՅՑՆԱՐ. Դու պատառ ես:

ԲՐԱՆԴԻ. (Ժալտալով) Դեռ ոչ. միայն կապելլան:  
Իսչպէս նապաստակը քնում է կամ մէկ կամ միւս սո-  
ճիի տակ, այնպէս և ես—այսօր այստեղ, իսկ վաղը  
այնտեղ:

ԷՅՑՆԱՐ. Իսկ ո՞րտեղ է քո թափառութերի վախ-  
ճանը:

ԲՐԱՆԴԻ. (Աջակ եւ աժուր). Մի հարցնիր:

ԷՅՑՆԱՐ. Բայց ինչու:

ԲՐԱՆԴԻ. (Փոխելով ձայնի ելեւէջը). Սակայն ինչ  
ծածկեմ, այն նաւը որ ձեզ է սպառում, նա ինձ ես կը  
տանի այս վայրից:

ԷՅՑՆԱՐ. Մեր հարսանեաց նմուշ: Լսում ես, Ագնէս,  
մենք Բրանդի հետ ուղեկիցներ ենք:

ԲՐԱՆԴԻ. Սակայն չէ որ ես զնում եմ թաղման:

ԱԳՆԵՍ. Իսկ ով է մեռել: Ում ես զնում թաղե-  
լու:

ԲԲՍՆԴ. Ասառ ծուն, որին գու քոնն էիր անուանում:

ԱԳՆԵՍ. (Յետ քաշութելով). Գնանք...

ԷՅՆԱՐ. Բայց Բրանդ...?

ԲԲՍՆԴ. Վաղուց ժամանակ է բացարձակօրէն պատահքի մէջ փաթաթել և թաղել երկրի և առօրեայ գործերի ստրուկների աստծուն: Վաղուց ժամանակ է ձեզ հասկանալ, որ նա հարիւր հարիւր տարիների ընթացքում զառամեցաւ:

ԷՅՆԱՐ. Դու հիւանդ ես, Բրանդ:

ԲԲՍՆԴ. Օ, ոչ, ես առողջ եմ և թորմ ինչպէս լեռների սոճիները, ինչպէս վայրի գիհին, բայց մարդկային ցեղը—ահա նա է մեր օրերում հիւանդ և կարօտքաշկութեան: Դուք բոլորդ միայն ցանկանում էք խաղալ, կատակել, ծիծաղել և հաւատալ, յուսալ, առանց դատողութիւն անելու. ուղում էք մեղքերի և վշտերի ամբողջ ծանրութիւնը զցել Նրա ուսերի վրայ, Ով եկաւ, ինչպէս լսել էք դուք, ձեզ համար չարչարուելու: Նա Բաղմաշարչարը, հագաւ վշեայ պսակ, իսկ ձեզ—մընում է պարել! Պարէք, սակայն—տխուր մի հարց. ուր կը հասցնի ձեզ պարը վերջին ժամում:

ԷՅՆԱՐ. Ա, հասկացայ: Մեզմնում այստեղ սկսել են այդ նոր երգերով տարուել: Ուրեմն, գու սատկանում ես այդ նոր աղանդին, որ ուսուցանում է կեանքը համարել վշտի աշխարհ և ջանում է ամբողջ աշխարհը ստիպել՝ ապաշխարութեան մոխրով ծածկել իր զլուխը:

ԲԲՍՆԴ. Ոչ, ես երգուեալ քարողիչ չեմ, ես այժմ խօսում եմ ոչ իբրև քահանայ,—նոյնիսկ ես չգիտեմ արդեօք ես քրիստոնեայ եմ թէ ոչ, բայց հաստատ գիտեմ, որ ես—մարդ եմ, ես տեսնում եմ չարիքը, երկրի վրայ տիրած ցաւը:

ԷՅՆԱՐ. (Ժակիտով): Ինձ մինչև այժմ չի պատահել լսել որ իբրև թէ մեր բարի հայրենիքը մինէր արդէն չափից դուրս կենսուրախ մի աշխարհ:

ԲԲՍՆԴ. Եւ արդարի, որախութիւնը այստեղ աղ-

բեւրի նման չի խփում։ Եթէ այդպէս լինէր էլի տանեալի կը լինէր։ Եթէ դու արդէն ուրախութեան սարուկ ես—եղիր այդպիսին միշտ, առաւօտից մինչև զիշեր, ամբողջ կեանքգ. մի եղիր մի բան երէկ, այլ բան այսօր, իսկ վաղը, մի ամսից յետոյ՝ երրորդ բան։ Եղիր ինչ ուզում ես, սակայն եղիր կատարելապէս, եղիր ամբողջական, ոչ կիսատպուատ, ոչ կցկտուր։ Վակիսանա, Սիրէն—հասկանալի ամբողջական պտակեր է, մինչդեռ հարբանը—լոկ ծաղրանկար է։ Անցիր երկրով, լսիր մարդկանց, —կիմանաս, որ այստեղ ամեն մեկը սովորել է լինել մի քիչ ամեն ինչ, և այն և այս. լուրջ—տօներին եկեղեցում, պատարպի ժամանակ, յամառ—երբ բանը այնպիսի սովորութիւնների է զալիս, ինչպէս քնից առաջընթրել կուշտ, մեր հայրերի և պապերի նման!—լինել վառվուն հայրենասէր—խրախճանքի ժամանակ, երբ հնչում են երգերը մայրենի ժայռերի մասին կոմ ժայռի նման ամուր մեր մողովըդի մասին, որ չի խմացել սարուկի լուծը և մահակը. լինել յայնասիրտ, առատաձեռն խոստումնիր անելու—դաւաթ զինին ձեռքին բռնած ըովէին և ժաման՝ լրջօրէն քննելիս. կատարել այն, թէ ոչ։ Բայց այս թէ այն իւրաքանչիւրը լինում է միայն մի քիչ. ոչ առաքինութիւնները, ոչ անառակութիւնները նրա ամբողջ «ես»-ը չեն լքնում. նա կոտորակ է թէ մեծ և թէ փոքր, թէ չար և թէ բարի գործերում։ Իսկ ամենից վատը այն է որ կոտորակի որ մասը ուղենաս սղանում է ամբողջ մնացորդը։

**ԷՅՆԱՐ.** Դժուար չէ մարակել, բայց աւելի լաւ կը լինէր լինել աւելի ողորմած։

**ԲՐԱՆԴ.** Գուցէ աւելի լաւ է, սակայն ոչ այնպէս օդտակար։

**ԷՅՆԱՐ.** Ես չեմ ժխտիլ մարդկային մեղսասիրութիւնը, սակայն բացատրիր դու ինձ—ի՞նչ կապ կայ զրա և այն բանի մէջ թէ ժամանակ է թագել նրան, թրին ես իմ Աստուածն եմ անուանում։

**ԲՐԱՆԴ.** Դու նկարիչ ես, դէ նկարիր նրան։

Ես լսել իմ որ դու նրան արդէն նկարել ես, և քո պատկերը շարժել է սրտերը։ Դու նրան ներկայացրել ես իբրև մի ծերուկի, այդպէս չե։

ԷՅՆԱՐ. Այն, բայց ես..

ԲՐԱՆԴ. Ակառ մազերով և արծաթեայ երկայն միրուքնիկ։ Դէմքի վրայ բարեհաճութիւն և խստութիւն, որ ընդունակ է... մանուկներին քշել քնելու? Այն հարցը թէ արդեօք դու նրան հազցրել ես հողամժավիներ թէ չէ—թողնենք, բայց շատ տեղին կը լիներ եթէ արադչի էլ դնէիր գլխին և ակնոցներ՝ քթին։

ԷՅՆԱՐ. (Բարկացած). Ինչ հարկ կայ այդպէս...

ԲՐԱՆԴ. Օ, ես չեմ ծաղրում։ Զէ որ հէնց այդպիսի կերպարանք ունի մեր ժողովրդական աստուածը, մեր հայրերի ու պատերի աստուածը։ Կաթոլիկները Փրկչին մասուկ են գտրձնում. դուք Աստծուն՝ ծերուկ, որ պատրաստ է զաւամութիւնից մանկութեան մէջ ընկնել։ Ինչպէս փոխանորդ Պետրոսի և պատի ձեռքուժ արքայութեան բանալիները գտուի են հասարակ կողաքէք բանալու գործիքներ, նոյնպէս ձեզ մօտ Աստծոյ արքայութիւնը նեղացել է գտուի եկեղեցի։ Հաւատքից, Տիրոջ վարդապետութիւնից դուք բաժանել էք կեանքը և այլիս ոչ ոք չի ուզում քրիստոնեայ լինել։ Տեսականապէս դուք պատում էք քրիստոնէութիւնը, տեսականապէս դուք ձգտում էք կատարելութեան, իսկ ապրում էք ըոլորովին այլ պատուէրներով։ Եւ ձեզ այնպիսի Աստուած է հարկաւոր որ մատերի արանքովնայեր ձեղ գրայ։ Ինչպէս ինքը մարդկային ցեզը, Աստուած էլ որէտք է ծերանար, և նրան կարելի է պատկերացնել ակնոցներով և ճագատ։ Սակայն այդ աստուածը—միայն ձերն է և քոնք, և ոչ իմը! Իմ Աստուածը, փոթորիկ է այնտեղ, ուր քոնք քամի է. իմը անխնայ է, ուր քոնք միայն անտարբեր, և իմը սղորմած է, ուր քոնք՝ միայն բարեհոգի։ Իմ Աստուածը՝ երիտասարդ է. տւելի շուտ մի Հերկուլէս քան զաւամեալ պապիկ։ Իմ Աստուածը — Սինայի գրայ իսրայէլին որոտում էք իբրև որոտ եր-

կընքից, վառւում էր իբրև անշէջ մոլենու թուփ Մովկսի առաջ Քորեք լեռան վրայ, Նաւինի ժամանակ նա արեգակը կամքնեցրեց և հրաշքներ կը գործէր նաև այժմ, եթէ մարդկային ցեղը այնքան բութ և ծոյլ չլինէր:

**ԷՅԱՆԱՐ.** (Քմնձիծաղ): Եւ այժմ պէտք է այդ ցեղը վերաստեղծութիւն:

**ԲՐԱՆԴ.** Այն, այն. ես դրա մէջ նոշնքան եմ համոզուած, որքան նրա մէջ, որ ես աշխարհ եմ ուղարկուած, իբրև բուժիչ, իբրև բժիշկ հիւանդ և մեղաւոր հոգիների համար:

**ԷՅԱՆԱՐ.** Մի հանգցրու վառուած փայտը թէկուզ մխող, քանի ձեռքումդ լավտեր չկայ: Լեզուից մի քշիր հին խօսքերը, սինչև որ նորերը ստեղծել չես կարողացել:

**ԲՐԱՆԴ.** Ես նոր բան չեմ հնարում. ես ուզում եմ հաստատուն դարձնել յաւիտենական ճշմարտութիւնը: Ես չեմ ձգտում բարձրացնել եկեղեցին, հաւատամքները: Ուսնեցել են իրանց առաջին օրը, ուրեմն, երկի, կը տեսնեն և վերջին երեկոն: Իւրաքանչիւր սկիզբ ենթադրում է վերջ: Ամ են բան ինչ ստեղծուած է իր մէջ թակցրած ունի վախճանի սաղմը և իր տեղը կը տայ ապագայ էութեան: Բայց մի բան կայ որ յաւետ գոյութիւն ունի—դա ոգին է, որ գոյութեան առաջին գարնան իսկ ստրկութեան մէջ ընկաւ և կրկին աղստութիւն ստացաւ երբ նա համարձակ անխորտակելի հաւատքի կամուրջ գցեց մարմնից դէպի իր աղբիւրը: Այժմ հոգին մանրացել է, շնորհիւ մարդկութեան հայեցքին Աստուծոյ վրայ: Եւ արդ հարկաւոր է հոգիների կտրտանքներից, հոգու ողորմելի բեկորներից վերաստեղծել նորից մի ամբողջ բան, որպէսզի Ատեղծող Տէրը նրա մէջ ճանաչէր իր ստեղծագործութեան պսակը — երիտասարդ Աղամին:

**ԷՅԱՆԱՐ.** (Հնդհատելով): Մնաս բարո՞վ: Ես տեսնում եմ որ աւելի լաւ է մենք բաժանուենք:

**ԲՐԱՆԴ.** Դուք դէպի արևմուտք, ուրեմն ես կը դիմ դէպ հիւսիս. այս երկու ճանապարհներն էլ

տանում են դէպի ֆիօրդը և երկարութեամբ իրար հաւաք են: Մնաս բարո՞վ:

**ԷՅՆԱՐ.** (Թափահարելով ձեռքը). Եհ, նորից շինիր աշխարհը ինչպէս ուզում ես, ես իմ Աստծուն հաւատարիմ կը մնամ:

**ԲՐԱՆԴ.** Նկարիը նրան անթացուպերի (ԿՈՍՏՅԼ) վրայ յենուած, իսկ ես կը դամ և կը թաղեմ նրան! (իջնում է շաւղով):

**ԷՅՆԱՐ.** (Հոելեայն մի քանի քայլ է անուժ, երբեմն երբեմն նայելով ներքեւ Բլանդի յետնից):

**ԱԳՆԵՍ.** (Մի ռոպէ կանգնած է կարծես մոռացութեան մէջ, յետոյ ցնցում է, երկիրով շորս կողմը ոիտում եւ հարցնում): Միթէ արեղակը արգէն մայր մըտաւ:

**ԷՅՆԱՐ.** Միայն ամպի ետել մտաւ... Ահա նա:

**ԱԳՆԵՍ.** Ինչպէս յանկարծ ցրտեց:

**ԷՅՆԱՐ.** Մեղ վրայ կիրճից փչեց քամին. այժմ մենք պէտք է իջնենք ներքեւ:

**ԱԳՆԵՍ.** Մեր առջեւ առաջ չէր երեսում այսպիսի մռայլ պատ:

**ԷՅՆԱՐ.** Կար, բայց գու այն չէիր նկատում հանաքների և ծիծաղների միջոցին, որ նա ընդհատեց իր ձիչով: Իսկ այժմ թող նա Աստուծոյ հետ գնայ իր դիք կածանով, իսկ մենք կը նորոգենք մեր ուրախ խաղը...

**ԱԳՆԵՍ.** Օ, ոչ այժմ, ես յոգնել եմ...

**ԷՅՆԱՐ.** Լաւ, ես էլ եմ քիչ յոգնել. մանաւանդ զատիվալըն էլ հեշտ չէ, — այստեղ հովտում ողքան դիւրին էր քայլել: Իսկ երբ կիջնենք — փոխարէնը կրկին պարելով և կայտոելով առաջ կը խաղանք: Դու տեսնո՞ւմ ես այստեղ մի կապտագոյն շերտ: Արեի լոյսի տակ նա մերթ փայլում է, մերթ կնճռոտում, մերթ արծաթի նման ցոլում, մերթ սաթի նման ոսկէնուռ պապղում: Այդ ծովն է: Նկատնում ես ծուխը, որ դանդաղօրէն սողում է եզերքի երկայնութեամբ: Իսկ սկ կէտք որ ծուռում է հրուանդանի շուրջ: Այդ նաևն է,

մեր հարսանեաց նուը: Այժմ նա բռնել է ֆիորդի ուղղութեամբ, իսկ երեկոյեան ֆիօրդից՝ ծովը մեզ կը տանի երկուսիս:—Ազնէս, նկատեցի՞ր դու ինչպէս հրաշալի է այնտեղ միացել ծովը երկնքի հետ:

**ԱԳՆԵՍ.** (Ցըտած նայելով դէպի տարածովինը):  
Այն, այս... իսկ դու նկատեցիր...

**ԷՅՆԱՐ.** Ի՞նչ:

**ԱԳՆԵՍ.** (Նըա վրայ չնայելով, յափշտակուած ջեւմեռանլութեամբ): Երբ նա խօսում էր... կարծես վիճանում—մեծանում էր!

(Սկսում է իշնել լեռից: Էյնարը նըա յետելից).

Ժայռոտ պատի երկայնութեամբ լիոնալին շուիդ, աջ՝ անգունդ, առջեռմ և յետելից երեռմ են աւելի ևս բարձր լիոնային դադախներ ձիւմածածկ:

**ԲՐԱՆԴ.** (Իշնելով շատով, կանգնում է մի ցցուածքի վրայ եւ նայում ներկել): Նորից ճանաչում եմ ես ծննդեան վայրերս. մանկութիւնից ինձ բոլորը այստեղ ծանօթ է. իւրաքանչիւր բլրակ, և գառիվայր, և կախուած ժայռ, իւրաքանչիւր տնակ և թումբ, թխանիների խմբերը և բարդին առուակի մօա, հին մութ եկեղեցին... միայն թւում է թէ ամեն բան կարծես աւելի անգոյն և մանր է գտուել. կարծես աւելի ծանր են կախկառուել ձիւնի գդակները պատուածքներից, աւելի ևս նեղացնելով երկնքի այն շերտը որ այնտեղ հովառում երեռմ էր, պակասեցնելով նրա մէջ լոյն և ազատ տարածութիւնը: (Նայում է ցցուածքի վրայ եւ հայեացք ձգում չեռան): Ֆիօրդը: Միթէ նա միշտ այդպէս նեղ էր և խղճուկ:—Այնտեղ անձրիում է շեշտակի շերտով... թեթև նաւակը պարզելով առագաստները ոլանում է թռչունի պէս. նաւահամնդիտը և մոկոյիները ապաստան են գտել մուսյլ կախկիուած ժայռի ստուերում, իսկ աւելի հեռուն—կարմիր կտուելով

նը, «այրիի տունը», ուր ես լոյս աշխարհ տեսայ: Յիշողութիւններս պաշարում են խմբով! — Այնտեղ ծավափից քարերի մէջ ես մանկութիւնից թափառում էի — հոգով միայնակ:

Ինձ վրայ ծանրանում է ձնշումը — ծանր բեռը, ստոր ոգու հետ ազգակցութեան բեռը, որ միշտ քաշում է ներքեւ դէպի երկիրը և խեղատում հոգու մէջ երկնային սերմերի ծիլերը: Կարծես մշուշի միջից այժմ ես տեսնում եմ մեծ ծրագրներ, ցնորքներ, որոնց ես երբեմն գուրգուրում էի իմ հոգու մէջ: Արիութիւնը ինձ դաւաճանեց, կամքը թուլացաւ, թառամեց հողիս: Վերադառնալով իմ հայրենի երկիրը ես միայն ինձ չեմ ճանաչում, — կարծես Սամանը լինէի, որ Դալիլայի կրակոտ զրկախտանութիւնների մէջ, մաղերից զրկուած դարթել է խղճուկ, անզօր!... (Կըկին նայում է ներքեւ):

Այդ ինչ շարժում է այնտեղ հովտում: Փողովուրզը — կանայք, երեխաներ, տղամարդիկ — շտապով, խումբ խումբ ինչ որ տեղ են գնում... Նա մերթ ոլոր մոլոր հովտի երկարութեամբ ձգւում է ինչպէս խայտաճամուկ օձ-ժապաւէն, մերթ կորչում է բլուրների ետևում, որպէսզի նորից երեայ աղքատիկ եկեղեցու մօտ: (Վեր է կենում):

Ես ձեզ շեշտակի թափանցելով տեսնում եմ, բութ մարդիկ, դուք — թուլամորթ ոգիներ, դատարկ կուրծքեր! Զեղ տուած «Հայր մեր» աղօթքը դուք զրկեցիք կամքի թեերից և ներշնչանքից և աղօթքից ձեր թոթովանքը Աստուծուն հասցնում է միայն «չորրորդ ինսդիբքը»: Զէ որ այդ բոլոր բարի մարդկանց նշանաբանն է, երկրի, ժողովուրդի պայմանանշանը վաղուց ի վեր: Այդ խնդիրքը դուրս կորզուած ընհանուր կապակցութիւնից, պինդ նրաւած մարդկանց սրտերում, պահպանուում է, ինչպէս մի բեկոր, իբրև վաղուց ջախչախուած ամբողջական հաւատքից մի տաշեղ!... Հեռու-շտապով այս խեղդուկ վոսից... Այնտեղ օգլ հեղձուցիչ է, ինչպէս հողի տակ փորած

նեղանցքում։ Նրա վրայից չի անցնիլ թարմ քամին ևոչ  
մի գրօշ այնտեղ չի փողփողիլ։

(Ուղում է զնայ, յանկարծ վերեւից գլուխում է զանի-  
վայրով նրա ոտերի տակ մի քար։)

Էյ, ով է այնտեղից քարեր շպրտում։

ՀԵՐԴԻ. (Մօտ տասնեւհինգ տարեկան աղջիկ վար-  
զում է սարի կոհակներով, զոգնոցը լիք քարերով):  
ՃՀԱԳԲԵՐԻ. Ես դիպայ։ (Մ'ի բար էլ շպրտելով):

ԲՐԱՆԴԻ. Հերիք է չարութիւն արիր։

ՀԵՐԴԻ. Ահա, ահա նստած է և չի էլ վախում, ճռ-  
ճռում է ծռուած ճիւղի վրայ! (Մ'ի բար էլ է զցում եւ  
կլզում): Թռչում է... ահագին, զարհուրելի, ինձ վրայ!  
Օյ, օյ! Վրկեցէք, կտցահարելով կը սպանի։

ԲՐԱՆԴԻ. ՏԵՐ Աստուած... .

ՀԵՐԴԻ. Սսս...Ո՞վ ես դու։ Կանգնիր, մի շարժուկր-  
թոշնում է։

ԲՐԱՆԴԻ. Ո՞վ, Է։

ՀԵՐԴԻ. Միթէ չտեսար բազէին։

ԲՐԱՆԴԻ. Ո՞ւր։ Այստեղ։ Ոչ, չտեսայ։

ՀԵՐԴԻ. Ահագին, զզուելի։ Ճակտին փետուրների փունջ,  
չար աչքեր, շուրջը զեղին-կարմիր շրջանակներն վ։

ՆԲԱՆԴԻ. Ո՞ւր ես գնում դու։

ՀԵՐԴԻ. Եկեղեցին։

ԲՐԱՆԴԻ. Ուրեմն մենք ուղեկիցներ ենք։

ՀԵՐԴԻ. Ի՞նձ հետ։ Ես պէտք է լեռը բարձրանամ։

ԲՐԱՆԴԻ. (Ներքեւ ցոյց տալով), Իսկ եկեղեցին  
այնտեղ է։

ՀԵՐԴԻ. (Արհամարհանկով ու քմծիծաղ): Ներքեռում  
չըէն այն։

ԲՐԱՆԴԻ. Իհարկէ, դէ գնանք միասին... .

ՀԵՐԴԻ. Ոչ, այնտեղ վատ է։

ԲՐԱՆԴԻ. Ինչնիւ։

ՀԵՐԴԻ. Այնտեղ և նեղուածք է և օղը խեղդուկ։

ԲՐԱՆԴԻ. Աւելի ընդարձակ որտեղ ես տեսել։

ՀԵՐԴԻ. Աւելի ընդարձակի: Ես ինչ խմանամ: Մնաս  
քարի: (Սկսում է վեր մազլցել):

ԲԲԱՆԴԻ. Ահա ուր է տանում քո ճանապարհը: Նա  
տանում է դէպի ժայռոտ ու ամայի լեռնամէջքը:

ՀԵՐԴԻ. Գնանք միասին, և դու այնտեղ կը տեսնես  
սառցից և ձիւնից մի եկեղեցի:

ԲԲԱՆԴԻ. Սառցից և ձիւնից... Ահ, արգարի, ես յիշեցի: Ժայռերի մէջ մի կիրճ կայ, որ ժողովուրդը ա-  
նուանել է «ձիւնի ժամ»: Մանուկ ժամանակս նրա մա-  
սին ես շատ պատմութիւններ եմ լսել: Այնտեղ սառած  
լիճը—հիմքն է, իսկ ձիւնի զանգուածները—կարծես կա-  
մարներ:

ՀԵՐԴԻ. Հա, եթէ նայես միայն ձիւն և սառցից կը  
տեսնես շուրջդ, բայց այդ—եկեղեցի է:

ԲԲԱՆԴԻ. Մի գնա այնտեղ.. բաւական է քամու կա-  
տաղի մի հոսանք կամ տրաքոց, նոյնիսկ հասարակ ճիշ  
որ պոկուի ձիւնակոյտը, և...

ՀԵՐԴԻ. (Չլոելով): Գնանք: Ես քեզ ցոյց կը տամ եղ-  
ջերուների հօտ, որ իր տակով էր արել պատուածքը և  
միայն այն ժամանակ երբ ջուրը անցաւ, նա տեսնելի  
քառաւ:

ԲԲԱՆԴԻ. Ոչ, աւելի լաւ է մէ գնա. այնտեղ վտան-  
դաւո՞ր է:

ՀԵՐԴԻ. (Ցոյց տալով ներքեւ): Իսկ դու գնում ես  
այնտեղ,—այնտեղ անձուկ է, հեղձուկ և դդուելի:

ԲԲԱՆԴԻ. Դէ Տէրը քեզ հետ, մնաս բարո՞վ:

ՀԵՐԴԻ. Գնանք ինձ հետ: Այնտեղ պատարագ են  
կատարում ջրվէժները, իսկ քամին այնպիսի քարոզ  
կ'ասի, որ տապի և սարսափի մէջ կը դցի քեզ, — հիա-  
նալին է: Եւ բազէն էլ չի ներս թռչիլ եկեղեցին:   
Նրա բունը այնտեղ է Սև Լեռնասիպի վրայ. կը նստի  
այնտեղ այդ ձիւաղը Փլիւգերի աքաղաղի պէս իմ տաճա-  
ռի ամենասուր ծայրին:

ԲԲԱՆԴԻ. Քո հոգին վայրի է, ինչպէս և քո ճանա-  
պարհը.—երիի կարտուել են այդ տաւիղի լարերը: Սա-

կայն ամեն տափակ և ստոր բան այդպէս էլ կը մնայ յաւիտեան։ Իսկ չարիքը—հնարաւոր է բարիք գարձնել։

ՀԵՐԴ. Ահա, ահա արդէն թռչում է, աղմկելով թե՛ և բով։ Շտապեմ շուտով մանել կտուրի տակ։ Նա չի համարձակուիլ ինձ դիմչել եկեղեցում։ Մնաս բարով… Ու, ինչպիսի չարն է և զարհուրելին նա։ (Ճշում է)։

Հհամարձակուես, չհամարձակուես։ Ես քարով կը խփեմ. ճանկերովդ եթէ բռնես—ճիւղով կը շապրեմ։

(Փախում է վեր շարդով)

ԲԲԱՆԴ. (Մի կիշ դադարից յետոյ)։ Սա էլ էր եկեղեցի գնում, ինչպէս և նրանք, ներքեռում։ Իսկ որը դոցանից տւելի ուղիղ է բնարել ճանապարհը։ Ո՞վ է աւելի չարաշար խաւարի մեջ դեղերում, ո՞վ է մոլորուելով աւելի հեռացել հաստատ նաւահանգստից, բյափից։ Այն թեթեաւտութի՞ւնն էր, որ մի քայլ անգնդից հեռու թռչկոտում էր և ծիծաղում։ Կամ ոթամտութի՞ւնն էր որ հէնց մի գլուխ սովորական ու բանուկ շաւզով է ընթանում։ Կամ, վերջապէս, անստութի՞ւնն է, որ չարիքի տեղ տեսնում է հրաշալիք։ Այսուհետև իմ նպատակն է կոխւ այդ երրակի դաշնակցութեան դէմ։ Ահա իմ կոչումը։ Ինչպէս արևի ճառագայթը շողաց դուսն ճեղքով և լուսաւորեց իմ խաւարը! Այժմ ես տեսնում եմ իմ ճանապարհը. նա բացայատ է, իընկնեն այդ երրորդութիւնը—և աժամարհը փրկուած է։ Միայն թէ աշողուէր գերեզման իջեցնել նրանց, և նրանց մեղքի թոյնը կը կարցնի իր ոյժը!—Յառաջ։ Զինուիր սուսերով հոգի իմ, և նետուիր կոխւ Աստուծոյ նմանութեան համար։

(Սկսում է իջնել զիւղը)։

(Կը շարահակուի)

Սամաս

## Ա Ր Զ Ա Գ Ա Ն Ք

(Հը. Փալեանի «Ո՞վ կը զայ ինձ հետ» բանաստեղծութեան \*):

Քայլէ դու եղբայր, քայլէ համարձակ,  
Չոր անապատներ դու տուր ոտի տակ.  
Թոփած քրտինքիդ հատ կաթիլներից,  
Այնտեղ կը բուռնէ ծաղիկ մանուշակ:

Քայլէ քաջարի, քայլէ անվեհեր,  
Ռմբոստ քայլերով կոխոտիը փշեր.  
Արհամարելով, մէզ ու մառախուզ,  
Անարգել անցիը խոչնդոտ լեռներ:

Դու մի երկնչիր տիրող խաւարից  
Եւ տառապանքի ծանր շղթայից,  
Յուսավառ սրտիդ վսեմ իդէալով,  
Թոփիր քաջութեամբ լայն ակօններից:

Թող ճեղքեն կուրծքդ ժայռերը լերկ-լերկ,  
Թող արիւն հոսէ վերքերէդ մէկ-մէկ,  
Բայց դու անձուրաց որպէս մարտիրոս,  
Միշտ առաջ դնա քայլերով սէզ-սէզ:

Հարթիր ապագայ ուզին մարդկութեան,  
Եւ անմահացիր հոգովդ յաւետ,  
Երբեմն մեկնէ ձեռք եղբայրութեան.  
Պաշտելով հոգիդ, ես կը գամ քեզ հետ:

Խուղի-Ֆէր:

1907 թ., յունուարի 13, Դադուին:

# ՄՈՎՍԵՍ ԹԷ ԴԱՐՎԻՆ?

Պրօֆ. Ա. Գոգելի

Համարեա 3500 տարի առաջ, պատմում է համաշխարհային պատմութիւնը Յուդայեցիների սեմիտական ժողովուրդը հեծում էր Եգիպտացիների լծի տակ: Զայած սատափկ ճնշման, որ կրում էր այդ մտաւորապէս զարդացած ժողովուրդը աֆրիկական կիզիչ արհգակի երկրում, նա արագ բազմանում էր: Նրա սնունդը ինչպէս երևում է վատ չէր, որովհետեւ նեղոսի երկրից չուելուց յետոյ Յուդայեցիները թախիծով յիշում էին Եգիպտասի մսկիչն կերակուրների մասին և ստիպուած անզործունէութեան մէջ սովալլուկ յիշում էին ստրկութեան ծանր աշխատանքը որ նրանց կուշտ էր պահում: Եգիպտոսում ճնշուած այդ օտարազգիների արագ աճումը զարմանալու առանձին բան չի ներկայացնում, համարեա ըոլոր ազգերի մօտ, ըոլոր գարերի ընթացքում մենք նկատում ենք նոյն երևոյթը. ճնշուած, ստրկութեան մէջ տոչորուող ազգաբնակութիւնը սովորաբար շատ պաշտօնէր է լինում: Այդպիսով ամենակարող բնութիւնը ուզում է այն վնասը որ բերում է բարձր զասերի գեղխութիւնը և չափազանց փափկութիւնից այլասերուած կենցաղը:

Որովհետեւ Խորայէլի որդիք շարունակում էին չափազանց արագ աճել, ուստի Եգիպտական թագաւորները վախեցան այդ արհամարհուած աղքատների այդպիսի բազմանալուց: Փարաւոնները սկսեցին երկիւղ կրել որ չլինի թէ հարեան ժողովուրդների հետ պատերազմելիս իրենց ուժական ճարտերը դաշնակից լառնան թշնամիների: Այդ փարաւոններից մէկը այդ պատճառով հրամայեց որ ժամանակ առ ժամանակ իսրայէլացի բոլոր նորածին մանուկներին ջուրը նետեն:

Յօխաքեթ անունով եփրայեցի մօրը շատ դժուար թուաց թագաւորի այդ հրամանը կատարել, ուստի նա իր վերջին արու զաւակին թագցրել էր երեք ամսուայ ընթացքում, մինչև որ երեխի մօտ այնպիսի ուժեղ ձայնը զարդացաւ, որ

նրան այլ ևս անհնարին եղաւ թագցնել։ Այն ժամանակ մայր պատուիրեց հիւսել մի կողով եղեգնի թիթին սնամէջ ցողուններից։ Կողովի մէջ դրաւ իր սիրելի մանուկին և գուրս բերաւ նրան պղտոր Նեղոսի ծանծաղ ավիք։ Մատաղ ընձիւզը լողացող կողովի մէջ դրին մօտեղընայ շամքի մէջ, կանդնած ջրում, իսկ ջրի մէջ գցած մանուկի վրայ հոկելու մնաց նրա քոյր Միրիւամը։

Մի քանի ժամանակից յետոյ այդ տեղ եկաւ լողանալու թագաւորի գուստը. Յովսէփի պատմապրի ասելով նրա անունըն էր Թերմութիս։ Նա նկատեց եղեցնեայ գեղեցիկ կողովը, հրամայեց բերել իր մօտ և բանալ։ Կայտառ մանչի տեսքը, որ բարձրածայն լաց էր լինում, շարժեց փարաւօնի զոտեր գուշը, շուտով մօտեցաւ խորամանկ և ուշիմ Միրիամը և առաջարկեց թագաւորի աղջկան գանել մի ծծմայր։ Յետոյ նա բերաւ գտած մանուկի մօրը, որ և դառաւ նրա սանտուն։ Թերմութիսը որդեգրեց տղային և անուանեց նրան Մովսէս, որ նշանակւում է «ջրից ապատուած»։

Մովսէսի մանկական տարիների մասին հաւաստի ոչինչ յայտնի չէ։ Բատ աւանդութեան, որի վրայ յենուում է Յովսէփի պատմաբանը (թէև տեղեակ հետազօտողների կարծիքով ծեր Յովսէփի պատմուածքը կատարեալ առասպիլ է), Մովսէսը աչքի էր ընկնում անսովոր գեղեցկութեամբ։ Թագաւորի գուստը Թերմութիսը նրա համար ուսուցիչ վերցրեց մի քուրմ, որ ուսուցանում էր նրան եղիպտական ամբողջ իմաստութիւնը։ Նա թագաւորի առաջ միաժամանակ Մովսէսի հաւատարիու պաշտպանն էր, որովհետեւ քրմերը գուշակում էին թագաւորին շատ վատ բաներ և նախազգուշացնում էին, ասելով որ եղիպտացիները կը խարուեն այդ խելացի և հսանդուն օտարազգուց։ Փոքրիկ Մովսէսը մի անգամ, խաղալով փարաւօնի թագի հետ գետին, գցեց և կոխկրտեց այն։ Այդպէս վարուող մանուկը պէտք է համարուի թագաւորի վերցրած առկերախտ թոռն և առագայում կարող է միայն երկիւղ աղդել։ Քրմերը այդ մասին հաղորդեցին թագաւորին, բայց չհամարձակուեցին որևէ բան ձեռնարկել թագաւորի գտերը կամքին հակառակ, և Մովսէսը շարունակեց իր կրթութիւնը։

Մանեստոնի գրաւոր աւանդութեան համաձայն, Մովսէսը մի առ ժամանակ քուրմ էր Հելիօպոլում։ Հասակ առնելով, ասում է Յովսէփ, Մովսէսը առաջնորդեց եղիպտական զօռքին հթոպացիների վրայ, որոնք սպառնում էին Եգիպտասին։ Նա յաղթեց թշնամիներին և հալածեց նրանց մինչև Սարամայրաղարը, որ պաշարեց, և թոփացոց թագաւորի գուստ-

բը սիրահարուեց Մովսէսի վրայ, տռաջարկեց նրան ձեռքը և յանձնեց պաշարուած քաղաքը։ Նա ամուսնացաւ թագաւորի զստեր հետ և յետ տարաւ եղիպտացոց յաղթական զօրքը դէպի հիւսիսային նեղոսի երկիրը։ Այլպէս է յուղացական կրօնի հիմնազրի երիտասարդութեան և մանկութեան մասին վիպական տւանդութիւնը։

Յետոյ բիրլիակուն պատմութիւնից մենք իմանում ենք որ Մովսէսը ստիպուած էր փախչել Արաբական անսպատը, որովհետև նա սովոնեց մի եկիպտացու, մեզ յայտնի է նուանապէս աւանդութիւնը որով Մովսէսը ապրել է մեղացի իշխան և քուրմ Յոթորի մօտ, որ ունէր հօթ գուստը, Նրանցից մէկը (Յիպոր) եղաւ Մովսէսի կինը, երկար տարիներ, ասում է աւանդութիւնը, Մովսէսը արածեցնում էր իր անհրոջ՝ Յոթորի հօտերը։ Նա շատ ժամանակ ունէր մտածելու իր ցեղակից իսրայելացիների գրութեան մասին Եգիպտոսում, որտեղից յաճախ նա տեղեկութիւններ էր ստանում, որ նրանց գրութիւնը ոչ միայն չի լաւանում, այլ որ տաջանքները և ճնշումները օրէցօր տւելանում են։

Այդ երկար տարիների ընթացքում Մովսէսի մտքում, հասունացաւ ծրագիրը՝ գուրած հանել հրէական ժողովուրդը եղիպտոսից յանուն իրենց նախահայր Աբրահամի, իսահակի և Յակոբի Աստուծոյ։ Իր եղրօր՝ Ահարոնի հետ նա վերապարձաւ Եգիպտոս, ուր վաղուց թագաւորում էր այլ փարաւոն։ Մովսէսը այդ ժամանակ 80 տարեկան էր։

Շատ կախարդութիւններ և հրաշքներ կատարելով (որոնք միայն մասսմբ կարողանում էին կտտարել և եղիպտական քրմերը), եղբայրները վախեցրին Եգիպտոսի փարաւոնին և նրան հասցրին այն տեղ, որ նա բաց թողեց հրէական ժողովրդին։ Ո՞վ չի լսել այն հրաշալի պատմութիւնները ամեն տեսակ կախարդական անցքերի մտուն որոնք տեղի էին ունենում Եգիպտոսից գուրս գալուց առողջ, այդ ժամանակ և յետոյ, որոնք փառարանում են Մովսէսի զործը իրեկ հրաշալի էպոպէա։

Իսկապէս, Իսրայէլի ազատութեան այդ պատմութիւնը եղիպտական գերութիւնից ներկայացնում էր մի արևելեան հերոսական պօէմա (վէպ), զարգարուած բանաստեղծական երեակայութեան արտադրութիւններով, որ մեզ նմանապէս ախորժելի է, թէև մենք չենք կարող հաւատալ այն բոլորին ինչ որ նա վարդագոյն մատներով գծել է տւանդութիւնների գրքի մէջ։

Ներկայ գէպըում մեզ հետաքրքրում է ոչ հրաշապարդ

պատմութիւնները նեկոսի երկրից դուքս կալու և անապատի մէջ զեգերելու մասին\*), այլ Մովսէսի հանճարեղ օրէնսդրութիւնը և մասնաւանդ Մովսէսի նշանակութիւնը իրքեւ տիեղերք տոեղծագործութեան մասին գրողի և պատմողի:

Տարբինների աւանդութեամբ յուղայակոսն օրէնսդրութիւնը իր սկզբն է ասնում Մովսէսից, իսկ հինգ գրքերը, որոնք թէն կրում են նրա անունը, իսկապէս կազմուած են զանազան անձերից և զանազան ժամանակներում և Խորայէլի փառքի աղքիւր են գտուել: Թէն զիտական հետազոտութիւնը և աստուածաշնչի մէկնիչների բնական ոգին տասանեցին Մովսէսի գրքերի իսկութեան հաւատը:

Դեռ հս հարիւր տարի առաջ աստուածաբանների մէջ ծագեց կրքոտ վէճ Մովսէսի գրքերի իսկականութեան մասին: Այդ վէճը դեռ հս վերջացած չէ, թէն քիչ աստուածաբաններ են մնացել, որոնք ստոյգ են համարում և իսկական այն բոլորը ինչ որ պարունակում է հինգ գրքերի մէջ: Նոյն իսկ ամենաշատ մնացած սարսափելի պահպանողական և կրօնասէր գիտնականները ստիպուած են համաձայնուել, թէն ափսոսանքով, որ Մովսէսին վերագրուած ոչ բոլոր աւանդութիւնները անողայժման ճշմարիտ են և ուղիղ:

Աստուածաշնչի մէկնիչներից մեծամասնութիւնը այժմ համոզուած է որ Մովսէսին վերագրած մի քանի գրքեր, կազմուած են ոչ նրանից, այլ շատ հրէական գրողներից:

Միայն այդ կերպ մենք կարող ենք բացատրել յաճախ հանգիւող ժամանակագրական անհնիթեթութիւններն ու հակասութիւններն, բազմաթիւ կրկնութիւնները, տարրեր պատմուածքներ նոյն անցքերի մասին և «Աստուածոյ» զանազան անունները: Միայն այդ կերպ կարող է բացատրուել Մովսէսի գըրքի ոճի զանազանածեւ և յաճախ փոփոխուող ոճը,—մի լեզու որ ոչնչով չի տարրերում Մովսէսի մահից 1000 տարի անց եղած հրէական լեզուից, թէն հազիւ կարելի լինի հսթագրել, որ այդ լեզուում ոչ մի փոփոխութիւն առաջ չգար ամբողջ հաղարամհակի մէջ:

Աստուածաշնչի չսախապաշարուած մէկնիչի և արևելեան հնութեան գիտակի համար անտարակուսելի է հետեւալը. ոչ որ, ով չի ուզում աւանդութիւնների կատարեալ ստրուկը դառնալ, չի կարող վերագրել Մովսէսին առաջին գիրքը: Ասա-

\*) Ով ուզում է աւելի ճիշտ զաղափար կազմել այդ առասպեկների մասին նա կարող է վերցնել հիւս, ամերիկ, զրող և հոեւոր Ռուբերտ Գ. Ինգերզուլի «Մովսէսի մուրութիւնները» գիրքը:

ջին և երկրորդ գլուխմները մտանանշում են տիեզերքի ծագման բոլորովին տարբեր ընթանումն: Առաջին գլուխը, որով մենք այժմ՝ կը զբաղուինք ըստ կարգին, պատկանում է Էլօհիմականին, որ տիեզերքի ստեղծագործական ոգին որոշելու համար գործ է ածում Էլօհիմ խօսքը, մինչեւ երկրորդ գլուխը, որ իր բովանդակութեամբ հականում է մասամբ առաջնին, կազմուած է Եհովականից՝ որ վերին էակը անուանում է Եհովա: Այդ երկու բառերով—«Էլօհիմական» և «Եհովական»—աստուածաշնչի մեկնիչները բնորոշում են երկու գլխաւոր ազբւրներ, որոնցից առաջ են եկել Մովսէսի հինգ գրքի պատմութիւնները: Երկու աղբիւրներն ել պատկանում են Զրդ գարուն նախ քան Բ. Ծ.

Այդպէս են աւսուցանում աստուածաբանութան ամենից քաջ տեղեակ պրոֆեսորները: Բայց բոլոր երկրներում և քրիստոնէական աշխարհի բոլոր հոգեոր դպրոցներում ժողովրդին այնպէս են զասաւանդում որ իբր Մովսէսի հինգ գրքերի բովանդակութիւնը ներկայացնում է Աստուածային յայտնութիւն, և իբր թէ Մովսէսը իսկապէս լոկ մասնաւոր քարտուղարն էր նրան թելագող բարձր հեղինակի: այն է՝ յուդայական Եհովա-Էլօհիմի: Եթէ մենք ընդունենք թէ աստուածաշնչ գրերը Աստուծոյ ներշնչած յայտնութիւններ են, այն ժամանակ մեզ համար միենոյն է՝ արդեօք գրել է այն իսկապէս եղած Մովսէսը, թէ բազմաթիւ հրէա գրողների գործ է այն ինչ կոչւում է «Մովսէսի գրքեր», մի բան որ կազմում է Աստուածաշնչի դըլիաւոր մասը:

Մինչեւ որ բոլոր ժողովրդական գպրոցներում և եկեղեցիներում շարունակեն ասել թէ սրբազն գրքերը «Աստուծոյ խօսքերն» են ներկայացնում, մինչեւ այն ժամանակ մենք Աստուածաշնչի մոլորութիւնները դիտակցողներս, սպառազինուած գիտութեամբ և բանականութեամբ, պէտք է կուռենք այն միակ Մովսէսի դէմ, որ ապրում է ժողովրդական և եկեղեցական հաւատալիքներում:

Տեսնենք մըքան են հաշաւում ճշնարսութեան հետ այն ուսմունքները, որոնք աւանդում են զպրոցներում և եկեղեցիներում դարեր շարունակ:

Այդպիսով երբ ես խօսում եմ «Մովսէսի» մասին, դրա տակ հասկանում եմ իսկապէս Աստուծոյ ծառային կամ քարտուղարին, լինի նա մի անձ, ինչպէս այդ ցանկանում է աստուածաշնչը և եկեղեցին, թէ անձերի մի համագումար, ինչպէս այդ հասկանում են աստուածաշնչի դիտական մեկնիչները:

Մովսէսը կրօնի հիմնագիր զառաւ, շնորհիւ այն օրէնս-  
սպրութեան որ կրում է նրա անունը և շնորհիւ աշխարհքի  
ստեղծագործութեան մասին իր վարդապետութեան:

Կրօնսկրի բոլոր հիմնագիրները ունեն բնաւորութեան  
մի քանի ընդհանուր գծեր. նրանք խոր մտածողներ են,  
փելիսոփայօրէն բարձր օժտուած են, մարդկային թուլու-  
թիւնների և արժանաւորութիւնների գիտակներ են, նրանք  
բացի այդ տիրապետում են իրենց ժամանակի ամբողջ զի-  
տութեան:

Մովսէսը նմանապէս վեհ մտքի տէր էր, և իր ձիրքերով  
արտակարդ երեսյի էր ներկայացնում:— Գուցէ, իսկապէս, նա  
այն պատկերն ունէր, որ Միքէլ-Անջելօն ստեղծեց իր Մով-  
սէսի\*): մէջ:

Որովհետև Մովսէսը իւրացրել էր իր ժամանակի եղիսլ-  
տական և արևելեան իմաստութեան սմբողջ գանձը,— եղիսլ-  
տական քրմերը, որոնք միաժամանակ բժշկներ էին, նախա-  
րարներ, կախարդներ և ուսուցիչներ, նրա զաստիարակիչներն  
էին—հասկանողի և որ, եգիպտական գերութիւնից իր ցեղը  
կատարելապէս ազատելուց յետոյ, նա ընդունակ էր հիմքեր  
ստեղծել մի պաշտամունքի, որ իր բարձր նշանակութիւնը  
պահպանեց հազար տարի անց:

Ինչպէս յայտնի է, Մովսէսը հոչակում էր միակ Աստը-  
ծուն, Եհովա-էլօիմին: Նա միաստուածապաշտ (մօնօթէիստ) էր:  
Այդ միակ Աստուածը, որ դարձրեց Խորայէլի ժողովրդին իր  
ընտրեալ ժողովուրդը, և հանդիսանում է, ինչպէս մեզ քրիս-  
տոնիստկան ուսմունքի մէջ դաստիարակուածներիս սովորց-  
նում էին քահանաները և ուսուցիչները, առանձնապէս յու-  
դայական Աստուածը, օժտուած բոլոր այն ժամանակ ճանա-  
չուած առաքինութիւններով և մարդկային կրքերով: Նա անձ-  
նաւորացնում է այն ժումանակուայ հրէաների բաւականա-  
չափ կոպիտ հասկացողութիւնը Աստուածութեան մասին, հը-  
զօր, ուժեղ, նախանձոտ, չար, անխնայ դէպի թշնամիները,  
ամբարտաւան և ծաղրով գէպի նրանց, որոնք աւելի թոյլ էին,  
բայց և այնպէս հակառակում էին իրան, նա հայրերի մեղքը  
քաւել էր տալիս որդիներին երրորդ և չորրորդ սերնդի  
մէջ, մի յատկութիւն որ կարող են ունենալ միայն խորին  
բարբարոսութեան մէջ գտնուող մարդիկ:

Այդ միակ ամենահզօր Աստուածը, աստուածաշնչի պատ-

\*.) Հոչակաւոր արձան Հոռմի Ս. Պետրոսի տաճարում:

մելով, ստեղծեց ոչնչից ամբողջ տիեզերքը, լոկ իր հղօր խոռքով—«և եղիցի»։ Այդպէս հն հաւատում է ապացուցանում հրէաները Մովսէսից սկսած մինչեւ մեր օրերը, աւելի քան 3000 տարի, իսկ քրիստոնեաները համարեաւ 1900 տարի։ Մենք ստիպուած ենք հաշուի առնել հազարամիակների այդ ժառանգութիւնները, և մենք չափազանց անմիտ կը լինէինք, եթէ թիթևամտօրէն քայլէինք Մովսէսի աշխարքի ստեղծագործութեան պատմութեան վրայից գէպի իրերի ներկայ կարգը։

«Քրիստոնեական հրատարակչական ընկերութիւնն երկու անգամ 52 բիբլիական պատմութիւնները», որ ձեռքից ձեռք են անցել միլօնաւոր մարդկանց մէջ և դեռ այժմ էլ ծառայում են իրեւ կը թութիւնն նիւթ, — ներկայացնում են ստեղծագործութեան Մովսէսիստմութիւնը այս կերպ։

«Աստուած ստեղծեց երկինքը և երկիրը իր խօսքով։ Կախ քան Աստուած ստեղծեց, բացի Աստուց ոչնչ չկար։ Միայն Աստուած է յաւիտենական։ Նա է կարող ստեղծագործել ամեն քան, ինչ որ ցանկայ։ Նա չուզեց (ինչո՞ւ) որ սկզբից և՛ եթ երկիրն եւ երկինքը կատարելութեան, որովհետեւ նա սկզբից և՛ եթ ամեն քանի մէջ պահպանում էր չափ, կշիռ և՛ թիւ»։

Մեզ բոլորին սովորեցրել են տիեզերքի ստեղծագործութեան մովսիստմական պատմութիւնը իրեւ անհերքելի մի ճշմարտութիւնն, և այդ գեռ ևս ուսուցանում են քազաքիրթ աշխարհի բոլոր ժողովրդական զպրոցներում, բացի Թրանսիայից և իտալիայից։

Այն ձեռվ ինչպէս նա պատմուած է Աստուածաշնչում նա հանգիստանում է իրեւ առասպել, հեքիաթ, լի արեւելեան գեղպեցկութիւնով բայց և այնպէս մի բանկազուշանք, մի հասկացուպութիւն որ համապատասխան։ Էր այն ժամանակուայ իմաստութեան աստիճանին։ Նա մի ֆանտաստիկ պատկերացում է որ ոչ մի հիոք չունի բնականգիտական քննադատականութեան առջև, տիեզերքի ստեղծագործութեան մասին մի հայեցքը է որ միանգամայն հակասում է արդի գիտութեան։

Երբ Մովսէսը գրում էր իր պատմութիւնը տիեզերքի ստեղծագործութեան մասին, հազիւ թէ յաւակնութիւն ուներ, որ նրա պատկերացումը նոյն ձեռվ պահպանուէր հազարաւոր տարիների ընթացքում և ընդունուէր բոլոր ժողովրդներից, իրեւ միակ փրկարար վարտապետութիւն։ Սակայն քրիստոնեաները գտառն աւելի մոլեունող մովսիստմաններ քան ինքը Մովսէս, — և ահա Արևմտքուժ մենք կանգ ենք առել մի տեղում, որից չենք կարողանում շարժուել։

Հրէանհրի կրօնի հիմնագրի պատմելով ամբողջ տիեզերքը  
Աստուած ստեղծեց վեց օրում:

Աւելի ճշտօրէն ծանօթանանը այդ պատմուածքի հետ և  
թոյլ տանը մեզ անել մի քանի նկատովութիւններ.

«Ակզրում Աստուած ստեղծեց երկիրն և երկիրը» (Մովսէսի 1, 1.):

Մեր օրերի բնադէտը կառէր, տիեզերքը (Մովսէսի «Եր-  
կիրն և երկիրը») ոչ սկիզբն ունի և ոչ վախճան, նա անհուն  
է ժամանակի և տարածութեան կողմից: Ոչնչից ոչինչ է միայն  
լինում, իսկ այն ինչ որ դոյութիւն ունի՝ այն չի կարող ոչնչանալ:  
Տիեզերքը յաւիտեան եղել է և յաւիտեան կը լինի: Դրան  
գրաւական է ոյժի պահպանութեան ֆիզիկական օրէնքը,  
որ ապացուցուած է քիմիայի և ֆիզիկայի բոլոր դաստիքէ-  
րում:

«Երկիրը ամոցի էր, անդունքի վրայ խաւար էր և Աստծոյ ձոդին  
շրջում էր ջրերի վրայ»:

Եւ Աստուած տասց, Թող լինի Լոյս: Եւ եղաւ Լոյս:

Եւ Աստծուն հոմելի էր լոյսը, Եւ նա քամանեց Լոյսը Խաւարեց:  
Եւ Լոյսը անուանեց Յերեկ, իսկ Խաւարը՝ Գիշեր:

Եղաւ երեկոյ եղաւ առաւօտ՝ առաջին օրուայ (Մ. 2—5.)

Այսաւեղ պէտք է նկատել, որ բնագիտութիւնը այլ լոյս  
չի ճանաչում բացի այն, որ լզիսում է փայլող առարկաներից,  
որոնք ունեն ուսիւական լոյսը կամ արտացոլում են այն այլ  
լուսատաւ առարկաներից: Լոյսը ինքն ըստ ինքեան միայն  
նիւթի ամենամանը մասնիկների ալիքանման թրթրացման կամ  
շարժման մի տեսակն է, փիզիկան ճշատութեամբ չափել է այդ  
ալիքների երկայնութիւնը, նիւթի այլ շարժումների արա-  
գութիւնը: Լոյսը՝ նիւթի ասանձնայատուկ շարժումը նշանա-  
կելու համար լոկ մի «հասկացողութիւն» է և ոչ նիւթ: Իսկ  
ոչ մի մահկանացու չի կարող բացատրել և հասկանալ թէ ինչ  
է նշանակում Մովսէսի առաջին օրուայ «Լոյսը»:

«Յերեկն» և «Գիշերը», «Երեկոն» և «Առաւօտը»—այդ  
առաջին օրուայ մէջ անկարելիութիւններ են:

«Եւ Աստուած տասց, Թող լինի հասաւատութիւն չըբերի մէջ և  
Թող քամանուն ջրերը իրարից: Այն ժամանակ Աստուած ստեղծեց հաս-  
տառութիւնը և քամանեց ջուրը հաստառաւթեան տակ և ջուրը հաս-  
տառութեան վերեւում: Եւ այլպէս եղաւ: Եւ Աստուած հաստառութիւնը  
կոչեց Երկինք: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ և եղաւ օր երկրորդ:

(6—8)

Դրա մէջ պարունակում է բաւական հակառակութիւն: Ա-  
ռաջին պրակը առում է թէ Աստուած ստեղծեց «Երկինքը»

սկզբում, և ահա բանից գուրս է գտիս որ «Երկնքը» ստեղծուած էր կրկին երկրորդ օրը։ Այդ միանգամայն անըմբոնելի է, անհասկանալի, անմիտ։ Այսուեղ սարսափելի խառնաշփոթութիւն է։ Յուղայական գրքերի և յուղայական լեզուի գիտակները ջերմեռանդութեամբ հետազոտել են այդ հակասութիւնը և մի քանիսը նրանցից եկել են այն համոզման, որ Աստուածաշնչի առաջին պրակը մեզ հասել է ոչ այն ձևով, ինչպէս այն կազմել է Մովսէս, այլ արտազրելիս խեղաթիւրած։—իրեկ թէ Մովսէս գրելէ է։ սկզբում Աստուած ստեղծեց ջուրն ու հողը...

Անցնենք երրորդ օրուան!

Պր. 9—13.

Եւ Աստուած ասայ.

Թող ջուրը հաւարուի երկնքի տակ առանձին տեղերում, որ կարելի լինի տեսնել ցամաքը։ Եւ այդպէս էլ եղաւ։ Աստուած ցամաքը անուանեց Երկիր, իսկ ջրերի ժողովը անուանեց Ծով։ Եւ Աստուած տեսաւ թէ այդպէս լաւ է եւ ասաց. Թող երկիր վրայ ամեն խոտեր, բոյսեր, որոնք կը բազմանան սերմերու, եւ պտղատու ծառեր. Թող ամեն մի ծառ տայ իր պտուղը, ծփի իր սեփական սերմը երկիրի վրայ։ Եւ ամենցոն երկիրի խոտեր եւ բոյսեր, որոնք բազմանում էին սերմերով, իւրաքանչիւրը իր տեսալի, Աստուած տեսաւ որ այդպէս լաւ է։ Եւ եղաւ երեկոյ եւ եղաւ առաւօտ եւ եղաւ օր երրորդ։

Բուսական աշխարհի ստեղծումը առաջ քան արեգակը երեաց երկնքում—Փիղիքական անկարելիութիւն է։ Աւելի ևս մեծ անկարելիութիւն է պահպանել կանաչ բուսականութիւն—առանց արեգակի—երկար ժամանակի ընթացքում, ինչպէս Աստուածաշնչի գիտուն մեկնիչները հաշում են Մովսէսի ստեղծագործութեան իւրաքանչիւր օրուայ փոխարէն։

Պրակ 14—19

Եւ Աստուած ասայ. Թող լինին լուսատուներ երկնային հաստատութեան վրայ, որոնք բաժանեն ցերեկը պիշեից եւ նշաններ լինեն ժամանակներից օրերի եւ տարիների համար։ Եւ Թող լինին լուսատուներ երկնից հաստատութեան վրայ որ լուսաւորեն երկրը, մեծ լուսատուն՝ ցերեկին իշխելու համար, եւ փոքր լուսատուն պիշերին իշխելու համար եւ աստղերը։ Եւ Աստուած նրանց դրաւ երկնքի հաստատութեան վրայ որ երկիրը լուսաւորեն եւ ցերեկի եւ պիշերի վրայ հսկեն եւ խաւարից բաժանեն։ Եւ Աստուած տեսաւ որ այդպէս լաւ է։ Այն ժամանակ եղաւ առաւօտ եղաւ երեկոյ օր չորրորդ։

Հակասութիւն հակասութեան վրայ, անհեթեթութիւն անհեթեթութեան վրայ! Մեր գրուածքի երկրորդ մասում մենք կը տես-

նենք որ Երկիրը, Արեգակը, Լուսինը և Աստղերը բոլորովին այլ ժամանակա գրական կարգով են առաջացել, քան պատմում է Մովսէս, որ արեգակը երկացել է շատ առաջ քան երկիրը, շատ առաջ քան լուսինը, և թէ անթիւ աստղերը գոյութիւն ունէին տիեզերքում մեր արեգակից նրա բոլոր մոլորակներով և արբանեակներով հանգերձ մի քանի միլիարդ տարինսեր առաջ:

Ի հարկէ Մովսէսը ինքն իրան հակառում է, երբ չորրորդ օրը նա մի անգամ ևս բաժանում է լոյսը խաւարից, թէս այդ արդէն եղել էր առաջին օրը, և գեռ առաջ ցերեկը յաջորդում էր գիշերին, երեկոն առաւօտի հետ:

Պրակ 20—20

Եւ Աստուած ասաց, Թող ջրի մէջ շարժուն եւ վիստան զեռուներով, Թոչուները Թոչենն երկրի վրայ երինից հաստատութեան ներքոյ: Եւ Աստուած ստեղծեց մեծամեծ կէտեր և ամեն տիսակ կենդանիներ, որոնք ապրում են եւ շարժում և եռում ջրի մէջ, իւրաքանչիւրը իր տիսակ, եւ ամեն տիսակ Թոչուններ, իւրաքանչիւրը իր կերպարանքով: Եւ Աստուած տիսակ որ այդ լաւ է, օրնից նրանց եւ ասաց. Աճեցէք եւ բազմացէք և լցորէք ծովերն եւ ջրերը, իսկ Թոչունները Թող բազմանան երկրի վրայ: Եւ եղաւ առաւօտ եւ եղու երեկոյ օր հինգերորդ:

Այդպիսով հինգերորդ օրը Աստուած ստեղծեց ջրային կենդանիներին և թաշուններին օգում:—Բնական գիտութիւնները ամենաակնյայտնի կերպով ապացուցեցին որ կենդանական աշխարհը զարգացաւ բուսականի հետ միաժամանակ և որ թոչուններին օգում նախորդել են ցամաքային կենդանիները, մինչդեռ Մովսէսն ասում է, թէ ցամաքային կենդանիները երևեցան միայն վեցերորդ օրը:

Պրակ 24—31

Եւ Աստուած ասաց, Թող երկիրը՝ շնչաւոր կենդանի հանէ իր տիսակի պէս, անասուններ և սողուններ և երկրի զազաններ իրանց տիսակի պէս: Եւ այնպէս եղաւ: Եւ Աստուած երկրի զազանները ստեղծեց իրանց տիսակի պէս, և անասունները իրանց տիսակի պէս, և գետնի բոլոր սողունները իրանց տիսակի պէս: Եւ Աստուած տիսակ թէ բարի է: Եւ Աստուած ասաց. մեր պատկերով և մեր նմանութեան պէս մարդ շիննը, որ իշխի ծովի ձևերի, Թոչունների և անասունների և բոլոր երկրի վրայ, և երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ: Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց նրան արու և էղ ստեղծեց նրան: Եւ Աստուած օրնից նրանց և Աստուած ասաց նրանց. ամեցէք և շատացէք և լցորէք երկիրը, և տիբեցէք նրան. և իշխեցէք ծովի ձևների, և երկնքի Թոչունների վրայ, և երկրի վրայ սողացող բոլոր կենդանինների վրայ: Եւ Աստուած անսաւ բոլորն ինչ որ Փետրուար, 1907.

արել էր շատ գոհ մնաց: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ վեցերորդ օրը:

Այդպիսով վեցերորդ օրը Աստուած ստեղծեց ցամարի կենդանիներին իսկ ամենից վերջում՝ մարդուն: Մովսէսը ճըշմարիտ է մարդու ստեղծումը տանելով ամենավերջը, բայց նա սխալում է երբ ասում է թէ Աղամը շինուից մի բուն հողից, իսկ եւան՝ Աղամի կողից: Մենք դեռ կը վերադառնանք այդ հիմնական մոլորութեան:

Յետոյ սխալ է որ մարդս ստեղծուած էր Աստծոյ պատկերով, հակառակը ճշմարիտ գուրս եկաւ, մարդը ստեղծեց իր համար «Աստուած» մարդու կերպարանքով: Ինչպէս է մարդը—այնպէս է և Աստուած! (Լ. Ֆէյերախ):

Մենք բոլորս գիտենք յետագայ պատմութիւնը մեզք գործելու և դրախտից աքսորուելու մասին: Խօսող օձը ստիպեց աստուածաբաններին զլում կոտրել իր վրայ և շատ ծիծառացը ել է չարաճճի աշակերտներին: Բնդիանրապէս տարածուած կարծիքով, քրիստոնեայ Արեմուարում ընդունուած էր և մասսմբ ընդունուած է և այժմ, որ Մովսէսը ուզեցել է պատկերացնել խօսող օձի մէջ սատանային կամ դեին: Սակայն այդ սոսկալի մոլորութիւն է, որովհետեւ Մովսէսը չգիտէր ոչ դե, ոչ սատանայ: Հեռու-արելեկեան այդ գեմօնական կերպարանքը միայն մի քանի դար անց, Մովսէսից յետոյ, մտաւ յուղայիցիների գաղափարների շրջանի մէջ: Խիստ բնորոշուած, պարզ և որոշակի սատանան առաջին անգամ երեան եկաւ Յոթի պատմութեան մէջ:

Խօսող օձը առաջի մարդկանց սովորցրեց ճանաչել բարին և չարը:

Բայց մեղ հազար անգամ ասել են, թէ մենք բոլորս ծնուամ ենք նախաստեղծների մեղքով: Այդ նախածնողական մեղքով կարող էր պատահել որ Կայէնը սպանեց իր եղբօր Արէլին: Այդ սարսափելի պատմութիւնը վերջանուած է սարսափելի հակածառութեամբ: Եղբայրասպան Կայէնը փախաւ Նայիդ երկիրը, Եգէմից գէպ արեելք:—«Եւ Կայէնը գիտաց իր կինը: Նա յղացաւ և ծնեց որդի ենոքը: Եւ նա մի քաղաք շինեց և իր որդու անունով կոչեց Ենոք»:

Այդպիսով մենք տեսնուած ենք որ առաջին մարդու, Աղամի որդին փախչուած է օտար աշխարհ, ուր նա ամուսնանուած է, դաստիարակուած զաւակներին, շինուած քաղաք, իհարկէ, բանուորների օգնութեամբ: Ուրեմն այդ Նայիդ երկրուած մարդիկ կային, ծնուած ոչ Աղամի ընտանիքից: Հետեաբար, Աղամ և

Եւան բնաւ առաջին մարդիկ չէին, որովհետեւ այդ բոլոր վերև յիշածները չէ որ Աստուածաշնչի մէջ է գրուած...

Այդպէս և բնագիտութիւնը ոչ մի առաջին մարդ Աղամ և առաջին կին եւա չի ճանաչում, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ:

Մենք բոլորս ծանօթ ենք Մովսէսի պատմութեան հետ համաշխարհային ջրհեղեղի մասին: Մի անգամ Աստուած ասաց.

Ես ուզում եմ երկրի երեսիցը ջնջել բոլոր մարդկանց, որոնց ես ստեղծեցի, մարդկունց և անսառմներին, սողուններին և Թոջուններին որովհետեւ գլցում եմ որ նրանց ստեղծեցի:

Այստեղ մենք հանդիպում ենք ամենամիամիտ հասկացողոթեան բարձրագոյն էակի մասին. Ենովան նման է մի թոյլ մարդու. նա զղջում է որ ստեղծեց մարդուն!

Միթէ կարելի է մեզանում Արևմուտքում գտնել մի հանձնարեց նկարիչ կամ ճարտարագէտ, որ զղջար իր ստեղծածների համար: Խսկական մարդը ոչ մի քանում չը զղջում! իսկական մարդը միշտ գործում է իր համոզմանց համաձայն...

Այս, այդ այնպէս է, ինչպէս առում է, աստուածաբան Մ. I. Savoge, հին ուխտի Ենովան ապրում է մի որոշ տեղում, ինչպէս մարդ. նա երեսում է տաճարում, ման է գալիս և խօսում ինչպէս մարդ. նա մտածում է և ծրագիրներ յօրինում, ինչպէս մարդ. նա սիրում է, ատում, բարկանում, վրէժիշնդիր լինում և փոխում իր կարծիքները արևելեան բռնակալի նման:—Չպէտք է զարմանալ Աստուծոյ այդ կերպ մարդանման դարձնելու վրայ, որովհետեւ Աստուծոյ գաղափարը մարդկային ուղեղի ծնունդ է: Մարդու զարգացման և հասունանալու հետ միասին զարգանում է և հասունանում Աստուածութեան գաղտնաբարը:

«Բայց Աստուած ողորմեց նոյին»:

Տեղի ունեցաւ համաշխարհային ջրհեղեղը, մի կատաստրոֆ, մի դրամա, որ մինչև այդ մեր երկիրը երբէք չէր տեսել: Մենք բոլորս դպրոցական նստարանի վրայ, աղահութեամբ լսում էինք համաշխարհային ջրհեղեղի պատմութիւնը, իսկ ամենամեծ նկարիչները հռչակում էին այդ տրագեդիան հոյակապ պատկերներում: Ժամանակակից աշակերտները կարդում են այդ պատմութիւնը նոյն հետաքրքրութեամբ, և ինչու այդպէս չլինի: Զէ որ այդ համաշխարհային դրաման պմնուած է արևելեան հէքիաթի բոլոր փարթամութեամբ և տեղ տեղ լի է Փանտաստիկ գեղեցկութիւններով:

Մանկական երեսակայութիւնը, մանկական ամբողջ հոգին լքցում էր բարեպաշտ նոյի և նրա ընտանիքի այդ պատմու-

թիւնով, ջրերի հրեսի վրայ լողացող այդ տապանի (300 կանգուն երկայնութիւն, 50 լայնութիւնը և 30 բարձրութիւնը) բաղմաթիւ զոյգերով, ուր գայլերը քնում էին նդնիկների հետ միասին, ընծուղաները առիւճների հետ, գիշատիչ գազանները կերակրուում էին չոր խոտով և տապանուս տիրուում էր տօնական համերաշխութիւն։ Զիթենի ճիւղով աղաւնին Արարտի գլխին կանգնած տապանից զուրս գալը, Նոյի երախտագիտութեան ողջակեղի և երկների վրայ ի նշան հաշտութեան երեացած հրաշալի աղեղը։ Որքան մենք երեխայքս ուրախանուում էինք որ «այլես ոչ մի կենդանի մարմին չի կորչելու ջըր-հեղեղից»։—Այդ բոլոր բաները մեզ սովորեցնուում էին, ինչպէս անհերքերի ճշմարտութիւններ, և մենք, գրանց հաւատուում էինք, ուրախութեամբ էինք հաւատուում, որովհետեւ այդ բոլորը չափազանց էր գեղեցիկ, սուտ լինելու համար։ Եւ մեր որդիք պէտք է շարունակե՞ն հաւատալ դրան։

—Մենք ասում ենք, ոչ!

Այդ չէր հանդիպիլ աստուածաբանների կողմից այդպիսի ուժեղ ընդգիմադրութեան, եթէ Մովսէսի գրած աշխարհքի ստեղծագործութեան պատմութիւնը հիմք ու նեցուկ չդառնար քրիստոնէութեան, ցարդ եղած կրօններից կատարելագոյնին։

Գերբնական աստուածային օգնութեամբ փրկութեան և մեղքերից ազատուելու գաղափարը ծագել է նախաստեղծական մեղքի վարդապետութիւնից և այն հայեացքից թէ մենք բոլորս այդ մեղքի շնորհիւ կորստեան ենք մատնուած։ Այդպիտով յուղայականութիւնից աճել է երկնքիս Աստուծոյ որդու առաքումի գաղափարը և բիւրեղացել իբրև խաչի վրայ քաւութեան մահի մի գաղափար։ Քրիստոնէութիւնը, ուղղահաւատ եկեղեցու համացողութեամբ, մովսիսականութեան ապօրէն գաւակն է, մեղբնկեցութեան (անկման) և նախածննդական մեղքի առեղծուածի միստիկական լուծումն է։\*)

Այս գրուածքի մի այլ տեղում ես ցոյց կը տամ որ ժամանակակից բնագէտը, թէև հակառակորդ աշխարհի ստեղծագործութեան մովսիսական պատմութիւններին, որոշ չափով ընդունում է մարդկային ցեղի նախածննդական մեղքը...

\*) Ժամանակակից լուսաւորուած աստուածաբանութիւնը, որ պաշտպանուում է վերանորոգիչ-աստուածաբանների մի խմբակի կողմից, վիճելի է համարում այն կարծեքը որով քրիստոնէութիւնը ուղղահաւատ յուղայականութեան ապօրէն դուստրն է։ Բրունօ-Բառուէր, աստուածաբան, որ ամենից խորն է քննադատում աստուածաշունչը, գալիս է այն եղբակացութեան, որ քրիստոնէութեան ծննդափայրը Դալիլէան և երուաղէմը չէին, այլ փիլտրափայական շկոլան եզիստական Ալեքսանդրիայում և Հռո-

Հին ուխտի յուղայականութիւնը ընականաբար գիտական չէր, բայց մտաւորապէս բարձր հրէական ժողովուրդը, որին Մովսէսը և Յեսու Նասորին Աւետեաց երկիրը, որոշ չափով կենսուրախ էր և սիրում էր բնութիւնը, հին ուխտի հրէաները ուրախանում էին այս աշխարհի բոլոր բարիքներով —ոսկով, արծաթով, ոչխարների հօտերով և կովերի նախիրաներով, հրաշալի պարակզներով և այդիներով։ Նրանք նայում էին դաշտային ծաղիկների վրայ և երգ կապում գեղեցիկ շուշանների մասին։ Գերազանցօրէն բանաստեղծական երգերի մէջ նրանք համեմատում էին մարդկային գեղեցկութիւնը, կանացի գրաւչութիւնը տնուշաբոյր բոյսերի հետ, որոնք զարդարում էին Լիբանանի սարալանջերը և Յորդանանի տփերը։

(Երգ երգոց)

Ես Սարօնի ծաղիկն եմ, հովիտների շուշանն եմ:  
Իմ սիրեկանը ինձ համար մրտինու թուփ է։

Հիանալի ողկոյզ է իմ սիրականը ինձ համար, Ենգալդիի այգեստանումը։

Խնչպէս վարդն է փուշերի մէջ, նոյնպէս է իմ ընկերուհին աղջկերանց մէջ։

Խնչպէս ինձորենին է անտառի ծառերի մէջ, այնպէս եւ իմ սիրականը տղերանց մէջ։

Իմ սիրեկանը նման է այծեամի կամ եղնիկի ձագին։

Նրա կերպարանքը Լիքանանի պէս, ընտիր՝ նղեւինների նման։

Ո՞վ մեր ժամանակուայ գրողներից կարող էր աւելի գրաւիչ նկարազբել դարնան գալը, քան այդ արաւ «Երգ երգոցի երգիչը»։

Տես ծմբոն անցաւ, անծրեւն անցել գնացել է, ծաղիկները երեւում են երկրի վրայ։

Երգելու ժամանակը հասել է, տատրակի ծայնը լսում է մեր երկրում։

Արմաւենու վրայ երեւացին պտուկները, ծաղկած որթերը հոտ են բռում։ Վեր կաց, ով ընկերուհիս, եկ գնանք։

Ո՞վ է այդ որ նայում է արշալոյսի պէս, զեղեցիկ է լուսնի նման, մաքուր արեգակի պէս։

ՄԵՆՔ բոլորս գիտենք և սիրում ենք սաղմոսները, Նրանց

մում այն ժամանակուայ հղողութեան և մտաւորականութեան մայրաքաղաքում։ Ֆրիզրիի էնգելս ցոյց է տալիս որ քրիստոնէութեան զարգացման պրոցեսում մղիչ գլխաւոր գործոնի գեր է կատարել հասարակական աղքատութիւնը։ Քրիստոսի էթիկական նշանակութիւնը, իրու հիմնադրի, միայն ճանաշուած էր երկու դար նրա մահուանից անց։

պատկերաւոր լեզուն։ Հին կտակարանի մէջ պատահում են այլ գլուխներ էլ, որոնք տոգորուած են սիրով դէպի ընութիւնը։

Սակայն քրիստոնէութեան ծագման հետ, ինչպէս ուսուցանում էր եկեղեցին եւ ինչպէս այն հասկացում էր ուղղահաւատների կողմից հազար հինգ հարիւր տարիների ընթացքում, սկսուեց արևամարհական վերաբերմունք դէպի աւշարհը եւ բնորդի նը։

Ես չեմ ուզում խօսել այն մասին թէ իսկապէս ինչ էր Նազարեթից գուրս եկած իմաստասէրի (Յիսուսի) վարդապետութիւնը։ Դրա մասին կարծիքները գեռ ևս այժմ էլ չափազանց տարբերում են, որովհետև ապացուցուած է որ նոր կտակարանի չորս աւետարաններից ոչ մէկը կազմուած չէր Քրիստոսի կեանքի ժամանակ, այլ այդ չորսն էլ հիմնուած են միայն աւանդութիւնների վրայ։

Իմ նպատակներից գուրս է նմանապէս բացատրել թէ ինչպէս կարող էր Նազարեթից գուրս եկած այդ վարդապետութիւնը այնպիսի նշանակութիւն ունենալ մարդկութեան պատմական զարգացման մէջ։

Բաւական է այստեղ մատնանշել այն որ քրիստոնէութեան հետ միասին ծագեց արհամարհնար դէպի գրսի աշխարհը, և աշխարհից հեռանալը հաչակուած էր իրեն փրկարար դարման բոլոր տանջանքներից։ Մեր տարեհամարի առաջին դարերի քրիստոնեանները երես թեքեցին աշխարհային ուրախութիւններից և բնութեան վայելքներից։ Նրանք մեծ մասամբ ուրսուափելի չքաւորներ, Հռոմի ստրուկներ, ամենուրեք միայն սեփականազուրկ մարդիկ էին, որոնց համար այս աշխարհի գոյութեան իմաստը ոչինչ էր, ուստի նրանք մեծ ուրախութեամբ յոյսեր էին դնում անզրգերեզմանային աշխարհի վրայ։ Հռոմի քրիստոնեանները երկար ժամանակ կոմմունիստներ էին (համայնականներ)։ Բոլորը ձգտում էր դէպի գերբնականը, դէպի անմեկնելին։ Մարդու կարող էր փրկուել միայն հաւատով։ Դրա դիմաց ինչ նշանակութիւն ունէր մարդկային ամբողջ իմաստութիւնը, բնութեան ամբողջ ըմբռնումը, ամբողջ փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը!։

Մեզ հազար անգամ կը կնել են Պօղոս Առաքեալի ասացուածքը. «Որովհետև զուք ձեզ իմաստուն էիք համարում, գուք դարձաք յիմարներ»։ Այդ խօսքերը հեշտ են տուում, և նրանք գտաւան բարասան նրանց համար, որոնք բնութիւնից ժլատ են օժտուած իմացականութեամբ, կամ ով չափազանց

ծոյլ է եղել, որպէսզի իր մէջ զարգացնի իմացականութեան աստուածային կայծը և կատարելագործի իր մտածողական ընդունակութիւնները: Անտարակոյս, ոչ մի ասացուածք ամբողջ աստուածանչի մէջ այն աստիճանն խոշնդրութիւնը հանդիսանում բնագիտութեան զարգացման համար քրիստոնէական արհմուռքում, թուլացնելով ոգին և սպանելով բանականութիւնը, որքան առաքեալի այդ խօսքերը: Գիտութեան անպէտքութիւնը աւելի մեղմ քան իր ջերմեանդ առաքեալ Պօղոսը, նկարագրեց Յիսուս, ասելով. «Երանի հոգւով աղքատներին, որովհետեւ նրանց համար է սահմանուած երկնից արքայութիւնը»:

Այդ «աղքատները», ինքն ըստ ինքեան հասկանալի է—տգէտներն են, թէև վերանորոգիշ-աստուածաբանների կարծիքով մենք պէտք է «հոգով աղքատներ» խօսքերով հասկանանք՝ խոնարհ մարդկանց, որոնք գիտակցում են իրենց անկատարելութիւնը և թուլութիւնը, հետևաբար իդէալիստներ են:... Սակայն ուղղահաւատ եկեղեցին և հաւատացող աղանդները բոլորովին այլ քան են ուսուցանում, որովհետեւ նրանք իրրև «հոգւով աղքատներ» փառաբանում են և երանելիների զարդ անցկացնում տգէտներին, կոյրերին և խուլերին:

Թէ ո՞ր աստիճան մարդկային ձգտումների ծանրութեան կենտրոնը այս աշխարհից փոխանցուած էր անդրդերեզմանացին աշխարհը, ո՞ր աստիճան Պօղոսի քրիստոնէական ուսմունքը իրան գիտութեան բացարձակ հակառակորդ էր ճանաչում—պարզ է համարեան նրա իւրաքանչիւր թղթից, որոնցից մի քանիսը թէև իր գրածները չեն:

«Որովհետեւ եթէ ապրէք, ինչպէս ցանկանում է ձեր մարմինը, դուք պիտի մնոնէք, իսկ եթէ դուք հոգով սպանէք ձեր մարմինը, կը-ապրէք (Հո. 8—13): Որովհետեւ զրուած է. ես կոչնացնեմ իմաստունների իմաստութիւնը եւ կը արհամարհեմ իսկուն մարդկանց խորհուրդը: (1 Կրնթ. 1, 19):

Ո՞ւր են աշխարհիս իմաստունները: Աչ ապաքին յիմարեցուց Աստուած այս աշխարհի իմաստութիւնը (1, 20) Այլ Աստուած ընտրեց աշխարհիս յիմարնիրին որ ամաչեցնի իմաստուններին: (1, 27)

Որովհետեւ Աստուած այս աշխարհիս իմաստութիւնը յիմարութիւն է համարում. գիտութիւնն ամբարտաւանցնում է (8, 1):

Իսկ մինք բոլորովին հակառակն ենք մտածում: Գիտութիւնը ամբարտաւանցնում չէ, այլ ընդհակառակն—համեստացնում է. որովհետեւ որքան խոր ենք թափանցում գիտութեան մէջ, այնքան աւելի է մեղ համար պարզում, թէ որքան քիչ ենք մինչև այժմ հասել գիտութեան աշխարհում և որքան մօտ

ենք մենք կանգնած գիտութեան սկզբին։ Գուսող գլուխները և յոխորտացող ուղիները մենք պատահել ենք այն ծոյլերի, գիտութեան այն մեծամիտ թշնամիների մէջ, որոնք միշտ աստուածաշնչի ապացոյցներին են գիմում, որոնք շողոքորթում են նրանց յիմարութիւնը։ Հոգիկան ամբարտաւանութիւնը վաղուց ի վեր յատուկ էր հոգով աղքատներին։ Միշտ եղել են բացառութիւններ՝ ես սիրում եմ այդ բացառութիւնները, լայց նրանք լոկ ապացուցանում են կանոնը։

«Զի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերում՝ յաւիտենականն առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ, ՚ի մեզ։ Քանզի հչ գիտեմք զերեւելիս» այլ զաներեւոյթն, զի երեւելիքս առ ժամանակի մի են, եւ աներեւոյթքն յաւիտենականք»։ (2 կոր. 4, 17—18):

Այսինքն, «մեր ժամանակաւոր եւ թեթեւ նեղութիւնը, տալիս է յաւիտենականն եւ ամենաքարձօք երջանկութիւն մեզ (բրիստոնեաներիս), որոնք ծգուում ենք ոչ դէպի երեւեցող այլ դէպի աներեւոյթ աշխարհը»։

Նմանապէս Յովհաննի առաջին թղթի մէջ ասուած է. «մի սիրէք աշխարհը և այն ինչ որ աշխարհում է»։

Արհամարհանքը դէպի բնութիւնը և աշխարհը այնքան հեռու զնաց որ մինչև անգամ ամուսնութիւնը համարւում էր իրրե անխուսափելի չարիք և նրան իբր հիմք գրւում էին ստոր անսասնական բնապղներ։

Այդ հասկացողութիւնը խիստ պաշտպանում էին մի քանի քրիստոնէական աղանդներ (օրինակ (Յօհաննես), և այդ ծառայեց իրրե հիմք հսոմէական կաթոլիկ հոգևորականութեան անկնութեան։

Յարգանքը դէպի կինը դրանից չաւելացաւ \*):

Դրանք են այն սակաւաթիւ սոոյզ ցուցմունքները քրիստոնէութեան հիմնադիրների և առաքեալների տածած արհամարհանքի մասին դէպի բնութիւնը և աշխարհը։

Եւ աշխարհից փախչելու և բնութիւնը արհամարհելու այդ կրօնին վիճակուած էր զանալ Արևմուտքում պետական կրօն։

Յոյները և հսովմայեցիները, կուսալ ազգեր, այն ժամանակ երբ խաչի մասին խօսքը հնչեց ծովի միւս կողմում, միծ առաջադիմութիւն ցոյց տուին նկարագրական բնագիտութեան մէջ։

Արիստոտելը (384—322 քր. Ա.) աշխարհին կտակեց շատ բնագիտական շարագրութիւններ և ի միջի այլոց իր կազմած՝

\*.) Ինքը Քրիստոսը կենսուրախ էր, աշխարհից չէր փախչում. նրան այլ բնոյթը տուաւ և կեղեցին յետոյ։

կենդանիների թագաւորութեան և բուսական աշխարհի սիստեմը, որ, ի հարկէ, չէր կարող երկար պահպանուել, որովհետև նրա հասկացողութիւնը ընութեան ժամին, համալատասխանելով իր ժամանակուայ գիտութեան, չափազանց անբաւարար էր և խառնուած էր աղայամիտ և մնահաւատ հայեացքների հետ։ Սակայն ուշագրաւ է այն որ արխտոտելեան սիստեմը յետոյ քրիստոնեայ արևմուտքում ընդուռում էր իրրե աշխարհաճանաչութեան այբ ու Փէն, իսկ քրիստոնէական դրպրոցներում մինչև վերջին ժամանակներս ծառայում իրրե ընտգիտութեան հիմք։

Այն հեռաւոր ժամանակներում, մօտաւորապէս 2000 տարի մինչև մեր օրերը, յոյն և հռովմայեցի փիլիսոփաները քննում էին ամենամեծ խնդիրները, որոնք երրեկցէ յուղելին մարդկային ողին, այն է գոյութեան և ոչնչացման, բոլոր իրերի ծագման և էութեան, աստուածների գոյութեան և մարդուս նպատակի հարցերը։

Աստուածների մասին յունական և հռոմայական ուսուցման մէջ մենք տեսնում ենք մարդկային երևակայութիւնը իր բոլոր փայլով։ Անթիւ աստուածները—միծ մասամբ ընական ոյժերի, մարդկային առաքինութիւնների, պակասութիւնների և կրերի բանաստեղծական անձնաւորացումներ են։

Ամենազլիսաւոր աստուածը—իւլիսեր-Զեսը—մարդկային ստեղծագործութեամբ յօրինած և առասպելներում երգած չափաղանց յաճախ սիրահարուող տղերանցից էր։ Թէ աստուածների թէ գիշունիների թէ նրա սիրածների և սիրունիների արքունիշը ամբողջ խումբը—ի հարկէ ամենամեծ այդ աստուածութիւնից աւելի լաւ չէր։ Նախանձը և չարախնդութիւնը, սէրը և ատելութիւնը, խանդուտութիւնը և հալածելու մոլեգնութիւնը, վայելքների և գեղխութեան ծարաւը, մարդկային ամեն տեսակ կրքերը և խելառութիւնները յունական երկնքի աստուածային ընակինների կեանքում նոյն գերն էին կատարում, ինչ որ այստեղ երկրի վրայ մարդկանց մօտ։ Սակայն ամբողջ գիշաբանութեան մէջ գեղեցկութիւնը առաջին տեղն է գրաւում։ Այն ժամանակուայ զեղարուեստական արտադրութիւնները, որոնք մասամբ միայն վերջերում են հանուել աւերակներից, գեռ ևս այժմ էլ հրէաների, քրիստոնեաների և կռապաշաների կողմից ընդունուում են իրրե գեղարուեստական ստեղծագործութեան լաւագոյն գործեր։

Այստեղ տեղը չէ խօսել այն մասին թէ որքան այդ յունական և հռոմէական ճոխութիւնները հրաշալի էին։ Բնագիտութեան ոկղոնաւորութիւնը, արուեստի և պօէզիայի ստեղ-

ծագործութիւնները խորտակուած էին համաշխարային պատմութեան ընթացքով և հոռմէական թագուարութեան հետմիասին աւերակ դարձուած:

Հոռմէական պետութիւնը կը քայքայուէր և առանց քրիստոնէութեան ազգեցութեան, այն պատճառների բերմամբ, որոնք և այժմ առաջնում են մեծ պետութիւնների և ազգերի անկումը:

Իմ նպատակից գուրս է նմանապէս նկարագրել անցքերի պատկերը մինչև այն ժամանակաշրջանը, երբ Գողգոթայից խաչը իբրև յաղթութեան նշան տարածեց իր ազգեցութիւնը աշխարհի վրայ, բայց պէտք է ասել որ երկար դարերի ընթացքում, քրիստոնեայ եկեղեցու տիրապետութեան օրերում թագաւորում էր տգիտութեան մոլեուանդութիւնը, և եկեղեցու հայրերի ու եպիսկոպոսների իդէալներից մէկն էր՝ մտաւոր խաւարը: Ինքը եկեղեցու հայր Եւսեբիոսը (IV դ) գրում է հետեւալը. «Ոչ թէ տգիտութեամբ էինք մենք ստոր դասում գիտութիւնները, այլ արհամարհանք զզալով դէպի նրանց կատարեալ անօդտակարութեանը. իսկ մենք ուզում ենք մեր հոգին դարձնել դէպի լաւագոյն առարկաները»:

Եգիպտոսում 391 թ. Քրիստ. յետոյ մոլեուանդ քրիստոնեաների ձեռքով Թէօֆիլ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ Ալեքսանդրիայում այրուած էր ամենաերեսելին այն ժամանակուայ գրադարաններից, որ պարունակում էր իր մէջ 700,000 հատոր և մագաղաթեայ թերթիր: Նոյն ժամանակ ապրում էր իր գեղեցկութեամբ, բարքի մաքրութեամբ և դիտնականութեամբ հոչակուած յոյն կին իպաթիան, որ զնացել էր Աթէնք՝ Փիլիսոփայութիւն ուսմանելու: Ալէքսանդրիա վերադառնալով այդ կինը աւանդում էր արիստոտելիան և նոր-պլատոնական փիլիսոփայութիւնը: Պատրիարք Կիրիլլից դժգոհ քրիստոնեաների ապստամբութեան ժամանակ այդ կինը չարաշար կերպով սպանուեց:

Այդպէս ահա հոգեկան խաւարի մուայլ ամպը քանի գնում աւելի և աւելի էր կախուում աշխարհի վրայ: Մոլորուած քրիստոնեայ արևմուտքի ֆանատիկոսութիւնից արևելեան և յունական գիտութիւնից զերծ մնացին միայն ընկորներ, որ յետոյ հաւաքեցին մահմեղական արարները:

Ինքը Մոհամեդը, որ շատ բան փոխ վերցրեց օրէնսպիր և ժողովրդական առաջնորդ Մովսէսից,—որ նրան չխանգարեց այնուամենայնիւ պատահած դէպքում կտրել գլուխները այն հրէաների, որոնք համարձակում էին քննադատելնրա հաւատքի գոգմաները,—գիտութեան բարեկամ էր, ինչպէս ասում են,

նա գտնում էր որ գիտունների թանաքը աւելի սրբազն է, քան նահատակների արիւնը և ասում էր թէ «բանականութիւնը Աստուծոյ ամենալաւ ստեղծագործութիւնն է»\*): Շատ դարեր անց վերանորոգիչ Լիւթերը նոյն այդ բանականութիւնը, «Աստուծոյ ամենալաւ ստեղծագործութիւնը» որակում է բոլորովին հակառակ անունով, որ քաղաքավարի մարդը նոյնիսկ կանանց և երեխաների բացակայութեամբ կը գժուարանայ արտասանել:

Նոյն ժամանակ, երբ մահմեդական արաբների տիրապետութեան տակ, Խալանիայում ծաղկում էին գիտական զըսդրոցներ, աշխարհից փախչող քրիստոնեայ Եւրոպայի վրայ կախվածուել էին տգիտութեան և դէպի գիտութիւնը տածած արհամարանչի ստուերները: Մեր հրաշալի Շվեյցարիայում, Բօդենի լճի և Լեմանի, Ալպերի և Խւրաների միջավայրում ժողովրդական ուսուցիչները և քահանաները չէին համարձակւում նոյն իսլ կարդաբ: Կուլտուրայի մի հռչակաւոր պատմաբան ասում է թէ Ս.-Դալլի Կոնրադ վանահայրը իր ամբողջ միաբանաթեամբ հանդերձ չէր իմանում նոյնիսկ գրել այն ժամանակ, երբ Երգիչ Վալտերը (1170—1230) այցելեց այդ հռչակաւոր վանքը:

Առհասարակ մոլորութիւն կամ առնոււակն չափազանցութիւն է, երբ պնդում են թէ վանքերը բոլոր ժամանակներում և ամենուրեք գիտութեան բարեկամ, կուլտուրային անկարան էին հանդիամանքից, որ մի քանի երկրների և տեղերի վանքերում գրաւոր շարագրութիւնները բոլորովին յայտնի չէին: Երբ ականաւոր բանաստեղծ Գետրարկան (1304—1374) Լիեժում զտաւ Յիշերունի ճառերը և ցանկութիւն յայտնեց արտագրել այդ, անկարելի էր թանաք գտնել անթիւ վանքերից որևէ մէկում:

Այդ պայմաններում մենք ընաւ չենք զարմանալ եթէ կարդանը որ Տուրի (1103) և Պարիզի (1231) մեծագումար ելեղեցական ժողովներում «Փիղիկայի մասին գայթակղելի շարադրութիւնների ընթերցումը» արգելուած էր:

Բոնիֆացիչ ՎԱՅ պապը (վախճ. 1303), «յորելեանական տարուայ», պատական գահի Փինանսական դրութիւնը բարուոքող այդ ճարպիկ ձեռնարկութեան հանճարեղ գիւտարարը, ար-

\*.) Թէ և պէտք է նկատել որ ինքը Մոհամեդը շատ բաներում սարսափելի տպէտ մարդ էր: Օրինակ, ինչպէս հաղորդում է պըոֆ. Ֆիւրբեր, Մոհամեդը կարծում էր թէ Մովսէսի քոյր Միրիամը և Յիսուսի մայր Մարիամը միւնոյն անձնաւորութիւններն են:

գելեց բժիշկներին և բժիշկ-ուսանողներին՝ մարդկանց դիակ-ներ կտրտելը—պատճառաբանելով մեռելոց յարութիւնը, ինչ-պէս մեր օրերում պապը արգելում է կաթոլիկներին այրել դիակները:

1317 թ. հօանս XXII պապը կոնդակով արգելեց քիմիայի ուսուցումը: Ով, չնայած արգելքներին, ընկղմում էր բնութեան վերաբերեալ խորհրդածութեան և արտաքին աշխարհի հետազօտութեան մէջ—նրան խստիւ հալածում էին, մեղադրում էին կախարդութեան կամ սատանայի հետ սերտ յարաբերութիւններ ունենալու մէջ, և այս կամ այն ձեռով մահի էին դատապարտում: Եկեղեցու բարեխօսների կողմից դարերով սիստեմատիկաբար պաշտպանուող հալածանքը գիտութեան գէմ վերջի վերջոյ գառաւ բարոյական մի համաձարակ, որով վարակուեց համարեա ամբողջ Եւրոպայի աղքարնակութիւնը և պատճառ գառաւ բիւրաւոր անմեղ մարդկանց կեանքից զլրկուելուն: Հոգեկան այդ հիւանդութեան հիմքը ծառայում էր հաւատը դէպի կախարդութիւնը. և այդ վայրագ-մոլեուանդութեան 1659 թուականին միայն Բամբերգ եպիսկոպոսութեան մէջ կենդանի այրուած էին 1200 մարդ, իսկ Տրիր արքեպիսկոպոսութեան մէջ 6500 մարդ: Այդ համաձարակից ազատ չը մնայ և Շվեյցարիան. 1625 թ. Լիւցերնում կենդանի այրեցին 85 տարեկան մի կին, երբ նրբազննին չարչարանքներով ստիպեցին թշուառին խոստովանուել անմիտ մեղադրանքի մէջ: Նոյն թուականին Կաթերին Շմիդլ անունով 11 տարեկան մի աղջիկ «թաշուններ շինելու համար իբրև անուղղա», զազտնի խեղդուած էր աշտարակում. յետոյ գցուած պարկի մէջ և այրուած—այբուբես է վկայում այս քաղաքի մագիստրատի արձանագրութիւնը: Նոյն Լիւցերն քաղաքի աշտարակային գրքում 1644 թուից գրուած է. «Կատրինի անունով 7 տարեկան մարդուկը Աստծուն չհաւատալուն համար խեղդուած էր աշտարակում յատակի վրայ և յետոյ այրուած բարձրագոյն դատարանում»:

Համաձարակը այնքան խոր թափանցեց քրիստոնեայ արևմուտքի հոգեկան կեանքի մէջ, որ նոյն իսկ Լիւցերական բարձրագոյն գպրոցներում սէրը դէպի բնութիւնը համարւում էր իբրև նշան սատանայի հետ ունեցած յարաբերութեան: 1644 թուականին գրուած մի գոկտորական շարադրութիւն, որ կարդացած էր Տիւրինգենի բարձրագոյն գպրոցում, խօսում է «կասկածելի բաների հետ յարակցութեան», այն է «բնութեան հետ յարակցութեան» մասին և մատնանշում է՝ բնու-

թեան հրեոյթների վերաբերեալ գիտութեան վրայ, իբրև քրիստոնեային անվայել մի գիտելիքի:

Այս, այս, Այնտեղ (ս.-զրբում) զրուած է, «Ես կոչացնեմ իմաստուններ՝ իւսատութիւնը և խելացների ռանականութիւնը»

Ուստի վառեցին 100 հազար խարոյիներ, այնպէս որ այրուած կախարդների ճենճերահոտը այժմ էլ լրջնում է լեռնային հովիտները:

Ոչ մի կերպ չէր կարելի շօշափել քրիստոնէական վարդապետութեան հաւատալիքները (գոգմա), որոնք կազմուած էին հին կոտարանի աւանդութիւնների հիման վրայ, աւանդութիւններ, որ եկիդնյու հայրերը և եպիսկոպոսները յայտարարեցին իբրև անհերքելի էին համարում և այդ վարդապետութեաններ, Նմանապէս անհերքելի էին համարում և այդ վարդապետութեան հիմք ծառայող այն զրութիւնները, որոնք երեան էին եկել Քրիստոսից շատ յետոյ, զրութիւններ որ սուրբ հայրերը և եպիսկոպոսները ըստ իրենց քմահաճոյքի սրբագրել էին և յարմարեցրել իրենց նպատակների համեմատ և դրել եկեղեցու սեղանի վրայ:

Քրիստոնէական եկեղեցին տիեզերքի մասին իր աշխարհայեցքը անկասկած հիմնում էր աշխարհի ստեղծագործութեան Մովսէսի պատմութեան վրայ, տիեզերքի կենտրոնում գետնելում էր երկիր որը ամենակարեւորն էր համարում տիեզերական բոլոր մարմիններից, այդ անպայման սխալ հաւատալիքով, արեդակը, լուսինը և աստղերը պատում էին երկիր շուրջ: Այդ սխալ աշխարհայեացքը կոչվում է գեղեցնարիզ (երկրակենարոնականութիւն):

Տիեզերքի մասին Պտոլոմէեան տեսութիւնը յարմարեցը բած էր բիբլիական աւանդութիւններին, ուստի եկեղեցու հայրերը սրբագործեցին այն և ապա համարեան 1400 տարի Պողոմէեան տեսութիւնը արևմուտքում վայելում էր ընդհանուր ընդունելութիւն: Այդ տեսութեամբ երկնքի վրայ ջոկում էին տասնեմէկ շրջաններ, որոնց միջում արեգակը, լուսինը և աստղերը պատում էին երկիր շուրջը \*):

Հաւատացող քրիստոնեանները երևակայում էին տասնեմէկ երկնային շրջանների վերեւում փրկուածների համար «երկինքը», Աստուծոյ բնակալայրը և նրա երկնային զօրութիւնների արքայութիւնը: Տիեզերքի այդ մասը կոչում էին էմպիրէաներ:

\*) Տալմուդի հայեցողութեամբ զոյութիւն՝ ունին 7 երկինք... Մամէդը հրէական բակլիններից է վերցրել այդ սնահաւատութիւնը եօք երկինքների մասին...

Այդ մանկամիտ ցնորքները տիեզերքի կազմութեան մասին տիբրապետում էր արևմուտքում համարեա ոչ ոքից չժխտուելով մինչև 1543 թուականը, երբ երևան եկաւ լեհացի աստղագէտ Կոպերնիկի մտքերի համաշխարհային յեղափոխութիւն կտուարող շարադրութիւնը: Կոպերնիկը բացարձակօրէն յայտնեց և գիտական ապացոյցներով հաստատեց իր հայեացքը, որով երկիրը տիեզերքի կենտրոնում չէ կանգնած, այլ իբրեւ մոլորակ պտտում է, արեկակի շուրջը:

Բոլոր գիտութիւնների մէջ ամենաճիշտը, Աստղագիտութիւնը (աստրոնոմիա) առաջինը մահացու հարուած հասցընց տիեզերակազմութեան Մովսիսական պատմութեան: Աստղագիտութիւնը տիեզերքի մեխոնիկային ծանօթանալով մաթեմաթիկական ապացոյցներ բերաւ որ երկիրը լողում է տիեզերական տարածութեան մէջ ինչպէս մի փոքրիկ թափառական աստղ, իբրև արեգակային մի հիւլէ, մի մասնիկ.

Կոպերնիկը գիտէր որ եկեղեցին չի ուզենալ ճանաչել այդ ճշմարտութիւնը: Վախենալով գիտութեան թշնամի այդ հաստատութիւնից Կոպերնիկը խիզախեց հրատարակել իր շարադրութիւնը (որ վերջացած էր դեռ 1507) միմիայն ծերութեան վերջին տարիներում, երբ արգէն զդում էր իր մէջ մահուան մերձեցումը: Յե տարի Կոպերնիկը իր գիտութեան գաղտնիքն էր պահպանում, նախազգալով որ ճշմարտութեան պաշտօնական հրապարակումից յետոյ հաւատքի ասպետների տանջանաց մերենաների ժանիքները զգալ կը տանց իրանց կատաղութիւնը:

Տորնի այդ աստղագէտը վախճանուեց նոյն 1543 թուականին, հենց որ նրա աշխատութիւնը հրատարակուեց: Բնական մահը նրա համար բարերարութիւն էր, որովհետև եկեղեցին նրա վարդապետութիւնը համարում էր իբրև սարսափելի մի կախարդութիւն. նա բացարձակ կերպով հակաճառում էր հաւատքին դէպի յայտնութիւնը: 57 տարի անց եկեղեցին ապացուցեց որ նման գիտական հարցերում նա հանաքներ չի սիրում, 1600 թուականի գիտարուարի 17-ին Հոռմում խարոյկի վրայ այրուեցաւ իբրև կախարդ այն ժամանակուայ ամենամեծ մարդկանցից և դիտնականներից մէկը—Ժիօրդանօ Բրունօն հոչակաւոր գիտունը և բանաստեղծը, որ այլ յանցանք չէր գործել բացի այն որ իր շարադրութիւնների մէջ նա փառաբանում էր փիլիսոփայօրէն հիմնաւորուած Կոպերնիկի տեսութիւնը:

Կոպերնիկի տիեզերական կազմի տեսութեան յայտարարումից 90 տարի անց եկեղեցին հաւատաքննութեան հնֆար-

կեց Հոռմում այն ժամանակ ապրող փիլիսոփաներից և աստղագէտներից ամենահոչակաւորին՝ Դալբլիքօ Դալբլիքին, որ ստիպուած էր հրաժարուել իր գիտական համոզմունքներից, հրաժարուել տգէտ քահանաների, կարդինալների և ինկվիզիտօր—դատաւորների առջև: Տգէտները ամենահզօր էին և նրանք գիտէին գործադրել իրենց իշխանութիւնը իրենց օգտին:

Սակայն գիտական ճշմարտութիւնը չնայած գրան, աւելի հզօր հանդիսացաւ քան հաւատքը և վերջապէս կոպերնիկը յաղթեց Մովսէսին, այնպէս որ այժմ բոլոր քրիստոնեայ աշակերտներին իրեն ճշմարտութիւն աւանդում են այն, ինչի համար—ժիօրդանո Բրունօն այլունցաւ քրիստոնեայ հաւատացեալների ձեռքով:

Իմ նպատակից դուրս է աւելի մանրամասն ներկայացնել բնագիտութեան զարգացումը անցած դարում: Բնական գիտութիւնները չնայած եկեղեցու թշնամական վերաբերմունքին, չնայած որ մինչև 19-րդ դարը նրան հալածում էին և խոշնդուներ զնում նրանց առջև կրօնական նախապաշարմունքները —սկսում էին ձեռք բերել հզօր ազդեցութիւն:

Դեռ ՀԻ դարու սկզբում Լամարկը ոչ մի հաժակրանք չգտաւ իր ուսուցման՝ մարդուս բնական ծագման մասին, երկու պատճառով, նախ արգելք եղանգլիսաւորապէս կրօնական նախապաշարմունքները մարդկային ծագման մասին և ապա այդ Փրանսիական գիտնականի 1809 թուականին Zoologie philosophe քրքի ոչ բաւականաշափ հիմնաւորութիւնը:

1830 թուականին Պարիզի յուլիսեան յնդափոխութեան ժամանակ Փրանսիական գիտութեան ճեմարանում ընդհարուեցան հրկու հզօր հակառակորդներ—հաւատքը և բանականութիւնը: Հոչակաւոր գիտնական Կիւվիէն, լինելով կողմնակից Մովսէսի աշխարհիս ջրհեղեղի պատմութեան, պաշտպանում էր նոյն իսկ այն միտքը թէ մի քանի ջրհեղեղներ են եղել, Հակառակ հայեացք էր պաշտպանում Ժոֆֆրուա Սենտիլլեր: Այդ բանակուիր իր ժամանակ մեծ ազմուկ հանեց լրագրներում և գիտական յօդուածներում: Եւ Փրանսիական ճեմարանը մի անգամ ևս այդ վէճը վճռեց յօդուածներու թեան: Սակայն դա արդէն վերջին նշանաւոր յաղթութիւնն էր որ տարաւ Մովսէսիական աւանդութիւնը բնագիտօրէն կրթուած մի բարձր գիտական ընկերութեան մէջ:

Նոյն տարին, 1830 թուականի յունիսին, լոյս տեսաւանգիւական հոչակաւոր գրութեան առաջին հրատարակութիւնը, Զարլդ Լէյէլի «Երկրաբանութեան Հիմքերը», որի մէջ ամենապարզ կերպով ապացուցուած էր որ ոչ միայն գո-

ութիւն չունէր Մովսիսականի մտքով մի, էլ ուր մնաց մի քանի ջրհեղեղներ, այլ որ տարբեր երկրաբանական ժամանակաշրջաններում զօրութիւն ունէր օրգանական կեանքի աստիճանորէն առաջադիմող զարգացումը:

Այդ գիրքը տասը տարուայ ընթացքում (1830—1840) տեսաւ վեց հրատարակութիւն անգլիական լիգուով և անկասկած արագացնող աղդեցութիւն ունեցաւ երկրաբանութեան զարգացման վրայ: Իմացուեց որ երկրի կեղեց ունի իր զարգացման ընական պատմութիւնը, որ անցած ժամանակներում ընութեան մէջ գործում էին նոյն ոյժերը, որոնք և այժմ, որ գիտութիւնը ընաւ կարիք չունի հրաշըների, որպէսզի բացատրի մեր երկրի վրայ երեսյթները, որ ընդհակառակը ամեն բան անցեալում և ներկայում կարող է բացատրուել բացառապէս բնութեան մեզ յայտնի ոյժերի գործնէութեամբ և աղդեցութեամբ: Բնագէտների բանակում աւելի և աւելի էին բազմանում ձայներ, որոնք շատ թէ քիչ պարզ ձևակերպում էին մարդու ծագման միտքը: Քանի որ այդ հերետիկոս կարծիքները շփոթ չէին հանում և գիտնականների առանձնասենակներից հրապարակ չէին դուրս դալիս և ժողովուրդը կնում էր իր ճանապարհով լոելեայն հաւատալով հին հէքեաթներին, հեղեցին խոհեմութիւն էր համարում աղմուկ չհանել: Այլ բան էր Դարվինի համաշխարհային պատմական յիշաշրջման նշանակութիւն ունեցող գրուածքի երեան գալուց յետոյ...

(Գերջը յաջորդ համարում)

# Դ Բ Ս Ի Զ Ո Վ Ե Ր

(Պատմուածք)

Երբեք չի պիտի մոռանամ այն սրտմաշուկ կանչուստուքը  
զոր Պուլկարիոյ Ռ.. քաղաքն հասած պահուս փողոցի մը ան-  
կիւնէն կը լոկի:

—Արամ. Արա.. ամ..

Այդ ձայնական հնչիւնը ծանօթ էր ինձ. այնպէս կը թու-  
էր ինձ թէ հոգեսպաս մըն էր, և կամ վիրաւոր մը որ զիս  
իրեն օգնութեան կը կանչէր:

Զայնին եկած կողմը կը վաղեմ սրտաւրոփ ու անհամբեր:

Փողոցին ծայրը խղճուկ անակի մը պատուհանէն դուրս  
ցցուած էր մեռելատիտ գլուխ մը որ կարծես քանի կը մօտե-  
նայի անոր այնքան վերէն վար կը շարժուէր:

Երբ տնակին առջև հասայ կմախացած այդ գլուխը սկսը-  
սաւ շնչաւորիլ ու դեղնորակ այտերուն վրայ սկսաւ նկար-  
ուիլ գժնուակ ծիծաղ մը:

Իր աղեղնածե յօնքերը ու կոր քիթը իսկոյն յիշեցուցին  
ինձի այն երրեմնի առոյդ ու թիկնեղ երիտասարդը զոր կեղ-  
րսական վարժարանին մէջ Առիւծ անունը տուած էինք  
իրեն:

Փըլփլած սանդուխներէն վեր կելեմ քողնտի պատերը  
ինձի զօրավիգ ընելով: Պասաւ կին մը սենեակի դուսը կը  
բանայ ներսէն:

Հիւանդը անկողնին մէջ նոտած էր, երբ զիս տեսաւ  
դրան մէջ, թևերը գէպի ինձ երկնցնելով... «Արամ, եղբայր»

—Արշակ:

Մենք համրոյրուեցանք:

Պոլսոյ 96 ի ահսելի կոտորածէն ի վեր իրար չէինք տե-  
սած. մահաշունչ փոթորիկը աշնան չոր տերեներուն պէս մեզ  
ցիր ու ցան ըրած էր:

Քանի մը հարց ու փորձերէ եաք, որ սովորաբար տեղի  
կունենան երբ երկու բարեկամներ տարիներ յիշոյ իրարու կը  
Փետրուար, 1907,

հանդիպեն, ուզեցի հասկնալ այս գառնագոյն վիճակին մանրաւմասնութիւնները որոնց հնթարկուած էր իր պատաւ մօր հետ: —ինչու անհանգստացնեմ քեզ հղբայր, ըստ: Խոսէ հայինք ինչպէս եղաւ որ այս կողմէրը ինկար:

Համառօտ կերպով պատմեցի իմ մասիս ինչոր կը հետաքրքրէր զինքը.

—Արշակ, ինձ մեծ վիշտ պիտի ըլլայ, ըսի, —եթէ այս տեղէն մեկնիմ առանց քինչ լսելու այս վերջին քանի մը տարուայ աղաբաղդ կեանքիու մանրամասնութիւնները որոնց զոհն ես հիմա:

Խորունցած ու մարած աչքերով սկսաւ հետաքրքրութեամբ ոտքէս մինչև զլուխս զննել: «Որ այդ քան հետաքրքիր ես սանկ քովս նստէ որ պատմեմ», —ըստ:

Ես մօտեցայ իրեն, գրեթէ գիրկ գրկի էինք:  
Նա սկսեց իր պատմութիւնը այսպէս.

\* \*

Քաղաքին մէկ անկիւնը մօրու հետ սենեակ մը վարձած էինք՝ այն տարին վարձու տունները մեծ գին ունէին: Վեց հազար հայ գաղթականներ ապաստարան կը փնտռէին: Տեղացիք օգտուելով առիթէն իրենց զոմերն անգամ քիչ մը մարեկ տալով վարձու կուտային:

Հայրս ծեր էր և հիւանդոտ. Պօլսէն բերած մեր քիչ մը գրամը հատնելու մօտ էլ. տանտէրն ալ կարծիս հոտ էր առած այս բանէն՝ մեզ տունէն կու հանէր:

Քանի մը օրէ իվել էր որ բաղար կերթայի ասոր անոր հում ուտելեղէնները պարկով խոհանոց կը փոխադրէի. շատ քիչ կը վարձատրէին. հազիւ մինչև իրիկուն 40—50 սանթիմ կրնայի փող քսվի բերել: Երբեմն մսավաճանները ու բանջառավաճանները մէկ մէկ քիչ բան կուտային. բայց և այնպէս եթէ տան վարձք չունինայինք, նեղ նեղուածք—բան մը կըլլայինք: Իրիկուն մը երբ պարկը ուսս տուն կը դառնայի, տարիքոտ մարդ մը մօտենալով ինծի, —Մէկ ու կէս ֆրանկ օրական քեզի. մեր ցորենի շտեմարանը կու գամ, ըստ:

Երբ մէկ ու կէս ֆրանկին ձայնը լսեցի «կու զամ կու գամ» ըսի:

Ցեսոյ շտեմարանին տեղը բացատրեց և պատուիրեց որ առտուն ժամը 6-ին անպատճառ երթամ:

Երբ տուն դարձայ տեսայ որ մեր անկողինները ու մանըր մունր առարկանները բակը նետուած էին: Երբ մայրս զիս տեսաւ սկսաւ լալ... Դարիպ երկը մէջ մինուճար մայր ու որ-

գի էինք: Սարսափի տարին արիւնը մինչև մեր տան շեմքն էր հասած, բայց մեր աչքերէն կուտ մը արցունք չէր վազած: Տանտէրը առարկաներուն վերջինը ջրի թիթեղը երբ նետեց բակը, մայրս վազեց ոտքը ինկու:

—Աղա, ըսաւ. դարիպ զուրպէթ այս երկրին մէջ տէր թիկունք չունինք. զաւկիս սիրուն ծերութեանս այս օրերուն լեռներ ձորեր ոտի կոխան եւ ըրած. զուն ալ զաւկի տէր ես: Աստուած պահէ զանոնք, գիտես ինչ բան՝ զաւկի սէրը: Աղա թէ որ կուզես տանդ ջրկիրը կը դառնամ, երախաներդ թեւրուս վրայ օրնիբուն ման կածեմ, միայն թէ մէկ երկու ամիս ես:

Տանտէր որ մինչև այդ պահուն վայրագ գէմք մը առած էր սկսաւ կամաց կամաց մեղմանալ ու դառնալով մօրս յարեց.

—Ինիկ, աղէկ կըսես, առա մեզի ալ արդէն տունը նեղուած կու գայ:

—Աղա ի սէր Աստուծոյ, —կրկնեց մայրս, —հարկաւ մէկ երկու ամիսէն մեր թշուառ երկրին վրայ լոյս կը կաթի, ինչպէս եկանք այնպէս ալ կերթանք: —Խեղճը կը հաւտար այդ մէկ երկու ամիսէն ըլլալիք փոփոխութեանն...

—Որ այդպէս է, ըսաւ տանտէրը, մնացէք պայմանաւ որ ամսականները օրին վճարէք:

Մենք կըկին կամ կարասիքը վեր փոխագրեցինք. երբ մենակ մնացինք մայրս դառնալով ինծի ըսաւ. «Բնչ ընեմ զաւակս»...

Հիւանդը մէկ բանի վայրկեան հանգիստ առնելով շարունակեց.

Ամիս մըն էր որ Անկելօփի ցորենի շտեմարանը կաշխատէինք. մենք քառասուն հոգի էինք. ամենքս ալ գաղթական հայեր. շտեմարանի ցորենը պարկերով փոխագրանաւերը կը տանէինք. օգերը ցրտի սկսած էին. առջի մէկ քանի օրերը ես շատ նեղուեցայ: Իրիկունները երբ տուն կը դառնայի մայրըս միշտ զբաղած կը գոտնէի:

Տանտիրոջ կամ ջուր կը կրէր և կամ կաշխատէր երեխաներուն լացը կտրելու. ամենէն փոքրը օրն ի րուն կը ճղար. շատ գիշերներ օրօրոցին քով զլիահակ կը լուսցնէր: Մայրս օր բատ օրէ կը հալէր կը մաշէր. ես այդ կը տեսնէի:

Ընդունած օրավարձս հազիւ մեր ուտեստին ու տան վարձին կը բաւէր, վառելափայտի համար շատ նեղութիւն կը կրէինք. գիշերները ցրտէն չէինք կընար շատ անգամ քննաւ: Կիրակի օրերը մօրս հետ կերթայինք գետ ափին փայ-

տի կտրուանքներ ժողուելու։ Օր մը երբ դարձեալ դետ ավո իշած էինք, մայրս ինծի գառնալով։

—Այս գետը մեր Եփրատէն շատ մեծ է, բայց ուր են անոր եզերքի ծառաստանները ու պարտէղները. այս տեղ բան չիկայ չոր ցամաք տեղուանք են։—Միտքդ կուզայ, Արշակ, մեր պարտէղը Շուրիսան, Քարտաքը։ Այս վերջին բառը հնչած պահուն, Արամ եղայր, մարմինս փուշ փուշ եկաւ, ես իսկոյն յիշեցի այն դժբախտ օրը, երբ հայրս կը հեռանար մեղմէ, ալ չի վերադառնալու պայմանաւ։

Այդ պահուն խղճէ խայթ մը զդացի որ հիւանդը հոգեւ պէս ու մարմնապէս կը չարչտկեմ։

—Այդպէս կը լայ, Արշակ, ընդհանրապէս, ըսի, երբ մարդ տակաւին զգացումներու տարիքին մէջ կապրի։

Կոնակի բարձը կողին տակ դրաւ ու երկար շունչ առնելով շարունակեց։

—Ամեն գեղացի տնուոր այս վայրին հետ տխուր յիշատակներով կապուած է, Քարտաք, այս այն վայրն է ուր զեղացիք այլ հս կը դադրեն ընկերակցելէ զուրպէթ գնացողներուն։

—Արշակիս լաւ նայէ. այս եղած էր հօրս վերջին խօսքը մօրս ուղղուած։ Անցած են շատ տարիներ այնօրերէն, բայց ես տակաւին անոր ձայնը ականջներուս մէջ կը լսեմ. ճակտիս վրայ տակաւին կը զգաւ հօրս վերջին համբոյրին ջերմութիւնը, կը յիշեմ ըսի «մայր ինչ կայ որ»..—Ոչինչ, ըսաւ. այդ տաեն իրեն նայեցայ տեսայ որ քանի մը կաթիլ արցունք վար կը գլուրէին...

Ցուրտը այն տարին օրէ օր կը սաստկանար. փոթորիկը աւերներ կը գործէր. եթէ փոթորիկը 3—4 օր ևս շարունակուէր Դանուբը անկասկած պիտի սառէր ու նաւային երթնեկութիւնները պիտի դադարէին։

Մեր շտեմարանատէրը ահ ու դողի մէջ էր, անիկա այն ցորենի որոշեալ քանակը չէր կրցած տալ տակաւին Թուճէր և Թօմք. ընկերութեան. Պայմանագրութեան մը համաձայն մեր շտեմարանատէրը պարտաւոր էր այդ պարագային իրը փըրկանը վճարել խոշոր զումար մը. ոտքէս մինչև գլուխ կրակ կտրած ան մէկնաւ կը վազէր, մէկ շտեմարան, «պիտի կորսուիմ.. պիտի կորսուիմ» կը պոռար. Ամեն անգամ որ ցրտաշունչ քամին կը փչէր ու ձիւնը բորան կը նէր ակուաները կրծատելով աչքերը վեր կը բարձրացնէր. «ոհ, Աստուած, պիտի կորսուիմ» կը հառաչէր. վայ անոր որ ծոէր տրեխին կապը ամրացնելու, իսկոյն կստանար ուսին խարազանին հարուածը։

Բարեբախտարար ըսեմ կամ դժբախտարար այդ տարին Դամուրը չի սառեցաւ, թէպետև ձմեռը երկար տևեց. մեր օրականներուն վրայ փոքր յաւելում մը եղած էր: Այս կարգադրութիւնը մեզ շատ ուրախացուց, նամանաւանդ զիս: Ես կը մտածէի որ վերջապէս պիտի կարենամ մօտ ժամանակուայ մը մէջ ծեր մալրս աղատել օտարին դուռը ծառայելէ. բայց այս ուրախութիւնը լոկ երազ էր:

—Մարտ ամսոյ մէջ էինք. երբեմն հրբեմն արև կելէր և օդը բաւական կը տաքնար, ձիւները հալիլ սկսած էին: Մէկ քանի օր ևս և ահա գարուն էր:

—Օր մը երբ կէս օրուայ մօտ վերջին բօսթան կընէինք, կամ ըջակը, որ յամաքը նաւուն կըմիացնէր, ճռնչիւնով մը երկու կտոր եղաւ. ևս և ինձ հետ մէկտեղ երկու հոգի ևս թաւագլոր ինկանք գետին մէջ. ևս մտքովս ըսի «գացինք»...

Երկու ժամ ետք ինքզինքս մերձակայ զրասենեակը կը գտնեմ. ևս նոււղած էի. սարսափելի իրականութիւնը կը պարզուի առջիս, ջուրին յատակը ապառած քարերէ կազմուած ըլւալով սրունքներս ջախջախուած էին և կոնքս վասուած: Ընկերներէս մին անյայտացած էր, իսկ միւսն ալ անկենդան քովըս փոռուած: Յետոյ զիս պատգարակի մը վրայ դրած տուն կը փոխադրեն:

Երբ մեր փողոցին մօտեցանք, տեսայ մայրս որ տան տիրոջ երեխան գիրկը դուան առջև կեցած էր. երբ զիս տեսաւ՝ երեխան գրկէն վար նետոց ու «եավրում, եավրում. ի՞նչ եղաւ քեզի» կանչելով պատգարակին վրայ խպացաւ. երբ ջախջախուածունկերս տեսաւ. «չորնամ կոտրտիմ. եավրում հոգերը մտնէի այս գէշ օրդ չի տեսնէի», ըստաւ.

—Եավրում չորս օր չորս գիշեր հաւք եղայ քեզի թևերուս տակ առի, զուլումի օրերուն պահեցի պահպանեցի, մինչև բերի հասցուցի այս աղատ երկիրը որ այսողէս ըլլայիր, թու հու հու ու ու—սկսաւ բարձրածայն ճշուածել: Դրացիները քաշեցին մի կողմ մայրս «բան չի կայ» ըսկելով կը մխիթարէին:

Ես այդ պահուն հասկցայ պատճառը թէ ինչու հիւանդին սրունքները երբէք չէին շարժիր և, երբ երբեմն երբեմն կը հալէի անոնց, կարծրացած նիւթերի մը տպաւորութիւնը կառթէին ինձի:

—Շահմարանատէրը այն ժամուն իսկ երկու վիրաբուժ խրկած էր, որոնք սրունքներս բարակ տախտակներով ու զանով լաւ մը փաթթեցին. իսկէ, երեք ամիս ետք թէպետև ջախջախուած տեղերը իրարու կողաւ, բայց և այնպէս անկարող

Եղայ մինչև հիմա ոտքի վրայ կենալու։ Ահա սիրելի եղբայրու հոս կը վերջանայ քեզ հետաքրքրող պատմութիւնս»։

Հսկաւ խոր մտածմունքի մէջ ընկղմիլ. յանկարծ դուռը բացուեցաւ. պառաւ կին մը ներս եկաւ. Այս այն պառաւն էր զոր սենեակին դուռը բացած էր ինձի։

—Ե՞նչ կը մտածես զաւակս, ըստաւ դառնալով հիւանդին, «ազատ երկրի մէջ ենք», գոհանամ Տիրոջը. աչքիդ վրայ յօնք կայ ըսող չի կայ. աւուր գտնենք, աւուր կուտենք։ Վաղը կերթամ ժամուն դուռը կը նստեմ քեզ օտարին կարօտ չեմ ըներ...»

—Այո, մայր, «ազատ երկրի» մէջ ենք. դուն ժամուն դուռը, իսկ ես անդամալոյծ անկողնոյն մէջ...»

Աղատ երկրի մէջ ենք...մուֆ...

Գաղթական

## ԺԱՄԱՆԱԿԱԻՑ ԷՍԿԻԶ

Երկչու, շնչառպառ, հազիւ իրան զսպելով՝ այդ քնքոյց նրբակազմ, դիւրարեկ էակը՝ տժգոյն, յոգնած գէմքով, որի վրայ փայլում էին մի զոյգ հիւանդոտ տենդային աչքեր, մրմնջում էր, օգնութիւն աղերսում։

Վիշտը, կակիծը խեղղում էր կուրծքը... նա առաջ ապրում էր համեստ, բայց անկարօտ։ Անմիտ և արիւնազանդ թուրք-հայկական մզձաւանջը ամեն ինչ խորտակեց... և երջանկութիւն և խաղաղ կեանք... Աժուսինը սպանուած է, գոյքը՝ թալանուած... ինքը փողոց նեստուած հինգ փոքրիկ անօգնական արարածների հետ միասին, որոնք միայն իրան են նայում, իր խնամքին կարօտ։ Յուրատը և քաղցը տոչորում է փոքրիկ, նիհար մարմինները... Ո՛հ, անշուշտ, նա պատրաստ է լարել իր ոյժերը՝ աշխատել մինչև վերջին շունչը՝ գիշերներն անքուն, նոյնիսկ քարեր քաշել մէջքին, միայն թէ հնար լինի մանկիկներին չքաւրութեան սուր ճանգերից ազատել։ Սակայն, զործ չկայ, չկայ յոյսի նշոյլ անդամ։ Բիւրաւոր թշուառներ աշխատանք են փնտում. աւաղ, ապարդին... Քարացած կըծքով երջա-

նիկների տուած օգնութիւնը չոր հացի բաւականութիւն չի տաշիս... Ի՞նչ անի, ում դիմի:

Փոթորկահար եղած զողովրդիւն եղնիկի նման՝ նա երկչուտութեամբ դիմում է իր շուրջը, բևեռում իր աղերսադին հայեացը դիմացինի վրայ: Ծով-տառապանք է անօդնական թախծուտ աչքերում:

Եւ վախկոտ եղնիկի մարմնի զեղեցկութիւնը նկատեց փողով յզփացած մարդ-վագրը: Նա իր կրքոտ հայեացքով զննում է զոհին, գնահատումնրա մարմնի արժեքը:

Եւ զոհը՝ մեխոււածի պէս կանգնած՝ սրտատրով սպասում դատավճուին: Սակայն իրան ուղղած վաւաշոտ, զննող հայեացքի մէջ, զիթութիւն չէ ցայտում, չկայ ցաւակցութեան նշոյլ, այլ անասնական կիրք է փայլում... թշուառի արտեանունրները խոնարհւում են, մարմինը ցնցւում է դողից: Մութ քնազդով նա զգում է մօտալուտ վտանգը:

Բայց ուր վախչի, ելք չկայ...

Տանը սպասում են որբիկները, մեկնում փոքրիկ ձեռները և այնպէս, այնպէս սրտանմիկ նայում:

Ո՞հ, տխուր, վշտաբեկ դէմքեր... Ո՞հ քարացած, անասնացած սրտեր: Արտասունքը փայլում է խեղճ կնոջ աչքերում, խեղդում է կոկորդը, իսկ «փրկիչը»՝ յանդուգն, ինքնավստահ՝ փաթտթւում է նրանով, զգուանքով նայում աչքերի մէջ, հիսկնոում՝ ինչպէս թունաւոր օձը վախկոտ թռչնակին:

— Բաղցած են, մե՞րկ են երեխաներդ... հանգիստ եղիր, ամեն ինչ կը կատարեմ, միտոյն ժպտա ինձ...

Պողպատի նման ձկուն ձեռքերը վաւաշոտութեամբ գրկում են կնոջ մարմինը, ամօթխածութեան զողը ծփուն ալիքի նման վազում է, թափանցում ամբողջ էութիւնը, միախառնում երկիւղին: Կըծքից դուրս է պոռթկում սպանիչ տանջանքի ձիչը: Վերջին փորձն է անում վախչելու, անդարձ վախչելու սոսկալի անկումից:

Սակայն նրա տկանջում հնչում են խոնաւ նկուղում թուզած մանուկների սիրտ մզկտող մրմունջները: Կիսախուփ աչքերով տեսնում է կիսախաւար մասնի բորբոքը — իր այժմուայ ողորմելի անկիւնը: Մօր տանջանքը մաքասում էր կնոջական ամօթխածութեան հետ: Փրկութիւն չկայ...

Վերջին գաճնձը՝ պատիւը՝ զոհ զնաց անողոք Բահաղին...

Ոճրագործի պէս զլուխը խոնարհած, մեռեալի նման դունատ՝ դուրս է թռչում, ձեռքումը ամուր սեղմելով խայտառակութեան զնով առուած գրամը՝ խելացնոր վազում է նա այդ վագրի գրկից, կարծես յետեկից վազում լինէին չար ողիների

վոհմակներ, պաշարում, ողջունում դիւային քրքիջով կորստարեր անկումը:

Բայց... փարփառքիներ, այդ խայտառակութիւնը ունեն էր, եթէ ոչ փողով յդփացած վագրեր մնուցանող հասարակական արդի նզովեալ կարգերի...

Ե. Բահամիուր

### ՄՕՏԻԿ ԱՆՑԵՍԼԻՑ \*)

Ճշգրիտ կերպով պատկերացնելու համար «հայ ազգի բախտի» վրայ մտածող եօթանասունական թուականի թիւբահայ ազգասէր ջոջերի հայեացքները և այն ժամանակ տիրող հասարակական հոսանքները՝ մենք ձեռքի տակ չունենք բաւականաչափ նիւթեր: Այդ ստիպում է մեզ առայժմ կանգ առնել մի քանի փշրանքների վրայ, մինչև որ յաջողուի լրացնել նիւթերի պակասը:

Մենք յիշել էինք որ Պոլսի ազգայինների մէջ կային «խոնհուն գլուխներ» էւ, որոնք չէին ուզում տանուել աւանտիւրներով, թեթևսուիկ զգայ մունքներով: Հետաքրքրական է այդ կողմից «Մանզումէ էֆքեար» լրագրի խմբագրի, Կարապետ Փանոսեանի, մասին պ. Գ. Նիկողոսեանի յիշողութիւնները, («Զարկ», № 2, 3 և 4) որից քաղում ենք մի քանի կտորներ.

«29 տարի առաջ Ռուսաստանը պատերազմ յայտնեց թիւբիային՝ իր գարաւոր ձգտումները վերջնուկանապէս իրագործելու համար, այն է՝ տնկել ուղղավառութեան խաչը Այտ-Սօֆիայի գմբէթի վրայ և գարձնել Բիւզանդիոնը եւրորդ մայրաքաղաք սուսական կայսրութեան: Մրանով պիտի իրականանար Եկատերինէ կայսրունու փայփայած քաղցր երազը: Խնամօեայ յամառ պատերազմի յաղթական ելքը չունեցաւ սակայն ցանկացած յաջողութիւնը. անդիմական նաւառորմիզը մտաւ Բոսֆոր և սահպեց սուս զօրքելին կանգ առնել Սամ-Սակիանոյում: Բոլղարների պատճառով կ. Պոլիսը սպառնալիքով ձգած,

\*) Տես 1906 թ. № 4, 5, 6, 7, 10, 11, 12.

ելած ոռւսական գեսպան զեն, իգնատիեվը ոռւսաց կողմից լիազօր նշանակւեց Սահքանօյում հաշտութեան պայմանները մշակելու և ընդունել տալու: Պայմաններից մէկը եղաւ Տաճկա-Հայաստանի գրաւած մասերի պահպանումը այն պատճառաբանութեամբ թէ՝ ոռւս զօրքերը չեն դուրս գալ Հայաստանից, մինչև որ քրիստոնեաների վիճակը լիովին շապահովուի քիւրզերի և չէրքեզների հարստահարութեան կողմից (գաշնազրի 16-րդ յօդուածը): Երբ Խորէն Նար-Բէյը ուղարկւում է Ներսէս պատրիարքի կողմից Սան-Ստեֆանօց գեն, իգնատիեվին ծնկաչոք խնդրելու համար, որ չմոռանայ Հայաստանի ժողովը զինակի ապահովութեան խնդիրը զաշնազրի մէջ մտցնելիս, իգնատիեվը ասում է Նար-Բէյին. «Ո, թողանհոգ մնայ տոնseigneur Ներսէսը, հայերի հոգը այնչափ քաշում եմ, որ արդէն մացրել եմ անհա այս յօդուածը»:

Իշխան Բիսմարկը և Յօրդ Բիկոնսֆիլդը ոխերիմ հակառակորդներից գառնուում են յանկարծ սիրավաս բարեկամներ և օգի մէջ գրկախառնուելով խօսքը մէկ են անում նստացնել Ռուսաստանը մեղապարաների նստարանի վրայ Բենլինի վեհաժողովում և վերաքննել Սան Ստեֆանօյի գաշնազիրը: Հայրենասէր Ներսէսը իր մի քանի ազգեցիկ համախոհներով թէ է առնում և հետեւով գիւանալիւտութեան այն սկզբունքին թէ՝ «ամեն միջոց ներելի է նպատակին համելու համար», ծրագրում է Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան յատակալիթը՝ Բերլինի վեհաժողովովին ներկայացնելու համար: Իսկ թէ մի կողմից այլ կատարութեան ու կատաղեն ոռւսները, զրա մասին հոգ չի առնում Ներսէս Վարժապետեանը, յոյսը դնելով եւրոպական արիսլավիսի աջակցութեան վրայ: Խրիմեան Հայրիկը, Մինաս Զերազի հետ ընտրւում են պատրիքակ Բենլինի վեհաժողովին ներկայանալու համար, իսկ Խորէն Նար-Բէյը՝ Պետերուրուրդ գնալու և իշխան Գորչակովին սիրաշահելու համար:

Պատմական այս նշանաւոր բողէին է, որ հնչում է Կարապետ Փանոսիանի ձայնը «Մանզումէլի Էֆքեար»-ի և Ազգային Ժողովի մէջ, ինչպէս վիրաւորուած ասիւծի մի մանչիւն. «Խոյնչ էք անում, ուր էք տանում ազգը, սկազբութիւնը և ինքնակոչ զիւանապէտներ, զոչում է նա. ո՞վ կը տայ մեզ ինքնավարութիւն, որի՞ վրայ էք գնում ձեր յոյսը, — այն շահամոլ և նենդ Եւրոպային վրայ, որը ու-

զում է պահպանել Թիւրքիայի գոյութիւնը իր շահասիւրական նպատակների համար: Բեսլին ուստուիրակութիւնուղարկելով չը որ հայ աղջի կատաղի և անհաշտ թշնամի պիտի դարձնէր Թիւրքիան, որի մէջ մեր տկար տեղովը 4—5 դար լաւ թէ վաս կարողացել է պահել իր կրօնը, լեզուն և բոլոր յատկանիշերը: Քանի Թիւրքիան տկարացել է, այնքան հայերը աւելի ոյժ են ստացել և բարուղել իրանց վիճակը. ընդունակ, ժիր և զործունեայ հայերի համար այսուհետև աւելի լայն ասպարէզ պիտի բացուի՝ մեղկացած և ծոյլ տաճիկների մէջ իրանց ձիբքերը փայլեցնելու, տնտեսապէս զարգանալու և ազգային իրաւունքները ընդլայնացնելու համար: Անզգուշութիւն է և մեծ վտանգ՝ Թիւրքիայի ձգնաժամին մի կից էլ նրան մեր կողմից տալը. այդ տմարդութիւնը նա երբէք չի ներիլ մեզ և մենակ մնալով ոտի տակ կը կորչենք, վատշուեր և անմիաբան եւրոպան մեզ շի օգնիլ, խոկ Ռուսաստանը ևս կը դառնայ մեր ահարկութիւնը մին: Միք հաւատալ Թիւրքիայի պետական մարդկանց սիրալիլ ժպիտին և պատրաստական հաւանութեանը՝ Բեռլին պատեիրականութիւն ուղարկելու մասին. այդ մարդիկ ուզում են փորձել մեզ և մեր հաւատարմութեան իսկական չափը ճանաչել: Միք հրապուրուիլ ևս իզմանատիկի հայասիրական խօսքերից. 16-րդ յօդուածը նա սեր սիրոյն համար չի մտցրել, այլ մեր հայրենիքի մի չաղ պատառը կուլ տալու համար. կատուն սուկն է բանում ոչ տանտիրոջ սիրոյն համար. այլ իր փորի համար, այդպէս էլ է զիւանագէտների իրեն թէ արած լաւութիւնը: Բեսլին պատւիրակ ուղարկելը հակա-թրքական և հակառուսական մի ցոյց պիտի նկատուի, որից բացի զնաս, ուրիշ արդիւնք չպիտի ձեռք բերենք. ինչու դիմել անտեղի և զնասաբեր ցոյցին, երբ կարելի է, եթէ անհրաժեշտ հարկ կայ միայն, աղերսագրերով մտերմարար յայտնել մեր ցաւը եւրոպական կառավարութիւններին, զործի զլուխ կանգնած նրանց գիւանագէտներին և խնդրել, որ բարեկը չշուայլին միայն բոլղարների օգտին, որ գործիք են Ռուսաստանի տիրապետող բաղաքականութեան. մեր ազգը չի ուզում այդ գործիքը գառնալ, այլ փափակելով հաւատարիմ և անբաժան մնալ Թիւրքիայից, աղերսում է միայն դաշնագրութեամբ բարուղել իր վիճակը և քաղաքական ինչ-ինչ արտօնութիւններ տալ նրան»:

«Սրբազն հայրեր, ի սէր Աստուծոյ, ի սէր աղջի ա-

պագայի, լաւ մտածեցէք, լաւ կշուցէք ձեր անելի քայլը՝ եթէ անդառնելի է ձեր որոշումը Բերլին պատւիրականութիւն ուղարկելու վերաբերմամբ, գոնէ Պետերբուրգ միք զրկիլ դրանով աւելի ևս կը գրգոէք Թիւրքիային և կը չեղոքացնէք Բեռլին պատւիրակութեան կասկածելի արդիւնքը։ Ազգային ժողովի երեսփոխաններ, հայ գործողներ, հայ մտածողներ, հայ ժողովուրդ, ձեզ եմ դիմում, ձեր մասնակցութիւնը ձեր խորհրդածութիւննը, ձեր որոշումները խնդրում՝ ազգային կեանքի այս հանդիսաւոր վայրկենին, այս մեծ ճգնաժամին, հայրենիքի բախտն է վճռում, ապագայ սերունդների ճակատագիրն է տնօրինուում. պատասխանատու ենք պատմութեան և մեր խղճի տուաջ. թեթեամիտ չգտնուենք և աղքագործան դաւաճանների դեր գիտակցաբար չկատարենք»...:

«Կեսարացի հայրենասէրի հուժկու ձայնը փոխանակ սթափեցուցիչ աղդեցութիւն ունենալու՝ վառօդաբանի վրայ ընկած կայծակի սոսկալի պայթիւնն է առաջ բերում. հունդուս Ներսէսի տաքալուխ գործակաները դժոխային աղմուկ բարձրացնելով գրգում են, բորբոքում մի քանի հազար գաւառացի բեռնակիրներին և քշում Դալաթիա՝ «Ճամանիչ և դաւաճան» Փանոսիանի գոյութիւնը հողի երեսից վերցնելու համար. Կատաղած բեռնակիրներին միանում է խաժամուժ ամբոխը և պատու Դալաթիայի Փերշեմբէ-Յազար թաղամասը, որտեղ գտնվում է «Մանգումէի էֆիհար»-ի խմբագրատունը. բիներով և քարերով ներս են խուժում մոլեգնացած բեռնակիրները՝ Փանոսիանին տեղնուածեղ ջախջախելու և բարկոծելու համար, բայց նրան խմբագրատանը չեն գտնում. Պայրոյթները շիջուցանում են տպարանի վրայ և ջարդում, փշրում տպարանի բոլոր մեքենաները և տառերը, մտնում են գրադարանը, պատառ-պատառ անում գրեերը, լրագիրների կոյտը և բոլոր փողոց նետում, «անկցի Փանոսիան, ման դաւաճանին» գոռալով ցըւում։

Մի քանի օր անցած՝ կրքերը խաղաղում են և Կ. Պոլսում բնակուող մեծաթիւ գաւառահայերը, մանաւանդ կեսարացիք, որոնք կ. Պոլսում դիրք ունեցող մարդիկ են և առաջնակարգ տեղ են բոնում, սաստիկ յուզւում են և զայրանում իրանց պաշտած անձի՝ գաւառահայերի անձնուէր ինամատարի և աներկիւդ պաշտպանի գլխին եկած խայտառակութեամբ. Պատւիրակութիւն են ուղարկում Փանոսիանին միիթարելու և քաջալերելու համար։

Փանոսեանը հիւրնկալուած է լինում պետական խորհրդի անդամ, իր բարեկամ Սայիդ-բէյի (վերջերը յայտնի եպարքոս Քուչուկ Սայիդ փաշայի) ապարանքում...

«Միթէ չունիմ իրաւունք իմ համոզումս յայտնելու, ասում Փանոսեանը, երբ մեր հանդէպ կանգնած է՝ մեր ազգի ապագային վերաբերեալ մի այսչափ ծանրակշիռ խնդիր (ունէք ունէք, Փանոսեան էֆէնդի, հազար անգամ ունէք, ձայն են տալիս պատգամաւորները): Հապա ինչու այսպիսի հաւածանք իմ դէմ. ինչու ինձ մեոցնել բարոյապէս և նիւթապէս. ինչու խայտառակել մեր ազգը օտարների առաջ. ինչու զինել ինձ դէմ այն ժողովուրդը, որի համար ես ապրել և որի համար կուզեմ աշխատել մինչև կեանքիս վերջը...

Փանոսեանի դրամատիկական դէպքից շատ ժամանակ չանցած կազմւում է Բեոլինի վեհաժողովը. Արիմեան Հայրիկը Մինաս Զերազի հևտ ուղեսուում է Բեոլին, իսկ Ասորէն Նարբէյը՝ Պետերբուրդ. քէչ յետոյ Բեոլին է ուղարկւում ևս ազգային ժողովի պատուհաս, որին Գրանտիացիք են ասում, Մաեփան Փափազեանը, որի ձեռքից ուզում է ազատուել Ներսէս պատրիարքը. գլխից հեռացնելով: Նարբէյը աճապարում է Ներկայանալ իշխան Դորչակովին, որ խնդրէ հրահանգներ տալ. Ռուսաստանի ներկայացուցիչ վեհաժողովում կոմս Պաւէլ Շուվալովին՝ հայոց գատը պաշտպանելու վերաբերմամբ: Իր ոռուսասիրութեամբ յայտնի Նարբէյը բնաւ չի երկրայում թէ սիրալիք ընդունելութիւն կը զանէ Դորչակովի կողմից, բայց մեծ է լինում նրա հիասթափումը, երբ Դորչակովը ընդունում է խիստ թթու երեսով: Նարբէյը քերանը բանում է, որ խօսի, Դորչակովը ընդհատում է նըրան այս գիտուղութեամբ. «Խնդրեմ դիպլոմատիա—գիւտնագիտութիւն չխաղալ ինձ հետ տոնսեigneur, ձեր պատրիարքը զբկել է Բեոլին իր մարզիկը, թող նրանք պաշտպանեն ձեր գատը Ռուսաստանի ոխերիս թշնամիների առեան առաջ»: Նարբէյը ևս ներում խնդրելով ընդհատում է Դորչակովի խօսքերը և տաշ քշում՝ տաճկահայերի կողմից ոռուսական զօրքերին մատուցած պէս-պէս ծառայութիւնները, հայազգի զօրավարների տարած յաղթութիւնները, և այլն, և այլն: Դորչակով գէմքը փոքր պարզում է և նա հաւանութիւն տալով Նարբէյի յայտնածներին ասում է. «Թէի Ռուսաստանը գառն փորձերով տեսած է, որ լաւութեան փոխարէն տպերախտու-

թիւն է ստացել (ակնարկելով յոյներին և սլաւոն պղեն-րին), բայց Նորին Մեծութեան, իմ Տիրոջ կողմից, խօսր եմ տալիս ձեզ՝ անել ինչ միայն կարելի է, Թիւրքիայի հայերի համար, միայն... Բերլինի վեհաժողովի վերջաշնալուց յետոյ: Յատկնայն դէպս հարկ չկար Բեռլին մարդիկ զրկելու, որոնց միջամտութիւնից Թիւրքիայի հայերը աւելի կը տուժեն, քան թէ կը շահեն:

Հասնում է Բեռլին և մեր գուառնեղ ու պիրճախօս Հայրիկ-ջանը ներկայանում է Բիսմարկին, պատուասիրուում է նաև Վիլհելմ կայսեր կողմից, բայց նրա բոլոր պիրճախօսութիւնը փշտում է Բիսմարկի ողող դիտողութիւնից թէ՝ «որեւէ քաղաքական իրաւունք պահանջելու համար պէտք է ներկայանալ գեսավանաժողովին (որի նախագահն էր Բիսմարկը) ոչ թէ խոնարհ աղերսագրով, այլ Չերնագորիայի ներկայացուցի պէս յաղթական սրի վրայ կըթած...»

Խրիմեան հայրիկը Բիսմարկի խօսքերը հալած իւզի տեղ ընդունելով՝ Բեռլինից գնում է Լոնդոն, Փարիզ, Հոռոմ և վեռագառնում կ. Պոլիս: Կ. Պոլոսի և գաւառացի հայերը հազարներով խունում են Գում-Դավուքի մայր եկեղեցին՝ Հայրիկի բարոզը և «Եւրոպայէն բերած ցնծալից խոպրիկները» լսելու համար: Քարոզի մէջ Հայրիկը, ի միջի այլոց, հետեւեալն է ասում, զիմելով գաւառահայերին, «Մա, Խայտատանցի ախպրտիք, գիտես որ Խայրիկէն մենծմենծ բաներ կը սպասէք. կ'ըսէք թէ Խայրիկը նախարարների, թագաւորների խետ է խօսեր և մեր ցաւերը ամենեցուն աղէկ յայտներ. մեր ուզածն ալ ամենեցուն աղէկ մը պարզեր. հասկուցեր է, անոնք ալ բրիստոնեայ և փարեսէր մարդիկ, հարկաւ, խօսք տւեր հն Խայրիկին, մեր ուզածն կատարել: Ես ալ ձեզի պէս կը մտածեի, ձեզի պէս կը յուսայի, սիրելի ժողովուրդ, բայց տակէն ուրիշ բան էլաւ. կըսէք թէ ինչ բան. դէ, ըսեմ, լուհեքը, Փեռլին Փիսմարքէն, որին ամբողջ աշխարհ փիս մարդ մը ճանչած է, ինձի փարեկամաբար խելոնք խորհուրդ մը տուաւ, փայց այս խորհուրդը այլափանօրէն կը պարզեմ ձեզի. դէ, փայցէր ականջնիդ, սովէկ մը լուեցէք, ու աղէկ մը հասկըցէք:

«Փեռլին մեր եղած ատեն Փիսմարքն մի՛-ենձ ճաշկեւ լոյթ մը սարքեց երկիրներէ էկած հիւրերուն խամար, ես ալ, մեր Չերազն ալ հոն էինք. զսնագան համեղ կերպուրներ թրին սեղանին վրայ, փայց ես չկրցայ ու-

տել, զադ, զփիփես շատ էին լուցուցածը մէջ. վերջն ալ զարմըցայ, երփ սեղանին վրայ թրին մի մե-ենձ աման Խայաստանի մեր խամով խարիսէն, փայց ոչ մէկուն թըրքալ չը ոււին: Տեսնեմ ամեն մարթ հանեց իր քրպանէն մէյ-մէկ երկաթէ թրքալ ու սկսեցան ախօրժանօք ուտել: Ճարս կտրած ես ալ հանեցի քրպանէս խասութուղթ մը ե թըրքալի ձև տալով, խոթեցի ամանին մէջ. որ վերցնեմ խարիսէն և ուտեմ: Փայց որչափ ամչըցայ, երփ թրքալը խարիսէին մէջ խրած մնաց և ամենքն ալ ծիծաղեցին վրաս: Ճաշէն զկնի Փիսմարքն մէկթի առնելով զիս, ըստ ինձի փարեացակամութեամբ. «սրբազան խայր, ասիկա թող քեզի աղէկ խրատ ըլլայ, որ ուրիշ անքամ եւրոպա քալած ատեն: խետ էրկաթէ ամուր մը թրքալ վերցունես: Չիտեմ, սիրելի ժողովուրդ, հասկցաբ ըսածներուս իմաստը»:

Հուժկու բեռնակիրների որոտնդոստ ձայները թնդացնում են տաճարը. «հասկցանք, հասկցանք, կէցցէ Խայրիկը» աղաղակելով:

«Կը ճանաչեմ ձեր ուշիմութիւն, խրթին ալ խօսեմ, զիտեմ որ շուտ կը խասկընաք, թէն, օրհնեալ ըլլաք, փայց պահ մը կեցէք, խօսքս թեռ չը վերջացուցի: Փեռլին քանի մը վարպետ փշէնիներ ալ տեսայ և խետները մեր աղգի խիւանդութեան մասին խօսեցայ. ամենքն ալ ըսին թէ փայտէ թրքալով ապուր ուտելլը զանազան խիւանդութիւններ յառաջ կը բերու, պէտք է, ըսին, փշրել, նետել փայտէ թրքաները և անոնց փոխարէն էրկաթէ թըրքաններ բործածել. կըսէք թէ՝ ուր տեղէն էրկաթ քըթնենք, քթնենք ալ ինչպէս թրքալ շինենք, երբ վարպետներ չունինք: Խայաստանի լեռներուն մէջ էրկաթէն աւելի ալ ինչ կայ և թրքալ շինելէն ալ թիւրին ալ ինչ կայ. փայց եթէ չը կըսանք եւրոպական ճաշակով թրքալներ պատրաստել, անոնց վարպետութիւնն թիւրաւ կը սովորիք, իսկ փարա ունեցողն կրայ եւրոպայէն պատրաստ թրքանիր փերել տալու, ինչ չափ որ կուզէ: Սա ալ հասկցամք» (զարձեալ նոյն որոտնդոստ կեցցէները): Դէ հիմակ ալ ուրիշ փան պիտ ըսեմ. լուրեր ստացած հմ, որ Տրապիզոնի լեռներու և մեր Խայաստանի լեռներու և թաշտերու մէջ ալ ահաքին թւով քայլեր և շնաքայլեր են երեացել, որ կուտեն մեր տաւարներ, մեր մատղահաս աղջիկներ, կաւրեն մեր տներ և կը փուչացնին մեր աշխատութիւն: Թա քայլերը պատուհաս մը

և զած են անգէն մարթոց խամար. ուստի, երփ վերաթանալու ըլլաք խայրենիք, վայտերու և մահակներու փոխարէն ձեզի հետ հրացաններ և թաշոյններ վերցուցէք և աթ զէսքերու քործունէռթիւնը աղէկ մը սովորեցէք և ձեզի վրայ յարձակող քայլերը զարկէք, կատրեցէք. աս ալ հասկցմք: (Ժողովրդի ոգևորութիւնը այս անգամ մոլեպնութեան է հասնում և սկսում են բռւն կերպով ծափահարել և անթիւ անգամ «կեցցէ Հայրիկ» աղաղակում): Թէհ, ալ ըսելիք չունիմ, սիրելի ժողովուրդ, Փեռինէ փերած խապրիկներս աս չափ է»:

Բերած քաղուածքից լաւ բնորոշւում են գեռ այն ժամանակ հայկական շարժման երեք գլխաւոր տիպերը. 1) հայ էֆէնդիական զգոյշ ազգասիրութիւնը, որ ինքն ըստ ինքեան ժողովրդի բնական աստիճանական զարգացման և հասունութեան ոչ մի խոչնդու չէր կարող հանդիսանալ, 2) նոր յեղափոխական-ապստամքական ազգասիրութիւն որ հաշիւ չէր տալիս իրան հիտեանքների մասին և 3) դիւրահաւատ, շուտ բռնկուող և ոգևորուող տգէտ խուժանը: Խրիմեանի զեմագոգիական քարոզները բնականարար ոգեսրում է խուժանին, իսկ կարտապիտ Փանոսեանի նման անձանց ասածները կատապեցնում նրան: Եւ զեմագոգիան յաղթեց, որովհետեւ էֆէնդիական ազգասիրութիւնն էլ շարունակում էր արհամարհել թուրք ժողովուրդը և յոյաը դնելթիւրք բիւրօկրատիային շողոքորթելու համակերպուելու վրայ: Մէկը ստրկի, միւսը քալլագեօղի ազգասիրութիւն:

Կարտապիտ Փանոսեանից աւելի լայն կարծիքների տէր է երեսում Գրիգոր Օտեանը, որի գաղափարները հայ ազգատագրութեան շարժման մասին աշխատում է բնորոշել, «Հայրենիքում» Յակոբ Նշկեանը իր «յեղափոխական գաղափարին շուրջը» արդէն մեր կողմից յիշատակուած գրուածքում:

«Բայց այս ամէնուն մէջ դէմք մը կարայսպէս միայն ժտախոն ու ժուայլ, որ կարծես անտարբեր ու անզգայ այդ ոգեկերութեան ու շարժումներուն՝ յուսախաբ երեսյթ մը ունէր՝ եթէ ոչ յուսահատ: Այդ անձը Գ. Օտեանն էր, ուրուն հետ պատմութեանս այս ժամանակամիջոցին ազգականութեան կապով կապւած՝ պատեհութիւն ունէի աւելի յաճախակի տեսակցելու: Մեր խօսակցութիւնները ընդհանրապէս օրւան խնդիրներուն շուրջ կը դառնային. երբ ակնարկութիւն կ'լլար բարեկարգութիւններու մասին՝ դառն ու հեգնական ժպիտով մը գլուխը կ'օրօրէր, առանց ըստ մը արտասանելու և կարծես կը փափաքէր որ չխօսւի այդ մասին, ու խօսքին նիւթը փոխելով՝ կ'սկսէր իս

հարցաքննել։ Առ հասարակ ինք քիչ կը խօսէր և տեղեւ կութիւն կ'ուզէր ունենալ գաւառացոց կեանքին, սովորութիւններուն, բարքերուն, մտաւոր ու տնտեսական վիճակին, թիւրքերու և քիւրտերու հետ յարաբերութիւններու և վերջապէս այն ամէն խնդիրներուն վրայ, որոնք ժողովուրդի մը նկարագիրը և ուժ բացատրելու կրնային ծառայել։ Դիտցածիս չափով կը պատասխանէի, մերթ գոհունակութեան ժամանակ մը կ'ունենար և մերթ կը մը թադնէր իր դէմքը, ինձմի ստայած տեղեկութիւններէն։

Չուան օրերուն մէջ, երբ օր մը բոլորովին առանձին էինք իր տան մէջ, մեր խօսակցութիւնը բաւական երկարացաւ ու շահագրդիու երկոյթ մը սոտացաւ. այդ օրը տարբեր տպաւորութեան մը ներքե էր կարծես, մոռացած էր իր սովորական սակաւախօսութիւնը կամ հարցաքննելու հղանակը։

«Դիուք գաւառացիներդ, կ'ըսէր, կը թւի թէ պէտք է աւելի լու գիտնաք ու ըմբռնէք ազգին պէտքերն ու պահանջները և Հայաստանը բարեկարդելու միջոցները։ Կարնոյ ծրագիրը՝ լաւ կերպով պատրաստուած՝ կապացուցանէ այդ ենթադրութիւնս։ Բայց կան նաև այնպիսի բաներ որոնք այդ կարգի ծրագրերու մէջ չեն ըսիր, բայց տարբեր եղանակով կը բացատրին։ Կաշառակեր ու ապիկար ողաշտօննեաներու բարձումը, ինչ ինչ օրէնքներու փոփոխութիւնը կը կարծէք թէ բաւական պիտի ըլլան Հայաստանի բարեկարգութիւններուն կամ ուրիշ խօսքով հարստանաբութիւններուն վերջ տրւելու համար։

Զգիտէի ինչ պատասխանել այս ձեռվ ներկայացւած հարցի մը, ամէն պարագայի մէջ լաւագոյն համարելով անկեղծօրէն և առանց սքօղելու պարզել իմ զգացումներու ու մտածումներս կամ այն ժամանակւայ տեսութիւններս։

— «Յիրաւի, ըսի, ծանը փորձի մը կ'ենթարկէք իս, բայց աւելի իմ զգացումներուս թելադրութեամբ սիրտի պատասխանեմ, քան թէ փորձ և հեռատես անձի մը զիտակցութեամբ։ Իմ կարծէքով՝ աւելացուցի, այդ ամէնը բաւական չեն հայուն տառապանքին վերջ տրւելուն, բայց ատոնք միջոցներ են կամ զիւրութիւններ պիտի ընծայեն մեզ որ մենք մեր ձեռքով դադրեցնինք այդ չարիքները. ուրիշ բան մը որ անտես առնւած է կամ չէ յիշատակւած ներկայացւած ծրագրերուն մէջ, երկաթուղիներու շինութիւնն է։ Ըստ իս, այդպիսի ձեռնարկ մը ա-

մէնէն կարենորն է բարեկարգութիւններն աստիճան մը հիմնական ընկերու ու նոյն ատեն դիւրութիւն ընծայելու մեղ մեր փափաքներն իրագործելու համար: Երթևեկութեան յաճախումը, յարաբերութեան դիւրութիւնը, եւրոպացի պաշտօնեաններու և, աղետրականներու և ուղեռներու մուտքը զաւառներուն մէջ, ոչ միայն պիտի նպաստէ բարեկարգութեան գործին, այլ նաև պատեհութիւն պիտի տայ մեզ մեր ուժերն ամփոփելու, ցրւած պանդուխտ հայերը կրկին մէջ հաւաքելու և խըստարնելու, որով կարող պիտի ըլլանք յեղափոխական շարժում մը առաջ բերել ու մեր ձեռքով ստանալ այն ամէնը, ինչ որ թերեւ ընաւ չպիտի ուզէ տալ թիւրքը եթէ իր կամքին ձգւի: Մէկ խօսքով եթէ կ'ուղենք կատարելապէս ազատ ըլլալ ու ազատւիլ այս բռնութիւններէն, պէտք է գննենք կամ կորդենք այդ ազատութիւնը մեր արիւնով...»

Երիտասարդական խանդով մը կ'արտասանէի այս խօսքերը, օդին մէջ սուր շարժող զինւորին նման, առանց նըկատի առնելու թէ տաղանդաւոր դիւանագէտի մը առջե կը գտնաւիմ: Գ. Օգեան պահ մը իս դիտեց մտախոհ և քանի մը վայրկեան լուսութենէ ետք՝ ծանր ու հանդարտ ձախով մը պատասխանեց:

—Թու յայտնած գաղափարներուդ մէջ կան լուրջ խորհուրդի, առարկայ, մասեր և կան երիտասարդական աւելունի յախուսն մտածումներ: Երկաթուղիներու շինութիւնը կը ընդունիմ թէ իրապէս մեծ բարիք պիտի ըլրայ ամբողջ երկրին և մասնաւորապէս հայերուն համարէ հայերը իրեւ վաճառական, իրին արհեստաւոր և երկրագործ արդիւնաբերող տարրը կը ներկայացնեն այսօր, հետեապէս երկրին իշխող մարմինը պիտի դառնան, եթէ իրօք այդպիսի ձեռնարկ մը ի գործ գրւելու հաւանականութիւն ըլլար: Թուրքը չպիտի ուզէ ձեռնարկել երկաթուղիներու շինութեան ոչ միայն որովհետեւ նիւթապէս անկարող է, այլ քաղաքական շատ մը պատճառներու համար, որոնք բացատրեն աւելորդ է: Երկաթուղիներու հաստատութիւնը ինքնին բաւական պիտի ըլլար հայոց վիճակին բարւոքմանը և հարկ չպիտի մնար յեղափոխական կամ իմ ըմբռնումովս ապստամբական չարժումի: ինչ որ ալ ըլլայ սակայն՝ մեր ներկայ վիճակին մէջ յեղափոխական նեէ շարժում աղետաբեր պիտի ըլլայ.

Քու տւած տեղեկութիւններդ արդէն գիտցածներուս վը Փետրուար. 1907,

բայ աւելացնելով՝ այն եզրակացութեան կուգամ, թէ  
մեր ժողովուրդը նիւթապէս և բարոյապէս այնչափ  
տկարացած է, որ այդպիսի շարժում մը ընելու անկո-  
րող պիտի ըլլայ:

«Դուք անշուշտ ուրիշ ազգերու յեղափոխական պատ-  
մութիւններն օրինակ առնելով այն համոզման եկած էր-  
թէ առանց արիւնի ազգ մը չէ կարող վերականդնել: Ճըշ-  
արիտ է տա, բայց ազգ մը արիւն թափելու համար  
նախ պէտք է արիւն ունենայ և ապա ան թափելու բա-  
ջութիւնն ու անվեհներութիւնը: Մեր ժողովուրդին բով ոչ  
այդ արիւնը մնացած է և ոչ այդ քաջութիւնը. երլոր  
տարիներ բոնութեան ներքե ճնշած, կորանալով կորա-  
ցած ու տափակցած է, կրնայ ըլլալ որ մերթ այս ինչ  
անդամը չարժէ իր վրայ ճնշող ծանրութիւնը, բառնալու  
անզօր ճիկով մը՝ լայց մարմնին գանգուածը անշարժ կը  
մնայ:

«Ատկէ զատ, ոկեաք է աչքի առջե ունենալ նաև հան-  
գամանքները, ու մեր հակառակորդին թիւը, աշխարհա-  
գրական զիրքը, շրջապատող տղգերը կամ տէրութիւն-  
ները, անոնց արամազրութիւնն ու գիտաւորութիւնները:  
Խնդրեմ ըսէք քանի մարդ կրնաք գտնալ ձեր քաղաքին  
կամ ամրող գաւառին մէջ որ խորապէս ուսումնասիրած  
ըլլայ այդ ամենը ու այն ատեն դէնք մը գործածելու  
կորող:

«Չեր քաղաքը (Կարին) օրինակ քերի, որովհետե կը կար-  
ծեմ թէ ամէնէն հասուն և ամէնէն գիտակից ժողովուրդն է:

«Յեղափոխութիւն բայց գիտեմ թէ ամէնէն հրապու-  
րիչ բանն է առհասարակ ամէն երիտասարդի համար,  
բայց այդ հրապոյրը բաւական չէ յաջողելու համար: Է-  
սի թէ արիւն թափելու համար արիւն և եռացող արիւն  
շինելու է ամրող մարմնի մէջ և նոյն ատեն գիտնալու  
է նաև թէ երբ և ինչպէս թափելու է այդ արիւնը: Կը  
փութամ աւելցնել թէ այդ իսկ բաւական չպիտի ըլլայ  
մեր ազատագրութեանն համար, եթէ նախապէս կուան  
մը պատրաստած ըլլանք: Մեր այդ կուանը պիտի ըլլայ  
ևրոպական տէրութիւններու եթէ ոչ ամէնուն, գէթ մէկ  
մասին անկեղծ համակրութիւնն ու պաշտպանութիւնը:  
Սիսալ չհասկանաք, ըսկել չեմ ուզեր թէ մեր միակ յոյսը  
երոպական տէրութիւններէն ակնկալելու ենք. կուան  
բառը իսբնին կը բացատրէ թէ առանց մեր կողմէն զօ-  
բաւոր ճիկի մը, այդ կուանը բանի մը չի ծառայեր,

նոյնալիս մեր ըոլոր ջանքերն ապարդիւն մնալու դատապարտած են. առանց այլպիսի կուան մը ունենալու. մէկը միւսին լրացուցիչ մասն է:

«Եթուատին կը կրկնեմ յանգուգն ու անխորհուրդ ձեռնարկ մը կործանարար պիտի ըլլայ մեղ համար և թէ այն աշակցութիւնն ու պաշտպանութիւնը որ պիտի կարող ըլլանք սուանալ երօպ. տէրութիւններէն. երբ արդիւնաւոր կամ ժողովրդին ոյժն ու նկարագիրը երևան բերող գործ մը ցոյց տանք, պիտի վիժի մեր վիժած զործերովը, և անոնք փոխանակ պաշտպանութեան՝ պիտի քամահրին կամ շատ արգահատին մեր տկարութեան վրայ: Ուստի հիմնական, լուրջ և յարատե աշխատութեամբ պէտք է պատրաստուինք, առանց աղմուկի, առանց շեփորի, մինչեւ այն աստիճան որ քիչ շատ աչքի զարնող արգիւնք մը ձևոր բերելու ապահով ըլլանք:

«Ես քաջ զիտեմ թէ հիմայ խիստ տկար ենք ամէն կերպով. պէտք է զօրանանք ու արիանանք մարմնով, հոգիով, մտքով ու սրտով, մանաւանդ սրտով, բան մը որ բոլորովին կը պակսի մեղ: Նոյն ատեն ձեր երիտասարդական խանդին հետ խառնեցէք քիչ մը լրջութիւն, ձեր զործերուն մէջ շրջահայեցութիւն և հեռատեսութիւն, ձեր երկրին ու ձեղ շրջապատող զործերուն լիովին ծանօթութիւն և իվերջոյ դիւանագիտական դարձւածքներուն կամ եւրոպական տէրութիւններու տրամադրութիւններուն զիտակցութիւն: Երբ այս ուղղութեամբ պատրաստւիք ու զործեք՝ յաջողութիւննիդ անկառկած է, մինչեւ իսկ եթէ շյաջողիք ալ աննշան վնասով պիտի ազատիք»:

«Դիտեմ թէ շատ դժւարութիւններու, արգելքներու պիտի հանդիսակիք, զիտեմ թէ շատ անգամ յուսայատութիւնը պիտի պատէ ձեզ, զիտեմ թէ յաճախ պիտի պատահի որ ներքին թշնամիներ կամ ցածնողի արարածներ ձեր զործերուն ու խորհուրդներուն խոչընդուռ ըլլան, զիտեմ թէ տպէտ, սարկացած և կրիթէ անհոգի ժողովուրդ մը կենդանացնելը զերբնական կարողութեամբ օժտւած անձերու կը կարօտի, բայց պէտք խորհիք թէ ազգի մը փրկութեան զործը դիւրաւ և այսօրւան վաղւան մէջ կատարեւելիք զործ չէ»:

Այս իմաստով խօսեցաւ Դրիգոր Օտեան ընտ երկար, միշտ ծանրանալով այն կէտին վրայ թէ առանց եւրոպական տէրութեան մը պաշտպանութիւնն ունենալու՝ մեր րոլոր ջանքերն ու զոհողութիւնները ապարդին պի-

տի ըլլան։ Այս գաղափարներուն դէմ առարկութիւն մը ընելու կամ փաստելու անկարող կ'զգայի իս, միայն առարկեցի թէ։

—«Այդ եղանակով պատրաստութեան համար թերևս այնչափ ժամանակի պէտք ունենանք, որ ատեն թերևս մեր ազգն ալ անհետացած ըլլայ, թողունք այդ կէտը։ Անուբանալի է սակայն թէ պէտք է ձեր ըսածին նման գիրքնական կարողութեամբ, անվեհեր սրտով, յարատեսող կամքով և անձնուբաց հողիրվ օժտուած անձեր գործին գլուխ կանգնին ու առաջ վարեն, այդ անձերէն մէկը դուք կրնաբ ըլլալ, բայց ինձ կը թւի այդ չափով չի վերջանար։ Ուրիշ էական բան ևս պէտք է մեր այդ պատրաստութիւններուն համար՝ այն է դրամը ուրկէ պիտի ձեռք բերենք այդ դրամը և ուր պիտի գտնանք այդ անձերը»։

—«Քու առարկութիւններուդ կարգով պատասխանելու համար, նախ ըսեմ թէ՝ իրաւ երկար ժամանակի կը կարուին այդ պատրաստութիւնները, բայց այդ երկար ժամանակւան մէջ ազգը չ'անհետանար, միամիտ եղիր, մեր ազգը շատ աւելի գառն ու թշւառ ժամանակներու մէջ ապրած ու կանգնած մնացած է ու այդ տոկունութիւնն է մեր միակ պարծանքը։ Իսկ գալով իմ մասիս ըրած ակնարկութեանդ՝ զործնական չի ատ, ես թերևս գլւանագիտական շրջանակի մէջ կարող ըլլամ ծառայութիւն մը ժամանուցանել, բայց ներքին պատրաստութեան համար եփուն և մանաւանդ ժողովուրդին ցաւերով տառապով ու անոնց գառնութիւնը կատարելապէս զզացող մարդիկ հարկաւոր են։ Դրամի կարեորութիւնը էական է անշուշտ, բայց կրնայ ձեռք բերուիլ, երբ ձեր ըսածին պէս ուղղամիտ, անշահախնդիր և անձնւէր անձեր զործին զլուխ կանգնած ըլլան։ Իսկ թէ ուր կամ ուստի՞ պիտի գտնաք մէկը կամ միւսը, կը պատասխանեմ թէ վնասուցէք ու պիտի գտնաք, և եթէ չկտնաք շինեցէք, ստեղծեցէք։ Իսկ եթէ ոչ աս պիտի կարողանաք ընել և ոչ ան, այն տաեն ցաւելով պիտի ըսեմ թէ՝ այս ազգը աղատութեան արժանի չի, բանի որ իր մէջ չի պարունակեր ազգի մը պատութեան գլխաւոր տարրերը»։

Մեր այս մտերժական խօսակցութիւնը վերջին եղաւ, որովհետեւ շատ չանցած Գրիգոր Օտեան խոյս տւաւ եւրոպա։ Սուլթան Համիտ արզէն սկսած էր իր ժանիքները ցոյց տալ և զանազան միջոցներով հեռացնել անձերը որոնք կընային արգելք ըլլաւ իր ու խորհուրդներուն։

Դ. Օտեան, իբրև խորհրդակիցն ու գործակիցը Միտհատ փաշային, պատճառներ ունէր կասկածելու Համիտէն և ինքինքն աղատելու անոր ճիրաններէն:

Թէ ի՞նչ դեր կարողացաւ կատարել Դ. Օտեան եւրոպայի մէջ կամ թէ ի՞նչ արդիւնք ունեցան իր դիւանուգիտական ջանքերն ու փորձերը ազգին աղատագրութեան ինդրին մէջ, աւելի ձեռնաս ու աւելի մօտէն տեղեկութիւն ունեցող անձերու պարտականութիւնն է արձանագրել առ, ապագայ պատճութիւնը գրողներուն համար»:

Ի՞նչպէս զժուար չէ տեսնել բուն ժողովրդական մասաւաներից հեռու գտնուող Գ. Օտեանը հանդիսանում էր եւրոպական մտքով հասկացած մի դիւանագէտ՝ որի զգաստ հայեացըները բնաւ չէին կարող ազգեցութիւն ունենանալ լայն շըջաններում: Միւս կողմից նաև ևս գեռ չի հասել այն զիտակցութեան որ առանձին, մասնակի հայկական աղստամբութիւնը մի անմտութիւն է, հայ ժողովրդի համար խենթերի պատրաստոծ սպանդանոց:

Այդ պայմաններում ասպարէզը մնացել էր նրանց ուրոնք զիտեն խուժանի խաւար ինստինկտներին յագուըթ տալ մոլորեցնել նրան սին միրաժներով: Ազգային անկախութեան ցնորբով բռնուած զիմագոգների համար բացուած էր շահատակութիւնների, աւանտիւրների, քաղաքեօղութիւնների լայն ասպարէզ: Ռշխարամիտ ամրոխին այծերը տանում էին ուղիղ դէպի սպանդանոց... քանի զնում խուժանային նոր հաւատամքի առաջն զժուար էր արդէն առնել. «ազգային անկախութեան» և «ապստամբութեան» միրաժըտիրել էր «հրիտասարդութեան» և ամբոխամիտ «ինտելիգենտներին»: Անմտութիւնը միացած թեթևամտութեան հետ սոսկալի շարիքներ էին պատուհասում անդիտակից մոլովրդի գլխին:

Այդ անմտութեան և թեթևամտութեան մասին գաղափար են տալիս ներքեւ բերած երկու զրութիւնները. մէկը Մ. Փորթուրալեանի («Արմէնիայից»), միւսը Պ. Ս. («Հովիւից»):

«1880-ի թուականին կովկասի մէջ սուտ լուր մը տարածուած էր թէ վանի հայերը աղստամբեր և բերզը առեր են: Ասոր վրայ սաստիկ շարժում յառաջ եկած էր սուսահպատակ հայերին մէջ և մեծ պատրաստութիւններ սկսած էին տեսնուիլ բազմաթիւ խմբերով սահմանագլուխն անցնելու և վանի հայերին օդնութեան հասնելու համար. մինչև իսկ հայ զօրքերի յառաջընթաց փոքրիկ արշաւախումը մը սահման անցնելով յաջողած

էր արդէն գալ մինչև Սլաշկերտ և մնալ հոն, դէպի վաճառառաջախաղացման համար հրահանգի սպասելով։ Սամսոն բէկ (որ ոռւս և թիւրքական վերջին պատերազմի միջոցին Պայտագիտի մէջ պաշարուած ոռւս զօրքերն ազատելու համար իր կատարած անվախ և հնարամիտ գերովու ու Բաֆֆիի «Խենթը» վիպասանութեան մէջ հերոսացած լինելով բաւական մեծ ժողովրդականութիւն մը կը վայելէր այն ժամանակ) Երեան կը զանուէր այդ միջոցին և նուալ իր առաջնորդութեան դիմել ուղողներէն խումբ մը կազմելով սահմանագլուխն անցնելու համար որոշման կըսպասէր այնտեղ։ Իսկ թիւրք կառավարութիւնն որ այդ ամէնը կը տեսնէր, յանկարծակիի եկած կը դիտէր միայն, անմիջական բան մ'ընկլու անզօր վիճակի մը մէջ գտնուելով։ Սակայն Ռուսիայի հայեր ևս անծանօթին մէջ յանկարծակի և վճռական ոստում մ'ընելէ առաջ, հարկ համարեր էին դիմել Խրիմեան Ս. Հայրիկին, որ Վան կը գտնուէր այն օիջոցին, հարցնելով թէ վանի մասին տարածուած լուրերն ո՞րչափ ստոյդ են, գան թէ չգան։ Խրիմեան Հայրիկ բացասական պատասխան տուաւ, Վանի ինչ վիճակի մէջ դանուիլը ճշդութեամբ իմացունելով, որով այդ մտաղրուած արշաւանք չգործադրուեցաւ, կամ եթէ կուզէք այսպէս, ըստնք յետաձգուեցաւ։

(«Արմենիա» 1906 թ. թիւ 23)

Ահա և այլ նմուշ թէ ինչ երտիսայամիտ ըմբռատացումներով մի բուռն հայ գժեր ուղում էին ապատամբութեան դրօշ բարձրացնել մէն մինակ, 20 անգամ թուով և բիւր անգամ ուազմական ուժերով զօրեղ մի թշնամու դէմ։

«Մի կողմ թողնելով հայ յեղափոխական շարժման այն գաղտնի կազմակերպութեան պատութիւնը, որ 1880-ական թուականների սկզբում կամենում էր երգրումիր բերդին տիրել, որ փիասկայի հանդիպեցաւ, նոյն թուականներին կազմակերպութիւնը ժամանեց երիտասարդ ոմն Հ (անունը չենք դնում, որովհետեւ հաւանական է, որ գետ կենդանի է և կարող է վնասի ենթարկուել)։

Նորա գալստեան նպատակը ստիպում էր ամենից առաջ այցելել այն ժամանակուան հայ խմբագրատուները։ Մի գեղեցիկ օր յիշեալ պատուական երիտասարդը մտաւ «Մեղու»-ի խմբագրատուն։ Սովորական ողջոյնից յետ յայտնեց, որ ինքը պատղամաւոր է մի խումբ երիտասարդների, որոնք եւրոպայի ուշաղրութիւնը Տաճկահա-

յերի խնդրի վերայ—զարձնելու և նորա լուծման նպաստելու համար, մտադիր է Տաճկահայաստանում ապատամբութիւն հանել։ Սորա համար չին կարող արդիօք մուսահայերը օգնական գոնէ 30,000 մարտիկներ տալ։ Խելով այս խօսքեր, քրտինքը պատեց ինձ։ Պարάն, եղաւմեր պատասխանը, զիտէք ինչ վտանգաւար դործ (ըիսկ) է ապատամբութիւնը։ Դորա համար նախ և առաջ առլըստամբող ժողովութզը պատրաստուած պիտի լինի, երկրորդ՝ ասպատամբութիւն ասպարէզ երկիրը մանրամասնորէն ուսումնասիրած, երրորդ՝ մեծ նիւթական միջոցներ՝ զէնք և միլիոններով զրամ հարկաւոր է, չորրորդ՝ պէտք է աչքի առաջ ունենալ այն ոյժը, որի զէմ ապըստամբութիւնը ուղղած է։ Արհեստական կերպով կաղմակերպած ապստամբութիւնը մեծ թշուասութիւն կը պատճառէ ազգին։ Խոկ ինչ կվերաբերի Ռուսահայերիս, ոչ միայն երեսուն հազար այլ և կրկնասպատիկ թուռվ մարդիկ կտան, եթէ ուսւ կառավարութիւնը մեզ զէնք կտայ և ամեն դիւլութիւն ու կասէ գնացէք, ես էլ ձեր ետեւում կանգնած եմ. հակառակ զէպքում, ապստամբութիւնը միայն մի քանի տասնեակ երիտասարդների ու շքը զրաւել կարող է։ Պատասխանը եղաւ, թէ կ.-Պօլսում 15—20 երիտասարդներ նիստեր կը կազմին և խարտան (աշխարհագրական քարտէս) տառջնենքը գրած կուսումնասիրներ Տաճկահայաստանը և թէ տաճկի ոյժը շատ կուրած ընկած է, ան բան մը չէ,

Տեսնում եք փոքրիկ գրադարանս, ասացի, քսանից աւելի խարտա կայ այնտեղ, որոնցով ուսումնասիրած եմ և Տաճկահայաստանը, բայց այդպիսի ուսումնասիրութիւնը բաւական չէ, այլ անձամուր տեղնուտեղը պէտք է ուսումնասիրել երկիրը, ուր ապստամբութիւնը ծագելու է և որոշել զորա համար յարմար գիրքերը։

Խոկ ինչ կը վերաբերի տաճկի ոյժին, որ ըստ ձեռքան մը չէ, նա թոյլ կարող է լինել որեւ է մեծ պետութեան ոյժի հետ համեմատենիս, բայց ահուելի է հայերիս ոյժի համեմատութեամբ, յիշեցէք Պիհևայի պաշարումն և դիմագրութիւնը։ Տարակոյս չկայ, որ Տաճկաստանը պիտի յեղափոխուի, նա չէ կարող ներկայ վիճակի մէջ մնալ։ Իմ խորհուրդս և կարծիքս է, որ Տաճկահայ երիտասարդները հեռու կենան վտանգաւոր ձեռնարկութիւններից, պատրաստեն Տաճկահայաստանցիներին ապագայի համար, պահպանէն իրանց ոյժերը ապագայ ընդհանուր

յեղափոխութեան համար, համերաշխութիւն կայացնեն քրդերի և այլ դրացիների հետ, որոնք ներկայումս կը-միանան տաճկի կառավարութեան ոյժի հետ։ Մեր մի քանի տեսակցութեանց խօսակցութեան նիւթը միւնոյնն եկաւ և յարգելի պարոնը մի երկուշաբթի օր եկաւ հրա-ժարական ողջոյնի համար, նա միւս օր զնալու էր և այդ օրը յայտնեց, որ «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրու-նու կարծիքը բոլորովին այլ է, թէ նա տեսնուել է փո-խարքայի օգնական Միրսկու հետ, որ շատ համակրու-թիւն է ցոյց տուել ապստամբութեան խնդրին։ Ի միջի այլոց ասաց, թէ այդ գործի համար մի քանի միւխօն գը-րամ էլ կայ։ Զորեցարթի էլ եկաւ, ասելով՝ որ երեք-շաբթի օր Գ. Արծրունին ճանապարհածախոնը չէ տու-ել, հինգշաբթի պիտի տայ։

Ուրբաթ երեկոյիան կրկին եկաւ և յայտնեց, որ իւր ճանապարհածախսի վճարումն մերժել է առձեւն դրամ չունենալու պատճառով։

Իմանալով, որ նրան 35 սուրլի է հարկաւոր, չնայե-լով իմ աղքատութեանո՞ւ պարտը համարեցի տալ նրան 35 սուրլի, որ Կ.-Պոլիս համնելիս խոսացաւ իսկայն դրկել, բայց երկի մինչև ցայժմ էլ ճանապարհին է։

Հրաժեշտի ողջոյնին հետ, խնդրեցի, որ իւր ընկերնե-րին և իմ կարծիքս էլ հաղորդէ։» («Հովիւ» 1906 թ. №42)

Այս էլ այն ժամանակուայ հասարակական գործիչի մկայութիւնն է, որից երեսում է թէ քաղաքականապէս տհաս էին ոչ միայն երիտասարդ «ըմբռոստները», այլև հասակն առած ջոշերը, բորիկ լինելով թէ իրականութիւնը, թէ քաղաքակա-նութիւնը և թէ սոցիալական զարգացման օրէնքների տարրա-կան հասկացողութիւնները ըմբռնելու մէջ։ Մտաւոր և բարո-յական որպիսի խակութիւն... Թեթեամիա անալոգիաներով, տղայամիտ յոյսերով գրաի միջամտութիւնների և անձնական քաջութեան վրայ օրորում էին գմբախտ ժողովուրդը, հիպո-սացնում նրան... իշխ նահատակութեան համար... \*

Բիդայիզմի արշալոյն էր այդ!...

Անկալս

# Ի՞ՆՉ ԵՆ ՌԻԶՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄԾԿՐԱՏՆԵՐԸ

(ԳԵՒ ԵԽ Լ.Ս.Ֆ.Ա.Պ)

## I

Ինչպէս ցոյց են տալիս նորագոյն հետազօտութիւնները նախնական մարդկային հասարակութիւնները՝ ամենուրեք ունէին հողի և նրա արդիւնքների համայնական սեփականութիւն։ Կամաց-կամաց ծագող մասնաւոր սեփականութիւնը նախ տարածւում է միայն այն առարկաների վրայ, որոնք գործ է ածում ինքը այդ առարկայի տէրը, ինչպէս, օրինակ, սպանուած թշնամուկամ զազանի մարմինը, զարգերը, զէնքերը և այլն։ Այդ տիրոջ մահուանից յետոյ նրա բոլոր սեփականութիւնները սովորաբար թաղում էին դիակի հետ կամ այրւում նրա գերեզմանի վրայ։ Այդպիսով անձամբ զործածելը հանդիսանում էր թէ իրբե պատճառ, թէ միաժամանակ իրբե սահման մասնաւոր սեփականութեան։

Հոգի և նրա արդիւնքների վրայ մասնաւոր սեփականութիւնը հանդիսանում է իրբե համեմատաբար նորագոյն ժամանակի երեսյթ։ Աւատական (Փէօդալական) կազմի ժամանակ ամեն տեսակ տուրքերով ծանրաբեռնուած մամնաւոր սեփականութիւնը միջին նվազայութ ընդունում է իր ընդարձակ բուրժուական ընոյթը միմիայն 1789 ֆրանսիական յեղափոխութիւնից սկսած։ Մամնաւոր սեփականութեան աստիճաննական զարգացումը գալիքը լնիթացքում, կատարւում էր, իհարկէ, իմաստ կոլեկտիւ կամ հասարակական սեփականութեան

և, ինչպէս յայտնի և պատմութիւնից, բռնութիւնը և խաքերայութիւնը պակաս դեր չեն կատարել այդ բանում \*): Այնուամենայնիւ, նոյնիսկ կապիտալիզմի ամենագարզացած երկրներում, մասնաւոր սեփականութիւնը անկարող էր կուլ տալ կոլեկտիվ սեփականութեան ամբողջութիւնը. դրան ապացոյց ամենուրեք հասարակական սեփականութիւնների (համայնական հող, պետական անտառներ ևալին) գոյութիւնը: Այդ պատճառով բանուորական կուսակցութիւնները իրաւացի են յայտնելով որ «մասնաւոր սեփականութիւնը երբէք չի հասել բայցարձակ տիրապետութեան»:

Մանր հողատիրութեան և մանր արդիւնագործութեան ժամանակաշրջանում պահպանուում է մասնաւոր սեփականութեան էական բնոյթը. սեփականատէրը ինքն է բանեցնում իրան պատկանող գործիքները: Իր ձեռներով իր հողաբաժնը մշակող դիւղացին, ձեռքի դաղդահի վրայ աշխատող ջուրհամկը, փորագրողը իր կարիչով, ներկարարը իր վրձինով, հիւմնը իր գործիքներով—այդ բոլորմարդիկ միայն անուանական կամ իրաւաբանական սեփականատէրեր չեն, այլ իսկական, որովհետեւ նրանք անձամբ գործադրում են իրանց՝ ունեցածը, իրանք բանում են իրանց պատկանող գործիքներով: Սեփականութիւնը այստեղ ձուլում է սեփականատիրոջ հետ, սեփականութեան արդիւնաւէսութիւնը կախուած է սեփականատիրոջ ճարպիկութիւնից և եռանդից. սեփականատէրերը առանց վեստելու իրենց սեփականութեան չեն կարող զադարել բանելուց, թուլանալ կամ ծերանալ: Այս գրութեան մէջ սեփականատէրը դեռ օգ-

\*) Նախնական կոմունիզմը ինքն իր մէջ կրում է իր քայքայման տարրերը, ուստի չի կարելի նրա մէջ տեսնել յենատրան ապագայի հասարակական կաղմութեան: Նախնական կոմմոնիզմը քայքայւում է իր հէնցը սեփական անկատարութեան շնորհիւ ձնշումը և բոնութիւնը միմիայն արագացնում են իրերի այն ընթացքը որ անխուսափելի է զուտ տնտեսական պատհառներով:

տակար դեր է կատարում արտադրութեան (производство) մէջ:

Բայց հողային սեփականութեան ընդարձակման և արդիւնաբերութեան (промышленность) ձեր փոփոխութեան այն է՝ մեքենայական գառնալու հետ միասին սկառում է անհետանալ նաև մասնաւոր սեփականութեան գործադրական (потребительный), իրական և օգտակար բնոյթը: Եթե զիւղացու հողաբաժինը համառում է հարիւր, երկու հարիւր և տւելի գեսեատինանոց կարուածքի չափի, այդ հողը սկսում է մշակել արգէն ոչ սեփականատէրը, այլ կապաւուուները, ֆերմերները, օրավարձով աշխատովները: Եթե ձեռքով բանող գաղղացը փոխարինուում է մեքենայով բանող սղոցով, — արդէն ստայնագործում է և սղոցում ոչ ինքը սեփականատէրը, այլ նրանից վարձուած բանուորները: Սեփականութիւնը գառնում է միայն անուանական կամ իրաւաբանական, նաև կորցնում է իր անբաժանելիութիւնը սեփականատէրից որ արգէն ինքը չէ ի գործ գնում իրան պատկանող գործիքները. այդ սեփականութեան արդիւնաւետութիւնը այլիս կախուած չէ տիրողի անձնական յատկութիւններից, չի մնաւում նրա ծուլութիւնից, ծերութիւննից կամ հիւանդութիւննից: Սեփականատէրը այլիս ոչ մի դեր չի խաղում արտադրութեան մէջ: Նու միայն շահագործում է արտադրողներին, որոնք գործ ածելով նրա սեփականութիւնը պէտք է որ գառնային այդ սեփականութեան անուանական կամ իրաւաբանական տէրերը: Մինչդեռ այժմ բանուորների աշխատանքը պէտք է ոչ միայն արդիւնաբերի իրանց բանուորների հանապաղօրեայ գործադրութեան հաւասարաթէքը, այլ և ստեղծի բացի այլ յաւելեալ արժէք կամ շահ յօդուա սեփականատիւրոջ: Այդ շահի կամ օգտի չափը տւելանում է վարձու բանուորների թուի և նրանց շահագործման աստիճանի հետ միասին:

Այս կամ այն անուանական կամ իրաւաբանական

սեփականատէրը գառնալով սոսկ շահագործող (ԷԿԸ ՊԼԱ-  
ՏԱՏՈՐԵ) կարող է փոխարինուել մի ուղիշով և սե-  
փականութիւնը դրանից պակաս արդիւնաւէտ չի գառ-  
նալ: Շահազործողը նոյնիսկ կարող է դադարել գոյու-  
թիւն ունենալ իրքի ֆիզիկամն անձն և փոխարինուել  
«Ի՞ր և Ընկ.» առևտրական ֆիրմայով կամ ակցիօներա-  
կան ընկերութիւնով, ինչպէս այդ և եղաւ երկաթու-  
ղիների, հանքերի, ջրանցքների, մետաղաձուլական գոր-  
ծարանների և այլ ձեռնարկութիւնների հետ: Այստեղ  
սեփականութիւնը դառնալով ոչ անհատական, կարող է  
առանց աղղելու ձեռնարկութեան վրայ անցնել մի ձեռ-  
քից միւսը և մի օրուայ ընթացքում բորսայում փոփո-  
խել մի քանի իրաւական սեփականատէրեր:

Այդպիսով, սեփականութիւնը վերջնականապէս իր  
մասնաւոր անհատական ընոյթը կամ այլ խօսքերով՝ սե-  
փականութեան անհատական ձեր աւելի և աւելի դուրս  
է մղւում զարգացող արդիւնաբերութեան միջից:

Այդ նոյն զարգացումը, որ ոչնչացնում է սեփա-  
կանութեան անհատական ձեր, միաժամանակ մշա-  
կում է սեփականութեան աւելի բարձր՝ հասարակական  
ձեր: Եւ արդիւնաբերական զարգացումը ինքը ստեղծում  
է հինգ այդ կապիտալիստական կարգերի խորքերում սե-  
փականութեան հասարակական ձեր թէ նիւթական և  
թէ մտաւորական տարրերը, էլեմենտները:

Երբ գոյութիւն չունէր ոչ շողեշարժ գութան, ոչ  
հնձող մեքենաներ, ոչ կոլսիչներ, ոչ էլ այլ կառարե-  
լագործուած երկրագործակոն մեքենաներ, դաշտերը  
կարող էին ունենալ ոչ ընդարձակ տարածութիւններ,  
և հինգ այդ պատճառով նրանք կարող էին լինել անհա-  
տական սեփականութեան առարկաներ: Իսկ երկրագոր-  
ծական մեքենաների ժամանակ կարող են գոյութիւն  
ունենալ միայն խոշոր տնտեսութիւններ, որոնք կազ-  
մուել են առաջուայ մանր տնտեսութիւնների ձուլուե-  
լուց: Անսասատն անհամեշտառութեամբ կատարում է հո-  
ղատիրութեան կենարոնացում և ոչ միայն հնարաւոր

դարձնում, այլև անխուսափելի՝ հողի համայնացումը։ Էլ չենք խօսում նրա մասին որ անանուն\* ) ընկերութիւնների ձեռքում հողային սեփականութիւնը աւելի և աւելի դառնում է անբաժանելի կայք, այսինքն ընդհանուր սեփականութիւն։ Նման և նոյնիսկ աւելի արագ կերպարանափոխութիւն է կատարւում նաև արդիւնագործութեան մէջ. ձեռքի դաղգեանը, ճախարակը, ձեռքի սղոցը և այլ համարեա տնային դառած գործիքները, որոնք կարող էին իւրացնուել ու դառնալ մասնաւոր սեփականութիւն, փոխարինուեցան մանող սղոցող և ոստայնանկ գործարաններով, որոնք մի սցնում են տասնեակ սղոցներ, հարիւրաւոր դազգահներ (СТАНОКъ) և հաղարաւոր իլիկներ։ Արդիւնաբերական կենտրոնացումը նախապատրաստում է ճանապարհը որ մեծ մանուֆակտուրային ձեռնարկութիւնները դառնան հասարակական սեփականութիւն։ Այժմ էլ այդ հսկայական ձեռնարկութիւնները աւելի և աւելի են անցնում անհատներից և դաւնում ընկերութիւնների անբաժան և անհատանելի գոյք։ Արդարեւ, փորձէք որոշել իւրաքանչյուր բաժնատէրի մասը վագոնների, լոկոմոտիվների, վոկզալների և այլ կոլեկտիւր գոյքի այն ահազին զանգուածի մէջ, որ ամբողջապէս միասին վերցրած կազմում է այս կամ այն երկաթուղին։

Այդ կենտրոնացումը, որ առևտրի, արդիւնագործութեան և երկրագործութեան մէջ հանդիսանում է իբրև օրէնք, ինչպէս և այդ կենտրոնացման շնորհիւ ստեղծուութ ակցիօններական տեսակի կոլեկտիվիզմը՝ կազմում են կոլլեկտիւր (հաւաքական) սեփականութեան այն նիւթական տարրերը, որոնք ստեղծուած են կազիտալիստական կազմի հէնց իրա զարգացումով։

\* ) Անանուն ընկերութեան, առոնմոս общество, compagnie anonyme նոյն է ինչ ակցիօններական ընկերութիւն. բաժնատէրերը անձամբ պատասխանատու չեն իրենց ամբողջ կարողութեամբ. այլ միայն իրենց կողմից մտցրած դրամարաժիններով։

Փոքրիկ ագարակը կամ արհեստաւորի գործին (ինստրումենտъ) անձնական գործածութեան զործիքներ (օրուց) էին, այսինքն բուական էր մի մարդու անձնական ոյժը որ այդ գործիքներով արդիւնքներ արտահանի: Սակայն խոշոր հողային սեփականութիւնը, մեքենայագործական, ոստայնագործական, մանող և սղոցող գործիքները մատչելի են միայն հաւաքական ոյժերով, հասարակականօրէն օգտուելու նպատակով. այսինքն այդ բարդ մեքենաները գործի գցելու համար պահտնջւում է շատ բանուորների միահամուռ աշխատանք:

Մանր հողարամին ունեցող դիւղացին ինքը իր միակ գործական է հանդիսանում. ինքը վարում է, ցանում, հնձում և կալում, ինքը խնամում է իր անասուններին և յաճախ ինքն է պատրաստում իր պարզ գործիքները: Ինքնազլուխ արհեստաւորը—օրինակ, հիւսնը—ինքը պէտք է ընտրի փայտը, կահ-կարասիի նկարը պատրաստի, շինի և միացնի նրա մասերը: Մինչդեռ մեքենայական երկրագործութեան մէջ և մեքենայական արդիւնաբերութեան մէջ այդ բոլոր զործողութիւնները բաժանելում են, մասնաւորում և կատարելում միաժամանակ առանձին բանուորների ձեռքով \*):

Խոշոր երկրագործութիւնը պահանջ ունի քիմիկոսների՝ վերնահողը և պարարտը վերլուծելու համար, մեքենագէտների՝ շոգեշարժ գութաները ղեկավարելու համար, մասնագէտների՝ սերմացուները ընտրելու համար և այլն: Մեքենաներով բանող գործարանը չի կարող բան տեսնել առանց վերահսկողի, հաշուապահի, հնոցապետի (Կոչերար), գործաւորի, վարպետների և այլն: Այդ բոլոր արտադրողներից ոչ մէկը չի կարող մինմենակ պատրաստել արդիւնքը, որը արդիւնագործելու համար աշխատում են ամենքը միասին անորոշ և անորոշելի յարաբերականով: Միթէ հնարաւոր է իմանալ թէ, օրինակ, մի

\* ) Աշխատանքի մասին աւելի մանրամասն տես «Արդիւնաբերութեան երեք պայմանները» յօդուածը «Մուրճ»-ում 1906, №11—12, երես 57—71.

արշին մահուղ արտադրելիս աշխատանքի որ մասն է կատարել մեքենագետը, որ մասը գործաւորը, որ մասը վերահսկողը, որ մասը մշակը—դեռ մի կողմ թողնելով վարպետի աշխատանքը: Մինչդեռ այդ բոլոր բան անողները, իբրև զանազան գործողութիւններ կատարողներ, հաւասարապէս անհրաժեշտ են յիշած մի արշին մահուղ արտադրելու գործում: Թէև, կամ աւելի ճիշտը որովհետեւ,—այդ բոլոր բանուղները պատկանում են տարբեր կաթեգորիաների, նրանք այնքան անհրաժեշտ են միմեանց համար որ ոչ մէկը չի կարող կատարել իր գործը իր սեփական ֆանտազիայով և որ ժամին կամենում է: Հնոցապետը թէկուզ նա լինէր անարխիստներից ամենալմբոստը, այնուամենայնիւ չի կարող գալ ժամի 10-ին, եթէ ջուլժակները արդէն ժամի 6-ից կամ 7-ից կանգնած են իրանց դազգաների առաջ և սպասում են որ չողին շարժման մէջ զցի նըրանց: Պէտք է ոչ մի գաղափար չունենալ արդի արտադրութեան մասին երեակայելու համար որ իբր թէ կապիտալիստական կամ որևէ ժամանակաշրջանում անձնական ֆանտազիան կարող է որևէ տեղ գտնել մեքենաներով բանող արհեստանոցում և ընդհանուր աշխատանքը կարող է սկսուել կամ վերջանալ միասին բանողների սրա կամ նրա քմահաճոյքով: Այդպիսի արհեստանոցի շէմքում իւրաքանչիւր բանուղը, լինի նա դիրեկտոր, մեխիսնիկ թէ հասարակ մշակ, հրաժարւում է իր կամքից և անհատականութիւնից, որպէսզի դառնայ աւելի կամ պակաս աւտօմատ, աւելի կամ պակաս նշանակութիւն ունեցող անիւ այն ահագին մեխանիզմի մէջ, որ նրան ընթացք է տալիս և ստիպում շարժուել:

Հաւաքական (կոլեկտիվ) աշխատանքի անհրաժեշտութիւնը և զանազան բանուղների փոխադարձ կախումը դառնում են կապիտալիստական կազմի հէնց իրազարգացումից բղխող սեփականութեան կոլլեկտիվ ծեւի մտարընկան (ինտելեկտուէլ) տարբերը:

Մենք տեսանք, ուրեմն կապիտալիստական կազմի հէնց

իրա զարդացումից սղեղծուած նիւթական և մտաւորական տարրերը: Բայց գրանք նրա միակ տարրերը չեն: Ժամանակակից արտադրութեան ամենաբնորոշ երևոյթներից մէկն էլ արտադրող ոյժերի կառավարութեան անցնելն է՝ ոչ-սեփականատէրերի կամ պրոլետարների ձեռքը: Ինժիներները, քիմիկոսները, դերեկտորները, վարպետները վերահսկիչներ և այլն, մի խօսքով արդիւնաբերութեան գլխաւոր շտաբը կազմւում է վարձու ծառայողների միջլից: Գիտական կրթութեան ինչ բարձր աստիճանի և հասած լինեն տնտեսական այդ ղեկավարները, ինչ անձնական ընդունակութիւններ ունենալու էլ լինեն նրանք, այնտամենայնիւ նրանք իսկապէս մնում են նոյն վարձկանները, ինչպէս և այն բանուորները, որոնց նրանք հրամայում են և որոնցից տարբերում են լոկ իրանց աշխատավարձի քանակով և իրանց գոռոզութեամբ: Սակայն այդ ծառայողների մեծամասնութեան արտայայտուծ լաքէյական ամբողջ լրբութիւնը իրանց այն աշխատավարձների նկատմամբ, որոնք չնշին աշխատավարձ են ստանում, չի խանգարում այդ պարոններին ևս լիակատար կերպով կախուած լինել անգործ սեփականատէրերի և ֆինանսիստների քմահաճոյքից, որ հաւասարապէս օրէնք է ղեկավարների համար այնպէս, ինչպէս և բանուորների համար: Քանի որ արտադրութեան մտաւորական (ինտելեկտուէլ) տարրերը այնպէս ինչպէս և արտադրութեան մկանային տարրերը մատակարարում է պրոլետարիատը, ուստի հէնց այդ հանգամանքի շնորհիւ հստրաւոր է—սեփականատէրերի ամբողջ մի դասակարգի կատարեալ անհետանալը եւ նրանց սեփականութիւնների հաւաքական կամ հասարակական դառնալը առանց ամենանուազ վնաս հասցնելու ըուն արտադրութեան:

Այդպէս ուրեմն, մարդկային հասարակութիւնները սկսւում են հասարակական կամ կոլեկտիւ սեփականութիւնից: Մասնաւոր սեփականութիւնը սահմանափակ-

ւում է սկզբում—զուտ անձնական գործածութեան առարկաների իւրացումով (զարդարանք, զէնք ևայլն), ապա տարածում է տների, հողերի, գործիքների, կապիտալների վրայ և հասնում է իր բացարձակ ձեխն բուրժուազիայի քաղաքական տիրապետութեան ժամանակ։ Սակայն նախնական կոլեկտե սեփականութիւնը այնուամենայնիւ երբէք վերջնականապէս չի անհետանում։

Մասնաւոր սեփականութեան և մերենայական արտադրութեան տարածման հետ միաժամանակ անուանական կամ իրաւական սեփականատէրը դադարում է անձամբ գործադրել իր սեփականութիւնը և սահմանափակում է բանուորների շահագործումով, որոնք աշխատում են այդ սեփականութեան վրայ և միայն իշխանք են այդ սեփականութիւնը արդիւնաւէտ դարձնում։

Այդպիսով սեփականութեան գոյութիւնը այնուհետեւ այլևս միտք չունի։

Միւս կողմից մասնաւոր սեփականութեան և մերենաների զարգացման հետ միասին այդ սեփականութեան գործադրութիւնը աւելի և աւելի կոլեկտիւ է դառնում։ Այդ սեփականութեան գործադրութիւնը պահանջում է հող մի նոր, աւելի բարձր ձեխ կոլեկտիւ կամ հասարակական սեփականութեան համար։ Այդ հասարակական սեփականութիւնը զարգանում է ի հաշիւ մասնաւոր սեփականութեան նոյն ձեռվ և նոյն անհրաժեշտութեամբ, ինչպէս որ ինքը մասնաւոր սեփականութիւնը զարգացաւ ի հաշիւ նախնական հասարակական սեփականութեան։

D.

## ԿԱՐԼ ՄԱՐՔՈՍ ԵՒ ՄԱՐՔՈՒԶՄԸ \*)

1.

Մարքսի կեանքը, սօցիալ-քաղաքական, հրապարակախոսական գործունէութիւնը եւ գրական վաստակները.

Segui il tuo corso e lascia  
dir le genti  
Հետեիք ճանապարհիդ, և թռոց  
մարզիկ խօսեն, ինչ ուզում են.  
Պանէ.

25

Մարքսի հիւանդութեան ուժեղացումը:—Նրա անարգել հիտաքրքրութիւնը:—Մարքսի գնահատութիւնը Անգլիայում:—Մարքսի կողջ մահը:—Ենգելով ճառը:—Մարքսի աւագ գոտեր մահը:—Ընտանեկան գժրախտութեան նիրգործութիւնը Մարքսի վրայ:—Մարքսի մահը:—Ենգելով համակները Լիբկ-նեխտին և Զօրգէին:—Նմուշներ Ենգելով անօրինակ համեստութիւնց:—Ենգելով ճառը Մարքսի գագաղի վրայ:—Ենգելով և Մարքսի մտաւոր աւանդը:—Կառւցէին և Մարքսի մտաւոր աւանդը:—Մարքսի երկերի ցուցակը:—Մեր թեմայի մասին:

Քանի գնում, այնքան ուժեղանում և անրուժելի դառնաւուն նշաններ էր ցոյց տալիս Մարքսի հիւանդութիւնը: Սոսկալի հազը, բրոնխիտը և պլկրիտը հանգստութիւն չեն տալիս նրան, ահաբեկման մէջ էին դրել նրա ընտանիքին և մտերիմներին: Հիւանդացել էր նաև Մարքսի կինը, այնպէս որ բժիշկների խորհրդով Մարքսը իր ընտանիքով ստիպուած էր թափառական կեանք վարելու:—բուժարմաններ այցելելու:

Մակայն և ոչ մի արգելք յետ չէր կասեցնում, և չէր սպառում Մարքսի երկաթէ էսերգիան իր կեանքինշանաբանին նետեւելու՝ կ'նզանի հիտաքրքրութեամբ: Միայն մահը կարող էր արգելք լինել նրա հանձարեղ ուղեղի ֆունկցիաները շարժելու:

\*) Տես «Մուրճ» № 1

Նրա բազմաթիւ նամակների ամեն մի տողը—մասաւանդ Զօրգէի հետ ունեցած նամակագրութիւնը, որ տևել է մինչև 1881 թ. դեկտեմբերի 15-ը—վկայում է, որ ոչ նրա տառապալից հիւանդութիւնը, ոչ իր ընտանիքի ծանր վիճակը և ոչ նրա թանգագին ըոպէնսերը խլող բազմաթիւ այցելութիւնները՝ մասաւանդ Գերմանիայից (որոնց թւում քիչ ֆիլիստրներ չէին լինում), յետ չեն մղում Մարքսին իր գիտական զբաղմունքներից, զործնական-քաղաքական երևոյթներին, բանուորական շարժման և սոցիալիստական կուսակցութիւնների (մասաւանդ Գերմանիայում) գործունէութեան եռանդով հետեւելուց:

Բանէ զնում, այնքան տարածում, մատչելի է դառնում բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին Մարքսի գիտական ուսմունքը: «Կապիտալ»-ի առաջին հատորը թարգմանուել էր արգէն գրեթէ բոլոր յայտնի լեզուներով: Ի՞նտեղէ «քննադատական» փորձերի այն տարափը, որ բուրժուական աշխարհի բոլոր «սորտի» գիտականները տեղացին Մարքս ու մարքսիդի հասցէին աւելի ուշ շրջանից է սկսում, թէև մինչև նրա մահն իսկ այգիսի փորձեր չեն պակասել: Հետաքրքրական է նկատել, որ Մարքսի աշխատութիւնների վերաբերեալ զրական զնանառութեան արտայայտութիւններ աւելի շատ և յաճախ են եղել (Մարքսի օրով), օրինակ, մի հեռաւոր Ռուսաստանում, քան այն երկրում, ուր Մարքսը տասնեակ տարիներ շարունակ ապրել, գործել է (ինտերնացիօնալի մէջ) և արտազրել է իր մտաւոր ամենամեծ վաստակը, ունեցել է իր զրական գիտական գործունէութեան ամենախնտենգիւ ու փայլուն շրջանը: Անգլիայում, Մարքսի վկայութեամբ՝ «մամօնայի և ֆիլիստրների այդ երկրում» 1881 թ. Բելֆոր Բաքուը հրատարակում է «Modern Thought» անունով ամսահանդէսում մի մեծ յօդուած՝ «Նորագոյն մտածողութեան առաջնորդները», № ՀՀ Կարլ Մարքս» վերնագրով: Դա առաջին անգլիական հրատարակութիւնն է իր տեսակում, ուր հեղինակը դրական զնանառութեան էջեր է նուիրում Մարքսին, ողևորում նրա դարագլուխ կազմող նորագոյն գաղափարներով ու հայեացքներով և համարձակ տոնով կուռում անգլիական ֆիլիստրութեան դէմ: Այդ յօդուածը (ոչ աղատ թերութիւններից ու թիւրիմացութիւններից), կրկնում ենք, իր տեսակում առաջինը, մեծ ուշադրութիւն և ազգեցութիւն է գրաւում Մարքսի անուան շուրջը:

Շուտով վրայ է հասնում ընտանեկան կեանքում մի դասուն ու կակծալից գժբախառութիւն: Հիւանդութեան, նեղութիւնների ու զրկանքների ենթակայ մարտնչող ծերունին զրկում է իր սիրեցեալ կոոջից, — 1881 թ. դեկտեմբերի եր-

կուսին մեռնում է Եննի Փօն Վեստֆալեն Մարքսը, Կարլ Մարքսի հաւատարիմ և անմօռանալի կենակիցը: Կնոջ մահը հասցնում է Մարքսին ամենամեծ բարոյական ու Փիզիքական հարուածը: Հարուածը դիպչում է Նրա սրտին, ասում է Լիբ-կնիխութը իր յիշողութիւնների մէջ: Կնոջ մահը Կարլ Մարքսի մահն էր, դա գիտէին բոլորը, ովքեր ճանաչում էին Մարքսին:

Սակայն ով էր մեծ յեղափոխականի կինը—Եննի Մարքսը,—թող խօսէ դրա մասին էնգելսը: Մարքսի կնոջ դադաղի վրայ էնգելսը արտասանում է մի ընդարձակ ճառ, որ եղբարփակում է հետեւեալ խօսքերով. «Բայց թէ ինչ է արել շարժման (բանուորական) համար գրեթէ 40 տարուայ ընթացքում մի կին, որ օժտուած է եղել այնպիսի ընսպատական մտքով, քաղաքական այնպիսի տակառվ, այնպիսի հոանդուն և ուժեղ բնաւորութեամբ, բանուոր դասակարգի շահներին նուիրած ջանքերով,—դա յայտնի չէ դարձել հրապարակով, դա չի արձանագրուել առօրեայ մամուլի մէջ: Կրած պէտք է լինել նրա հետ այդ կոփուը, որպէս զի կարելի լինի հասկանալ և գնահատել այդ հազուազիւտ մարդուն: Բայց ես լաւ գիտեմ որ թէ կօմունիստների հալածուածների կանայք պէտք է երեկար ժամանակ յիշեն նրան, ապա մեզ համար ևս պիտի անմուանալի մնան նրա խելացի և համարձակ խորհուրդները, —համարձակ՝ առանց մնապարծութեան, խելացի՝ առանց վիրավորելու ուրիշի ինքնասիրութիւնը»: «Ես կարիք չեմ համարում թուել ու գրուատել այստեղ նրա անձնական արժանաւորութիւնները: Յարեկամները ճանաչում են նրան և չեն մուանալ: Մենք կանգնած ենք այժմ այն կանանցից մէկի գերեզմանի առաջ, որոնք տեսնում են իրենց մեծագոյն բաղդաւորութիւնը այն բանի մէջ, որպէսզէ ուրիշներին բաղդաւորեցնեն»: 97)

Կնոջ մահից յետոյ Մարքսը համարեա կէս կեանք է վարում: Նրա առողջական գրութիւնը մշտապէս վերականգնելու հեռաւոր յոյսիր անգամ չէր ցոյց տալիս: 1882 թ. բժիշկների խորհուրդով գնում է նա Ալժիր, ուր երկու ամիս մնալով և փոքր ինչ կազդուրուելով գալիս է հարաւային Թրանսիա՝ Մօնակօ, ապա Պարիզ իր աւագ դստեր (դարձեալ Եննի անունով) —Լօնգէի կնոջ—մօտ: Մեպսիմբերին Մարքսը կրկին վերադառնում է Լօնգօն: Մի քանի ամիս անցած վրայ է համում

97 II. Լաֆարգ, «Мои воспоминания о Карлѣ Марксѣ», եր.  
31—32.

մի այլ դժբախտութիւն,—կարճատե հիւանդութիւնից մեռնում է նրա աւագ գուստը՝ ենին, Մարքսի ամենասիրելի աղջիկը։ Դրա մահը ևս մեծ հարուած է հասցնում ծերունի հօր առանց այն էլ քայլայուած ոյժերին։ Մարքսի կենաց օրերը հաշուած էին, բժշկական բոլոր արուեստական միջոցները յոյսերն ու խորհուրդները,—ապարդիւն ևն անցնում։ Քայլայիշ բացիները կազմալուծել էին երբեմնի այնքան կարծր օրգանիզմը, նրա թոքերը վնասուել էին մահացիօրէն։ 1883 թ. մարտի 14 ին, ժամը 2-ին, 30 բոպէին (կէսօրին), իր բաղկաթուի վրայ նստած, առանց չարչարանքի և ներքին մաքառումների կարլ Մարքսը 65 տարեկան հասակում ննջում է յաւիտեան—տալիս է իր վերջին լուռ հրաժեշտը այն աշխարհին, որի ծոցում նա ծնուեց, որի համար նա ապրեց և որի ապակայի համար նա անդուլ ու անդադրում կրուեց ու մարտնչեց։

Ֆրիդրիխ Էնգելսը Մարքսի մահուան օրը անմիջապէս գրում է Լիրկնեխտին նամակ, ուր ասում է ի միջի այլոց հետեւելլը. «Մեր դարու երկրորդ կէսի ամենամեծ գլուխը դատարկ է; այլեւ մտածելուց»։ «Չնայելով որ ևս այսօր երեկոյեան տեսնել եմ նրան—շարունակում է էնգելսը—անկողնի մէջ զիակնացած պառկած, այնուամենայնիւ չեմ կարողանում պատկերացնել, որ այդ հանձարեղ զլուխը դադարել է; իր հզօր մտքերով բիլմնաւորներ երկու աշխարհների (Եւրոպայի և Ամերիկայի, Բ. Ի.) պրօլետարական շարժումը»։

Ինչ մենք բոլորս ներկայացնում ենք,—ենք նրա միջոցով, և. ինչ ներկայացնում է իրենից այսօրուայ շարժումը—զա եղել է նրա տեսական եւ գործնական գործնութեան միջոցով. առանց նրան մենք բոլորս մնացած կըլինէինք կոնֆուլիայի մ.ջ» (Նօտրգիրը հեղինակինն է) 98)։

Որքան կլասիք ու իմաստալից են էնգելսի այդ խօսքերը, այնքան հիացմունք են պատճառում նրանք, իբրև անօրինակ համեստութեան արտայայտութիւն։ Էնգելսը մի անդամ չէ առիթունեցել իր համեստութիւնը ցոյց տալու աւագ ընկերոջ առաջ, չնայելով որ կըտսեր ընկերը ևս իրատեսակ խոշոր մեծութիւն է եղել և ունեցել է թէկ ոչ նոյն, լայց նմանօրինակ գլուխ, ինչպէս Մարքսը։

Մարքսի մահուան յաջորդ օրը էնգելսը գրում է Ամերիկա՝ Ինտերնացիօնալի վերջին ընդհանուր խորհրդի անդամ Զօրգէին, մահուան առթիւ մի նամակ, ուր ևս նա ի միջի այլոց ասում է հետեւել նշանակալից խօսքերը. «Բնական անհրաժեշտութեամբ վրայ համնող բոլոր եղելութիւնները կըում

են իրենց միմիթարութիւնը իրենց մէջ, որքան էլ նրանք սարսափելի լինեն: Նոյնը և այստեղ՝ Գուցէ զօկտօրների արուեստը (բժշկական միջոցները. Բ. Ի.) կարողանար Մարքսին միքանի տարի ևս կեանք պարզեցի. մի անօդնական... ոչ յանկարծ, այլ աստիճանաբար մահացող էութեան կեանք: Սակայն մեր Մարքսը չէր կարող այդ տանել: Ապրել, այնքան անկատար թողնուած աշխատանքներ թափուած առաջը. ունենալ Տանտալոսի ցանկութիւն այն բոլորը աւարտելու, բայց տնկարող լինել,—ոչ, գա հազար անգամ աւելի զան կը լինէր Մարքսի համար, քան գիւրին մահը, որ վրայ հասաւ նրան: «Մահը դժբաղութիւն չէ նրա համար, ով մեռնում է, այլ նրա համար, ով գերակենում է» (Üherlebt), սովորութիւն ունէր Մարքսը կրկնելու Եպիկուրի այս խօսքերը: Եւ այս հզօր, հանձարեղ մարդուն արուեստական կերպով (բժշկական միջոցներով) սնել ու պահպանել որպէս մի տերուած գոյութիւն,...—ոչ, հազար անգամ աւելի լաւ է, ինչ եղել է, հազար անգամ աւելի լաւ է, որ միւս օրը տանենք մենք նրան գերեզման, ուր ննջում է իր կինը:» Մարդկութիւնը նուազուեց մի զիսվի, եւ իրաւ ամենանշանաւոր զիսվի, որ գոյութիւն ունէր ներկայումս: Պրօլետարիատի շարժումը առաջ կերթայ իր ընթացքով, սակայն վերացել է այն կենտրոնական առանցքը (Մարքսի մասին է խօսքը. Բ. Ի.), որին ֆրանսիացիները, սուսները, ամերիկացիք, գերմանացիները դիմում էին վճռական րոպէներին, որպէսզի ամեն անգամ ստանան նրանից այն յատուկ ու անհակասական խորհուրդը, որը տալ կարող է միայն հանձարը և կատարեալ իրազեկը» (99) (նոտրգիրը մերն է):

Դարձեալ մի նմուշ կրտսեր ընկերոջ անսահման հասեստութիւնից: Խոստովանելուէ, անպայման, որ էնգելսը իրաւացի չէ իր նկատողութեան մէջ: Կենտրոնական առանցքը սլրօլետարական շարժման ամբողջովին չի վերացել, այլ միայն այնքան որքան այդ Մարքսին է վերաբերում: Իսկ այնքան, որքան դա իրան էնգելսին է վերաբերում, պահպանել է կենտրոնական առանցքը իր ոյժն ու ազգեցութիւնը մինչև 1895 թ., մինչև էնգելսի մահը: Այն, աւագ ընկերոջմահից յետոյ, կը բարսեր ընկերը, որպէս մի միջազգային-պրոլետարական վետերանուահվիրան, շարունակեց կրկնակի և երրակի ջանքերով՝ լինել բոլոր սոցիալիստական կուսակցութիւների խորհրդատուն:

(99) «Fr. Engel an Zorge» (տես «Briete und Auszüge aus Briefen an J. A. Sorge u. Auszüge», կը. 187—188.

Երեք օր յետոյ, մարտի 17-ին, Մարքսը ընդմիշտ իջնում է սառը հողի մէջ, էնգելսը արտասանում է իր անմոռանալի ընկերոջ գագաղի վրայ մի ճառ, որ նա իմիջի այլոց արտայայտում է հետևեալ արժանայիշտակ մաքերը:

«Ինչպէս որ—ասում է նա—Դարվինը գտել է օրգանական բընութեան գարգացման օրէնք, այնպէս էլ Մարքսը գտել է մարդկային պատմութեան գարգացման օրէնքը: Մինչև օրս իդէօլոգիական մոլորութիւնների տակ թագնուած այն հասարակ իրողութիւնը, որ մարդիկ պէտք է ամենից առաջ ուտեն, խմեն, բնակուեն, հագնուեն, նախ քանի քաղաքականութեամբ, զիտութեամբ, գեղարուեամսվ, կրօնով և այլն զրադուել կարող են. որ, հետևապէս, անմիջական նիւթական-կենսական միջոցների արդիւնաբերութիւնը և դրա հետ միասին իւրաքանչիւր տընտեսական գարգացման աստիճանը՝ մի ժողովրդի կամ մի զարբեցանի, կազմում է այն հիմնաքարը, որից գարզանում են (կամ որի վրայ կառուցւում են Բ. Ի.) պետական հիմնարկութիւնները, իրաւական հայեցողութիւնները, գեղարուեստը և նոյնիսկ կրօնական պատկերացումները տուեալ մարդկանց, և որից էլ պէտք է բացատրել այդ բոլորը.—բացատրել ոչ այնպէս (իդէալիստական անսակէտից, Բ. Ի.), ինչպէս մինչ այժմ է եղել, այլ ընդհակառակը»: 100)

Մարքսի զուստը—Աւելինի կինը—Էլեանօր, նոյն թուականին գրում է «Progress» անունով Լօնդօնի մի ամսահանդէսում (№ 5) իր հօր մասին մի ընդպարձակ կենսագրական, որ փակում է Շեքսպիրի հետևեալ խօսքերով (որպէս գերեզմանագիր):

«— —the elements  
So mixed in him that Nature might  
And say to all world: This was a man!»

«— —Այսպէս խառնում էին  
Տարբեր նրա մէջ, որ արտաքերում է ընութիւնը  
Եւ որոնք աշխարհին յայտարարում են՝ սի մարդկը: 101»

Այս, նա մի մարդ էր առանձնայատուկ մեծութեամբ, առանական բոլոր խօչոր գծերով, անմեռ հանճարի բնատուր առաքինութիւններով: Նա մի մարդ էր, օժտուած երկաթէ կամքով, անյողողով ու անընկճելի էներգիայով, անպարտելի ոգով, անհատ յոյսերով, անվեհեր ձգտումներով: Եւրոպական ըէտակցիա-

100) «Der Sozialdemokrat», 1883 թ, №13.

101) W. Liebknecht, «K. Marx zum Gedächtniss» եր. 19.

յի և բռնապիտութեան բոլոր հալածանքներն ու ճնշումները, տարագրութեան դառն ծանրութիւնը, անտանելի զրկանքներն ու նեղութիւնները մազաչափ անգամ յետ չկասեցրին պրոխտարիտի մեծ բարեկամին իր մարտական դաշտից: Նա մի մարդ էր, որ 20 տարեկան հասակից սկսած ամենայն հաւատարժմութեամբ հետեւել է Դանակի նշանաբանին՝ «Հետեիր ճանապարհիդ և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են», —ինչ ուզում է, թող խօսէ ու գործէ կառավարական, բիւրօկրատական-ոստիկանական Եւրօպան իր գիտնական կաճառների պաշտօնական ներկայացուցիչներով, իր բուրժուական և ֆիզօդալ արիստոկրատիական հասարակական կարծիքով, —փոյթ չէր Կարլ Մարքսի համար: Նա մի մարդ էր, գաղափարի մի անդուգական զինուոր, խրոխտ ու համարձակ, խիզախ ու անպարտելի, որ իր բոլոր ոյժերով ու մեծութեամբ նույիրուելով մարդկութեան ատուած ու արհամարհուած, ճնշուող ու շահագործուող դասի սրբազն դատին, ամենայն խնամքով ու ճշտութիւնը ձեռակերտել է այդ դասակարգի—զրա հետ միասին և ընդհանուր-մարդկային հասարակութեան—ազատազրկութեան դիտական շինքը:

Դա մի փշոտ ու մացառու ճանապարհ է, քայլ եւ այնպէս պատմական միակ հաստատուն ուղին, որով ընթանում է մարդկային հասարակութիւնը գէպի լուսաւոր ու ազատ ապական:

Կարլ Մարքսի մահուանից յետոյ, տարակոյս չկայ, որ Փրիդրիխ Էնգելսի գործնական ու տեսական աշխատանքները պիտի կրկնապատկուէին: Աւագ ընկերոջից յետոյ կրտսեր ընկերը ոչ միայն շարունակեց մնալ խորհրդատու: Կենտրոնատեղին միջազգային պրօլետարիատի շարժումը գեկավարող կուսական մարմինների համար, այլև Մարքսի թողած անկատար աշխատութիւնները կազմում էին Էնգելսի համար ի կատար ածման մի խիստ ծանր, քայլ նոյնքան եւ հանելի աւանդ: Էնգելսը պիտի հոգար «Կապիտալ»-ի առաջին հատորի երրորդ հրատարակութիւնը և աւարտէր յաջորդ հատորների մանուսկրիպտի թերութիւնները, ապա հրատարակէր: Երկրորդ հատորը հրատարակում է Մարքսի մահից երկու տարի յետոյ, 1883 թ., նրա ծննդեան օրը (մայիսի 5-ին), իսկ երրորդ հատորը (իր երկու մասերով) հրատարակում է 1894 թ., մի տարի առաջ Էնգելսի մահուանից: Անպայման այդ ծանր աշխատանքը շատ է խանգարել Էնգելսին ինքնուրոյն հետազոտութիւնները շարունակելու: Եւ գաղափար կազմելու համար, թէ ինչպիսի գըժուարութիւնների ու բարդութիւնների հետ են կապուած ե-

դել՝ փշրանք ձեռագրներից վերակազմել «Կապիտալ»-ի և հատորի շարունակութիւնը այնպիսի հարագատութեամբ, ինչպիսին ինքը Մարքսը կաներ, — դրա մասին գաղափար կազմելու համար, պիտի կարդալ իրա էնդելսի ընդարձակ յառաջարան-ները:

Էնդելսի հրատարակչութեան ծառայութեան ամենագեղեցիկ, պատկերաւոր գնահատութիւնը տուիլ է դոկաոր Վիկտոր Ազլերի գրիչը «Wiener Arbeiterzeitung»-ի մէջ: «Մարքսի Կապիտալի» և III հատորների հրատարակութիւնը—ասում է նա—կազմում է վերջին ընծան, որ էնդելսը նուիրել է պրօլետարիատին: Մինք ասում ենք լոկ «հրատարակութիւն», մինչդեռ դա իրապէս մի նորաստեղծում է, մի բարձր գործի պահում, չնայելով որ էնդելսը մնա հոգիների համեատութեամբ (նոտըրգիրը մերն է) իրենը ցածր էր դասում իր ընկերութերից: «Կապիտալի» երկու հատորներից էնդելսը ամբաժայի կառուցուածքով մի յարատե արձան. է կանգնեցրել իր ընկեր Մարքսի համար, և առանց ինքը ցանկանալու՝ քանզակել է նա այդ արձանի վրայ իր անունը անջնջելի տառերով: Ինչպէս որ Մարքսը և էնդելսը կեանքի մէջ անբաժանելի են եղել, այնպէս էլ «Կապիտալ»-ը չպիտի մէկի անունով կոչուի, այլ տնտեսագիտութեան պատմութեան մէջ պէտք է միշտ կոչուի Մարքսի և էնդելսի «Կապիտալ»-ը:»

Սակայն «Կապիտալ»-ի վերջին հատորներով չէ սպառւում Կարլ Մարքսի մտաւոր աւանդը: Մինչեւ օրս իսկ շարունակարար հրատարակում են նրա թողած միջրանքները, գրական արտադրութիւնները: Միակ մարքսիստը, որ ձեռնհաս է էնդելսի հրատարակչական ծառայութիւնը կատարել Մարքսի մնացած ձեռագրների նկատմամբ, գա, անտարակոյս, Կարլ Կառուցիին է: Նա ձեռնարկել է հրատարակելու՝ աւելի ճիշտ լրացնելու և աւարտիլու Մարքսի վերջին խոշոր աշխատութիւնը՝ «Theoretien über den Mehrwert» («Թէօրիաներ յաւելեալ արժեքի մասին») վերնագրով, ուը Մարքսը ժամանակագրական կարգով բննադրատում է բազմաթիւ յայտնի տնտեսագէտների թէօրիաները և տնտեսագիտական սիստեմները: Կառուցկին հրատարակել է արդէն երկու հատորը (1905—06 թ.), շուտով լոյս կը տեսնէ երրորդը:

Խօսել այստեղ «Կապիտալ»-ի 1 և 11 հատորների և Մարքսի վերջին աշխատութեան մասին, ինչպէս վարւում էինք իր օրով լոյս տեսած գրական վաստակների նկատմամբ, աւելորդ ենք համարում, որովհետեւ Մարքսի թէօրիաների մասին խո-

սելու ժամանակ յաճախ պիտի յիշատակուեն և շոշափուեն նրանց մէջ պարունակող պրոբլեմները:

Այստեղ կարեոր ենք համարում ժամանակազրական կարգով թուել այն ըոլոր երկերը (բացի բազմաթիւ նամակներից), որ հեղինակել ու արտադրել է Մարքսը՝ առանձին գըրքերով, թէ հրապարակախօսութեամբ։ Կը յիշատակենք միայն առաջին հրատարակութեան թուականը և տեղը։

1842 թ. Քեօլոնում Մարքսը հանդէս է գալիս իր բազմաթիւ յօդուածներով (մեծ մասամբ առաջնորդողներ) «Rhenische Zeitung» օրգանում։—1844 թ. Մարքսը Խուգէի հետ միասին հրատարակում է Պարիզում «Deutschfranzösische Nahrbücher» հանդէսը, ուր նա երկու նշանաւոր յօդուածներ է գրում Հեգելի իրաւական փիլիսոփայութեան և հրէական հարցի մասին։—1845 թ. Ֆրանկֆուրտում (Ձ. Ա.) Մարքսն ու Էնգելսը հրատարակում են «Սուրբ ընտանիքը» նշանաւոր պոլիմիկական գրուածքը։—Փոքրիկ յօդուածներ (անոնիմ) Պարիզում հրատարակուղ «Vorwärts» օրգանում, 1844—յօդուածներ (անոնիմ) Բրիւսելում հրատարակուղ «Deutsche Brüsseler Zeitung» օրգանում, 1846—47։—Փիլիսոփայութեան թշուառութիւնը, Փարիզ, 1847 թ.։—«Ճառ ազատ առևտրի մասին» Բրիւսել, 1848։—Մարքսը Էնգելսի հետ միասին՝ «Կոմունիստական մանիքնեստը», Լոնդոն, 1848։—յօդուածներ «Neue Rhei-nische Zeitung» օրգանում, Քեօլոն, 1848—49 թ., որից արտադրում է նրա «Վարձու աշխատանք և կապիտալ» ըրոշիւրը։—Երկու քաքարական պրօցեսներ (Մարքսի երկու պաշտպանողական ճառերը) 1849 թ. Քեօլոնում։—«Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Գիրմանիայում», 1848 թ., Լոնդոնում։—«Neue Rhei-nische Zeitung Revue», Համբուրգ, 1850 թ., ուր տպաւում է ի միջի այլոց Մարքսի «Դասակարգային կոփիւները Ֆրանսիայում» աշխատութիւնը։—«Լուի Բոնապարտի 18-րդ բրիւմերը», Նիւ-Նօրք, 1852 թ.։—«Մերկացումներ Քեօլոնի կոմունիստների պրոցեսի մասին», Բագել, 1852 թ.։—Յօդուածներ «New-York Tribune» օրգանում, 1853—1860 թ.։ Ճիշտութիւնը, Լոնդոն, 1859 թ.։—«Քաղաքատնականութեան քննադատութիւնը», առաջին տետր, Բերլին, 1859 թ.։—Պարոն Ֆոգտը, Լոնդոն, 1860 թ.։—«Միջազգային րանուրական խմբակցութեան ինառուգուրալ ազրեսը», Լոնդոն, 1864 թ., առաջին համացիսացիօնալի ընդհանուր խորհրդի ըոլոր հրատարակութիւնները մինչև 71 թ., Լոնդոնում։—«Կապիտալ» I հատ. 1867 թ. Համբուրգում, II հատ. 1885 թ. և III հատ. 1894 թ.։

Նոյն քաղաքում:—«Թէօրիաներ յաւելեալ արժէքի մասին»:  
I և II հատ, 1905-06 թ. Շտուտգարտում:

Սա ըստ հնարաւորին կատարեալ ցուցակն է Կարլ Մարքսի մտաւոր արտազրութիւնների, որ թւում է էնդելսը մինչև իր մահը հրատարակուածները:

Դեռ որ աստիճան բազմակողմանի ու բեղմնաւոր կը լինէր Մարքսի գրիչը, եթէ նա իր տարազրուած դրութեամբ այնքան մեծ զրկանքների ենթակայ չինէր շարունակ, եթէ նա քիչ զրադուէր բաղաքական խնդիրներով, այնքան չխորասուզուէր պրակտիկայի, ադիտացիայի մէջ, այլ ամրողջապէս նուիրուէր կարինետային՝ գիտական գործունէութեան. նոյնիսկ նրա երկարուուն հիւանդութիւնը և շուտափոյթ մահը (65 տարին մեծ հասակ չէ) թոյլ չառին նրան սկսածը լրացնել, մինչդեռ Մարքսը շատ նորերը պիտի սկսէր:

Մինչ տւարտեցինք Կարլ Մարքսի կենսագրականը: Մինչ այստեղ մենք ճանաչեցինք Մարքսի կեանքը, նրա հրապարակախոսական, սոցիալ-քաղաքական գործունէութիւնը և իմացանք նրա գրական վաստակները,—ասել է լի ու լի բովանդակութիւնը մեր յօդուածների և սերիայի մէջ յայտարարուած բաժնի: Մինչև այստեղ մենք ճանաչեցինք Մարքսի պրակտիկ գործունէութիւնը, հրապարակական-հասարակական մեծութիւնը, կարձ՝ նրա յեղափոխական դէմքը: Մեզ մնում է դեռ ևս ճանաչել Մարքսի տնօսական գործունէութիւնը, կարինետային-գիտուկան մեծութիւնը, կարձ՝ նրա մտաւոր-գտափարական դէմքը: Սակայն նախքան այդ մեծ բաժնին անցնելը, մենք մի փոքրիկ յուելուած ունենք Մարքսի ընդհանուր կենսագրականին յարակցելու. մենք կարենոր ենք համարում՝ պատկերացումը լրացնելու համար, ճանաչելու Մարքսի նաև մարդկային բնուորութեան մեծութիւնը. Մարքսը, որպէս անձնաւորութիւն, որպէս ընտանիքի հայր, ամուսին, ընկեր, հասարակութեան անդամ և այլն:

Այդ խնդրին կը դառնանք մենք միւս անդամ:

(կը շաբանակուի)

Բ. Իշխաննան:

## ՔՆՆԲԳԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՏԵՇԸԽՈՍՈՒԹԻՒՆ

Դ. ՊԵՂԱՅԱՆՈՎ ԹՅԺ Եւ բԱՅՈՒԹԻՒՑ. հրատ. «Կեանք»ի, գինն է 5 կոստ.

Յեղափոխական ուղիղ զործելակերպը կուսակցութիւնների գործունէութեան ամենակարևոր մասն է: Խակմիտ խենթուլների կամ յեղափոխութեան Ալֆոնսների մշակած տակտիկան ալա՝ մեր ազգային-յեղափոխականները միայն մի հետեանը է ունենում, 300 հազար անդէն ժողովուրդի սոսկալի ջարդ, հազարաւոր գիւղերի աւելուումք, սով, գաղթ և ամբողջ գաւառների ամայութիւն, թշուառութիւն: Այդ տակտիկան ձեռնուու է «բուրժուաններից» չորթած փողերով ապրող «ղեկավար» Ալֆոնսներին միայն, իսկ ժողովուրդը տանում է դէպի կատարեալ կործանում, այլասերում: Համաշխատիկին պատմութեան մէջ դժուար է գտնել աւելի սոսկալի ոճրագործութիւններ մի ժողովրդի կեանքի դէմ քան այնպիսի անարխիստական—ավանտիւրիստական—Փիդայական փորձեր, որոնք կատարւում են մի խումբ անդիտակից ըմբռուտների կողմից հայ մասսան զօռով «ավատամբեցնելու» միտումով: Բայց ապակիրթ երկըրներում ճիշտ է լինում են անհատական անարխիստական փորձեր, որոնց զո՞ր ինքը փորձ կատարողն է: Իսկ մեզանում, ժողովրդին զօռով թնդանօթի և սուինների աւած մղողները իրանը կտուրներից են նայել ընդհարման վրայ և ծլկել վտանգից իրանց թանգագին անձը հայ ազգի համար պահպանելու նպատակով.... Այդպիսի «յեղափոխական» «ղեկավարները» ոչ միայն խակմիտ մարդուկներ են, այլ և բարոյական ճիւազներ, որոնցից ամեն բան սպասելի է, բայց ոչ իսկական յեղափոխականի գիտակցութիւն:

Ավանտիւրիստական-բունտարական այդ ցուցամոլ տակտիկաին ամենաուժեղ հարուածը տալիս է գիտական սոցիալիզմը:

Սոցիալ-գեմօկրատների այն մասը որ ըմբռում է Մարքսիսկուլսեան թէորիայի սգին, երբէք չի կարող համակրել ապստամբական խլրտութների այն սխատեմին, որի հետեանը տնտեսական զարդացման կատարեալ կործանումն է:

Պլեխանովի այս բրօշիւրի մէջ շօշափուած է այն հարցը թէ բանուոր դասակարգի լիակատար ազատութեան համար մզուող կոռուի մէջ ո՞րպիսի դործելակերպ պիտի ընդունուի: Անարխիստների համար յեղափոխական միջոցները և բռնի գործողութիւնները հոմանիշ են: Նոյնը և մեր quasi—սոցիալիստ դաշնակցականների մօտ, որոնք զեր ամառս ներդողներ էին շոայլում անարխիստներին, աշնանը՝ սպառնալիքներ, իսկ այսօր... հալածում են և կոտորում նրանց...

Պէտք է տարբերել ոյժը բանոթիւնից:

Պլեխանովը դանում է որ «ապստամբութիւնը» և «ըսնի գործողութիւնները» միշտ հանդիսանում են իրեւ հակայեղափոխական ակտեր, երբ փոխանակ մեզ մօտեցնելու մեր նպատակին,—աւելի հետացնում են նրանից: Մինչդեռ այն միջոցն է ամենայեղափոխականը, որ եղածներից աւելի արագ է հասցնում մեզ առաջադրած նպատակին—յեղափոխութեանը:

Անարխիստները թէև իրենց ուզզութեամբ կողմնակից են յեղափոխութեան, բայց իրօք իրենց գործելակերպի շնորհիւ ուժեղացնում են բէակցիան, դառնում են նրա ձեռքում գործիք: Միւս կողմից կապիտալիստները թէև կողմնակից են տիրող զրութեան, սակայն անկախ իրենց կամքից արագացրնում են բուն յեղափոխական ընթացքը, որովհետև ինքը կապիտալիզմը բերում է իր հետ միասին, հասարակական-տընտեսական կազմի հինական փոփոխութեան շնորհիւ, նաև իր գերեզմանափորին—բանուորութիւնը: Իւրաքանչիւր մի գործունէութիւն, որ փոփոխում է երկրի տնտեսական պայմանները, արագացնելով կապիտալիստական կարգերի զարգացցումը—արդէն յեղափոխական զործունէութիւնն է: \*) Հետեւըար, այն գործունէութիւնը, որի հետեանքը մի երկրի տնտեսական կատարեալ քայլքայում է, աղքանակութեան բնաջնջում և մնացածների մուրացկանութիւն—բէակցիօն «յեղափոխութիւնն է»: Մեր Դաշնակցութեան և Հնչակեանների 15 տարուայ գործունէութիւնը, օրինակ, միայն բէակցիա և չարիք է եղել հայ ժողովրդի համար: Տնտեսական քայլքայումից, ժողովուրդը կուտորելուց բացի այդ երկուսն էլ անբարոյականացրին աշխատասէր հային, նրա մէջ առաջ բերան մաֆիական ընկերակացութիւններ և դուլդուրութիւն, որոնցից ազատուել շատ

\*) Այս մտքով էր որ մենք ասել էինք շատ առաջ. «Խաղաղ կուլտուրական զարգացումը ինքը արդէն մի հզօր գործոն է և սոցիալիստական կարգերի աստիճանական յեղափոխողը» («Մուլճ» 1906, № 6, եր. 153 և № 8, երես 89).

դժուար պէտք է լինի: Այդ մոլար վարդապետութիւնների գէմ մաքառողը կարող է լինել միայն մաքուր սոցիալ-դեմոկրատիան:

Պրոլետարիատի դասակարգային գիտակցութեան զարգացումը ժամանակակից սոցիալիստների համար ամենայեղափոխական միջոցն է: Սոցիալ-դեմոկրատները չեն ժխտում ստիպողական միջոցներն, ինչպէս և չեն հրաժարում խաղաղ ազիտացիայից, նրանք շատ լաւ գիտեն որ որոշ գէպքերում բռնի միջոցներն անխուսափելի են: Բայց իմանալով այս միևնույն ժամանակ և գիտեն այն թէ այդ ստիպողական ոյժի և բռնութեան միջն խոր անդունդ կայ: Եւ սոցիալ-դեմոկրատները հէնց նրան են ձգտում որ ձեռք բերեն միայն և միայն այդ ոյժն: Ինչ վերաբերում է բռնութեան—այդ կարող է գործադրուել միմիայն որոշ գէպքերում, միշտ ի նկատի ունենալով և կշռելով հետեւանքները: Բունարական—անարխիստական գործելակերպը «Փիդայիդմը» միայն պարտութիւն են բերում և բէակլցիան ուժեղացնում տասնեակ տարիներով յետ պցելով մի հրկի բնական էվօլիւցիան:

Ի նկատի ունենալով այն խուժանամիտ վարդապետութիւնը լեղափոխութեան մասին որ պատուաստել են մեր ժողովի մէջ Փիդայական—դոչիական տիպի քարոզիչները, ցանկալի է անշուշտ իբրև հակաթոյն մեր ժողովրդի լայն խաւերում տարածուած տեսնել յիշատակած բրոշիւրի նման զրբեր: Այս գրքոյկի թարգմանական լիզուն զժբախտաբար այնքան էլ զիւրածարս չէ:

---

Փիդայական զրականութիւն. 1) Ա. Ահարոնիան «Ազատութեան ճանապարհին» 2) Մ. Յովհաննիսեան «Դաշնակցութիւնը և նրա հակասակորդները», «Գորդեան հանգոյց. 3) Ա. Մելիք Սողոմոնեանի հրատարակած «Արեան Զայներ», 4) «Դրօշակի» շարականները նուիրած դաշնակցութեան սուրբ վկաներին, մարտիրոսներին և առաքեալներին:

---

Նկատուած է որ զանազան աղանդների հիմնադիրները այնքան ծայրայեղ չեն եղել, որքան նրանց ֆանատիկոս հետեւողները, մանաւանդ երբ հարց է եղել պաշտպանել այդ աղանդի արիստութեան միջոցով նաև վարիչների, անձնական, փառասիրութիւնը և զահասիրութիւնը: Այդ վարիչները, օրինակ, քրիստոնէութեան, մահմեդականութեան և ճիզուիթութեան

մոլեուանդ շէֆերը, մի կողմից անզուսազ հալածանք են քարոզել իրենց գերիշխանութիւնը չընդունողների դէմ, միւս կողմից ամեն տեսակը բարիքներ չնորհել հետևողներին, հակառակորդների դէմ հուր, սուր, տանջանք, հալածանք, հայհոյանք, զրպարտութիւն, արատաւորուն, իսկ հետևողների ոճիրների և կեղծիքների քողարկում, խրախոյս, պաշտօններ, իշխանութիւն, գովասանք, փառարանութիւն, ներբող, խնկարկութիւն սրբասացութիւն, աստուածացում և այլն և այլն: Քննադատութեան, գիտակցական վերաբերմունքի դէմ՝ հաւատաքննութիւն, սուր, հուր, նզովք, իսկ ոչխարամիտ հետևողների, խուժանի երեսին շողոքորթութիւն, քծնութիւն և սուտումուտ առասպելներով երկրի և երկնքի արքայութիւն: Եւ ահա միշտ խուժանը մոլորուած, խարուած պահելու համար խնամակալում են նրան ամեն տեսակ «մոլար» վարդապետութիւններից, արգելում նրան լսել և կարգալ հակառակ կարծիքներ, տարածում են տասնեակ հազար օրինակներով ժողովրդի առողջ միտքն և բարի խիղճը խեղաթիւրող հիւանդու գրուածքներ, թոյն, օֆիօն, հաշիշ: Եւ ապիկար, անգիտակից խուժանը հիպնոսացած ինքն է միշոյներ տուլիս որ իր ուղեղն ու սիրտը այլանդակեն, տպուկանեն այդ «ուղիղ» վարդապետութեան մէջ շահազրդուած զա: Նազան անվանտիւրիստներ: Մի այդպիսի «ուղիղ» վարդապետութիւն, մասսային հոգեկան հիւանդութիւն, փսիխոզ տարածող ընկերակցութիւն ներկայացնում է մեր կեանքում դաշնակցութիւն կոչուած «կուսակցութիւնը», որ սկզբի տարիների միամիտ իդէալիզմն և ուսուափամը վերջին 10 տարիների ընթացքում մոռացութեան տալով գառաւ ուղղակի մի ճիզութական ոճրախնած միութիւն: Երբ հնարաւոր եղաւ Ռուսաստանում ազատ քննադատել այդ ընկերակցութեան գործերը — գժուար չէր ժողովը դիտողների կարկտի տակ գրանք զլուխ կորցրած մերթ կրուշեվանեան սպառնալիքներ էին թափում, մերթ լուտանք, այսօր մի սուտ էին տառում, վաղը մի նոր սուտ հնարելու համար որ առաջուայ սուտը ծածկեն, այսօր մի զրպարտութիւն էին տնում, վաղը միւսը, այսօր մի տեղ պաշտպանում էին այն, ինչ վաղը մի այլ տեղ նոյն բանը պախարակում էին: Այսօր սուրբ էին անուանում մէկին, որ վաղը նրան խաչազող ցոյց տան, այսօր մէ-

կին «հերոս» էին շինուած, որ վազը նրան «խուլիդան» յորջործն, այսօր բարձրացնում էին ցեխից սրիկային, որ վազը շիտակ մարդուն ցեխի մէջ գլորեն:

Այժմ շատ բան պարզուեց ժողովրդի առջև և գաշնակցութիւնը աշխատում է մի կերպ դուրս պրծնել իր վատ գրութիւնից և փրկել իր անցաւոր փառքը, հրապարակ նետելով իր «ականաւոր հեղինակութիւնները», Նորից զբաղուել զրանց արտատպած «գոհարների» գերլուծմամբ այժմ աւելորդ աշխատանք է: Վերև յիշած փիզայական հրատարակութիւնները հարուստ նիւթ են պարունակում «դաշնակցական փիլիսոփայութիւնը, քաղաքականութիւնը և գեղարուեստական ստեղծագործութիւնները» լաւ ճանաչելու համար: Մի վախեցէք հօմօծէն փիլիսոփայի կարկատաններից և սովիստութիւններից, նրանք այնքան հակասական են և գոհնկորէն կեղծ որ դժուար չի լինի քննական բովից անցնել այդ հետերօժէն կոյտը:

Միդայական գեղարուեստը՝ «բելետրիստական» և «բանաստեղծութիւնը» մի մօտիւ ունի. աստուածացնել ֆիզային, հայդուկին և հաւատացնել ամբոխին թէ արևան վրէժինսդրութիւնը, քիւրդ և տաճիկ սպանելը միակ ճանապարհն է «Հայատանը ազատելու»: Այդ «արեան բոմանտիզմը» անհատական քաջարաւութեան կուլտը հասցրած է զառացանքի, Փանատիկոսութեան: «Մանր-բուրժուական ուստոպիզմի» կատարեալ սնանկութեան համար ուրիշ գրական ապացոյցներ հարկաւոր չեն:

«Արիւն վոթել»—ահա մարդկային միակ արժանիքը, ֆիզայական ըմբռնողութեամբ:

Եւ ժողովրդի մէջ տարածում են այդ այլասերող գրուծքները, այդ այլանդակ երգերը տասնեակ հաղար օրինակներով... մեր առջև կարծես կանգնած լինեն պտտող դերվիշների աղանդի նման մի ցաւագար ընկերակցութեան անդամներ և «արիւն, արիւն, մոլթէք, կոտորեցէք, քրդի և թուրքի արիւնը խմէք» ձիւաղային պարի մէջ մոլեզին կառանչներ արձակում և ողերում իրանց աղանդակիցներին:

Այդ ձիւաղային արիւնոշտութեան քարոզները մեր կեանը մէջ գտել են արձագանքներ: Եւ թէ ինչպէս է ըմոնել «ժողովուրդը» այդ «փիլիսոփաններին» և հրապարակախօս-փանտաստներին—այդ երեսում է «Արեան Զայնի» մէջ իմի ժողոված ֆիզայական ստեղծագործութեան գոհարներից:

Աւելի կանգ առնենք «Արեան ձայներ» կոչուած ֆիզայական երգերի ժողովածուի վրայ: 125 երգերից մի զլուխ լըսում էք. «Փիդային էր գաշնակցական՝ վրէժ լուծում. սոսկաց

քիւրզը, մի ժամուայ մէջ Մարզիկ ցեղը (բրդական) ջնջուեցաւ, Խանասորայ կանաչ գաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ: Առէք հրացան և ելէք հանգէս, տանջանքի մէջ է ձեր մայր-հայրնիք. միթէ չէք լուս նա կանչում է ձեզ, օղնութեան հասէք, հարապատ որդիք: Ձեր հրացանը վրէժով լցրէք, զարկէք թըշնամուն, թշնամուն դալան, զարկէք ու բնկէք, սիմիայն թէ կեցցէ, կեցցէ Հայաստան: Դէհ կոռէք տղերք, մինչև շունչ վերջին, արժանի լինիք փառաց պսակին: Մեռնինք յուսալով, մերն է ապագան, մերն է և կէցցէ, կեցցէ Հայաստան: Մշու դաշտերը, Վան և էրզրում պիտի ողողենք թշնամու արեամբ. այդ սուրբ երդումով ուխտել ենք ազգիս տալ Հայաստանին սուրբ ազատութիւն: Միրելի դաշոյն, ախ, ատրճանակ, մանաւանդ մոսին, կեանք ևս գու հայուն, երբ քեզ ձեռք առնէ ֆիդան, երբ քեզ ձեռք առնէ հայդուկ ընդունակ, ցիր ու ցան կանէ թշնամու բանակ (!): Թշնամուց վրէժ, սրտիս թախիծը լուծծող տաճիկից (?), ցաւ փարատողը: Ժնկեց եկած նուէք թանկագին, կոռուզ, անձնուէք այն քաջ ֆիդայուն ներշնչէ հոգի վեհ ազատութեան: Այս զէնքով փրկենք ամբողջ Հայաստան (!): Ժընեից եկած մոսին հրացան տես: Սուրբ Դաշնակցութեան անվեհեր անուան անշէջ կրակը տուիր ֆիդայուն, որ փութայ դնայ դէպի Հայաստան»:

«Ենա մայրիկ ևս զնում եմ, ազգիս համար զոհուելու, քաջ ընկերներով միասին անգութ քրդին ջարդելու: Պարզեցէք դրօշ վեհ դաշնակցութեան, լինի առաջնորդ մեր ազատութեան: Եկէք միանանք ով քաջ հայդուկներ, վրէժ են կոչում մեր նահատակներ, մօսին հրացանը ձեռքերիս բռնած՝ թունաւոր փառփուշտ կուրծքներից ձկած, Զինուած, պատրաստած վկայք անվեհեր, վրէժով լցուած առիւծի նման քաջ-քաջ կուռում են թուրբի դէմ դաժան: Թուէք հայեր, թուէք դէպի Հայաստան: Արմելք, արմեմուտք, հարաւ և հիւսիս, դղրդաց ու թնդաց քաղցը աւետիս \*) հայկայ քաջ զաւակաց առոյզ կուրծքերից: Տաճկահայաստանը ոտքի է կանգնում: Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում, արիւնով ներկւում են բոլոր գաշտերը, արիւն է լոկ հոսում բոլոր գետերը. թշնամին զարհուրած փախուստ է դիմում, անթիւ աւար և դանձ հայերին թողնում. «յաղթութիւն, հաշտութիւն» գոչեցին միաձայն. թշնամին կորած է, կեցցէ Հայաստան»...

Քաջ Անդրանիկը անվախ սուր առած,  
Հայաստան դնալ վաղուց էր ուխտած,

\*) Այս, այդ... «Աւետիսիսները» և «աւետիսները»...

Աջ ու ձախ ջարդեց տաճկաց զինուորին,  
Քիւրդերից մատաղ բերել վանքերին (!?)...

«Դէս կովկասի քաջեր, տոփուծի ճռւտեր սիրէք ձեր սուս-  
սեր, առէք նիդակներ, հայ օրիորդներ, պճնեալ տիկիններ,  
ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ։ Հարուստք ձնը ոսկին  
տուէք մեր ազգին, ձեր անգին (!?) անուն յիշեն սերունդներ։  
Դէս, հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր, անցէք սար ու ձոր, ա-  
հա կռուի գաշա, թշնամին անհաշտ, մեր սուր թող ուտէ օս-  
մանհսն վաշտեր, ասաւ քաջ Մուրադ»...

Այդ Փիդայական—հայդուկային գօնքիշօտային յոխորաանք-  
ները լքցնում են ամերող գիրքը, որ մի քանի հրատարակութիւն-  
ներ է տեսնել և Փիդայականութեան սուրմոսագիրքն է։ Այն խայ-  
տառակ շովինիստական ոգին որ ներշնչել են իրապէս իրեսց  
կառողների մէջ մտաւոր—բարոյական խելագարութեան տա-  
րածող այդ Հնչակեան-Դաշնակցական ընկերակցութիւնները,  
տրտայայտւում է ամեն մի խօսքից։ Բայց ահա մի քանի կը-  
տոր «բանաստեղծութիւններ» և հայդուկային երգերից։

...Պիտի աշխատենք, որ բեղ \*) նորոգենիք.

Քո մէջ եղած թուրքերին վանինք,  
Պէտք է չունենայ տաճիկն իրաւունք,  
Թափել աչքերիցդ արիւն-արցունք。  
Այլ մեր վրէժը նրանցից առնենք,  
Մեր տուած տանջաներն կրկին յետ դարձնենք։

Ունինք մենի զէնք, ունինք հրացան։  
Կազմենք մեր խորհուրդ, առնենք մենք սահման։  
Քանի՛ մենք մնանք այլոց լծի տակ,  
Պէտք է սովորենք բանդել Տաճկաստան։  
Որ լսողն ասէ, «կեցցէ Հայտառան»։

(Եր. 29)

Եամա՞ն եկաւ ջան ֆիդան,  
Սարսափ տիրեց բանակին.  
Փախչում էին դէս լեռներ  
Վախկուս զօրքեր ահագին

(Եր. 32)

\*) Այսինքն «Անուշ Հայաստանք»

Մութ գիշերին անվախ ֆիդան,  
Ազատօրէն ան կուզայ.  
Արի գնանք Մայր-Հայաստան  
Անդրանիկը դէմ կուզայ:  
Հայերուս մէջ վասակներու  
Թիւը արդէն պակսում է,  
Հայ պատանին սուրը ձեռքին  
Նոյա մաս-մաս մորթում է

(ԵՐ. 37)

Պաշարեցին Խանաց նորեր.  
Դաշնակցութեան քաջ հայդուկներ.  
Շուն Շերիֆի բիւր վրաններ,  
Կեցցէր, կեցցէր հայ հերոսներ,  
Որ չարդեցիք շուն քրդեր:  
Յարձակուեցան քրդաց վրան,  
Սարսափեցրին Շարաֆ աղան,  
Կին ու աղջիկ, փոքրիկ տղայք.

(ԵՐԵԱ 59)

Ել, ֆիդայի, առ զէնքերդ,  
Գնա դէպի իսլամին  
Զօրքեր ցրէ, բանակ կոտրէ;  
Ճարացուր չար Սուլթանին

(ԵՐ. 90)

Կս պարծեն ինչ է չփառեմ,  
Եւ ուսում ալ ես չունեմ.  
Միայն թէ քաղցր՝ երգել գիտեմ  
Եւ զէնք չարժել սուրբ որտով  
Իմ եղբայրս է իմ մառլեր,  
Եւ իմ զարդս են վամփուշտները,  
Իմ սիրելիս իմ սարերս են,  
Եւ իմ ընկերս իմ մօսին:

(ԵՐ. 92)

Թող կորչեն տաճիկները  
Հայաստանի սուրբ հողէն,  
Խոլամական անարդ լուծը  
Թոկ ջնջուի Հայաստանին...

Հայի հացը, հայի ջուրը  
Բաւական է տամիկն ուտէ  
Եւ գարշելի պիղծ բերանով  
Հայութիւնը անարդէ:  
Աչքերի տեղ—աչքեր հանենք,  
Ատամի տեղ՝ ատամի,  
Մեր մէկ հաւը գողացողին  
Ամբողջ սուլնը թալանենք:

(Եր. 96)

Հայեր, ջարդենք քիւրդ ու տաճիկ,  
Մեր պապերի վրժքը ուժենք,  
Նրանց կայքը մէզ գարձնենք,  
Սուրբ հաւատը բարձրացնենք:  
Զարթիր, զարթիր՝ քաջ Կորկուտեան  
Զարթիր հրացանդ բռնէ,  
Քիւրդի աչքերն անվախ փորենք,  
Ատամները փշրենք,  
Լեզուն ծոծրակից զուրս հանենք  
Արտերին արճիմը հալենք եւ այն:

(Եր. 100)

Այդ անհամ, անճաշակ, առէտ, գոնեիկ, վայրենի ցնդա-  
բանութիւնները շովինիզմից բորբոքուած ուղեղներում կը կնւում  
են և Կովկասի հայ-թորքական ընդհարումներին նուիրուած  
երգերում: Այդ հիւանդու արիւնսուշտ զաշնակցական ստեղ-  
ծագործութիւններից մի երկու նմուշ էլ բերենք:

## ԹԻՖԼԻՍԻ ԵՐԳԸ

Ուրախ զուարթ դու Թիֆլիս,  
Խնջու այդսէս ես տիտոր.  
Արաստանի մայր քաղաք,  
Մտածում ես դու ի զուր  
Ո՛չ մի ազդ քեզի չոզնեց,  
Բայցի հայերիցը զատ,  
Չորս կողմից կրակ տուին,  
Հայ քաջերը հարազատ:  
Հնչակն ու քաջ դաշնակը,  
Զեռք ձեռքի տուած կրուում են,  
Թուրքերի կեղծ արիւնը  
Լիժ դառձուցին իսկապէս:

Դաշնակցութեան քաջերը  
Մանը տոած աչերը  
Վրայ տուլմն Մէյզանին,  
Թուրք չթողին կինդանիւ:  
Ժայռոտ խարիսւլիի վերայ,  
Կանգնած դաշնակցութիւնը  
Պատրաստուած հայերը  
Այրեցին Մօլի տունը եւ այն  
(Եր. 25)

### ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Համազասպը իր իմբով  
Կուկայ Խաչէն դաւառից...  
Խաչէն գաւառը սրբեցիր  
Թարաքամնայ Թուրք ցեղից...  
Աշխարհիս տէր (!?) Դաշնակցութիւն  
Քաջեր ունիս սրտալի  
Ամբով աշխարհը հռչակուեցաւ  
Համազասպը ստոնձալի:

(Եր. 132)

### Ահա և զուլդուրական գլուխ գործոցը.

Ազդդ զօրացնելու համար  
Ապրիս շատ տարի աւազակ.  
Այլոց հանգնելու համար,  
Արի համբուրիմ աւազակ.  
Զարթիր Խղճութիւնդ բաւ է,  
Խնչուս ազգիդ համար լաւ է.  
Այնպէս զործիր, աւազակ.  
Սովածութիւնից նեղացիր  
Ազգիդ օգուտ բան գողացիր,  
Վարժիդ համար աւազակ:  
Արտեղ ունիս Թշնամիներ,  
Արիւնն խմէ, միաը կեր,  
Քեզափէս էլ քաջ կտրիչ ընկեր,  
Ուրիշ էլ ճարիր աւազակ.  
Չեռքդ չվերցնես սրէն,  
Մինչեւ վիզբդ չկտրէն  
Խորուածի պէս սրիդ վրէն  
Շարիր Թշնամուդ, աւազակ:

Դու ես քո ազգիդ մշակ:  
Պատրաստէ, Թուր ու նիդակը,  
Մխէ բիւրդի Թեփ տակը  
Թող խաւարի կհանքն, աւագակ և այլն:  
(Եր. 158.)

Կոմենտարիաները թող անի ընթերցողը...

Ահա 15 տարի շարունակ ինչ ոգի են ներշնչել իրանց «պարծանք» Փիդայների և հայդուկների մէջ մեր «ռոցիալիստ» դաշնակցական «տղերքը» կամ ըստ վիլիսոփիայ Պանզլոսի «մտաւորու բարոյական հեղինակութիւնները, աչքի ընկնող ժողովրդականութիւն և հմայք» ունեցող շէփերը: Ահ են այս ազգականութիւնները! Ահա 15 տարի շարունակ ինչ ոգի են ներշնչուած:

Կարդացէք Ահարոննեանի (Ղարիբի) երկելի «գեղարուեստական» գրուածքները լէյբ-օրգան «Դրօշակում», այժմ առանձին գրքոյն կով արտատպած: Կարդացէք դաշնակցութեան լավրէատ բանաստեղծների շարականները: Դա մի նոր պապիզմ է, ճիզուիթական միջոց մի նոր մահաւատութիւն և խուժանային կրօնը ստուդելու: Դաշնակցութեան ներքողներ, սրբասացութիւններ: Ահա, օրինակի համար, Վտարանդիի նուիրած մի շարականից կտորներ (Դրօշակ, 1906 գեկտեմբեր և 1907 յուն.),: Դիմելով սուլր Դաշնակցութեան, այդ խնկարկուն ասում է:

Որովէս Քուրմը սրբազան արիւնալուայ հայրենիքի Յոյսին դարեւոր Դու կանգնած ես հսկայօրէն մեր ճակատագիրներու քառուղին վրայ. Քեզ ողջունելով՝ առջեւէդ կ'անցնին գունդերը Ռւկատանուէրներուն Աւ երգելով կ'երթան մեռնելու հո՛ն, ուր քու Կամքը կը սահմանէ....

Արեւը իր քենեզնե՞րը կը փոէ երկանքէ զանիդ շուրջը,  
Ու մայր գիշերը իր Վրաններուն տակ Բանակնե՞րդ կը պատսպարէ.  
Մըրիկները Քայլերու ճամբայ կը բանան Առապտրնե՞րն աւլելով,  
Խոկ շանթերը Ցաղթանակնե՞րդ կը բանդակին Ապառաժներու ճակատներուն...  
Բազէները երգե՞րդ կը կոնչեն Ամերու վրայ,  
Ու արծիւները Տատրակներու պէս Ռւսերու կը Թառին,  
Ու նժոյգները սանծե՞րը կը կրծին Արշաւանքներու կամար...

Դրօշակներու տակ Մահը՝ քաղցրութիւնն ունի Ննունդի՛,  
Ու ճին Մեռեները հողի խորերէն Զինուորներու կը նախանձին.  
Խակ ամէն պատանի՛ երկու երա՞զ ունի այս աշխարհին մէջ՝  
Դախ անո՞ւնդ հպարտ, եւ ապա զովեստի տող մը պատմութեա՞նդ մէջ...

Զի դու Վեմն ես անկեան հայրենի ազատութեան խորանի՛,

Զոր մեծ քարկոփնե՞րը տաշնցին զարերու անկործան մարմարներէ՞ն,  
ու մայր երկի՞րը իր ազնիւ արհան երավներո՞վ խորհրդանշանաձ՝  
քեզ կանգնեցուց բանութեան պարիսպներո՞ւ համդիման՝ ապառնիի սէմի՞ն  
վրայ,  
Որպէս երդո՞ւմը մաքառումի ու որպէս առնաւատչեա՞ն իր վերհարսնու-  
թեան...

Դու ակո՞ւնքն ես անապակի, ուրկէ մեր կիանքը կ'առուակէ,  
Ու խրախմա՞նքը մեր տուներուն, ուր յուսահատութի՞ւնը կ'արտառուէ...  
Դու պատա՞նքն ես մեր միուելներուն ու նշխար՞ը անոնց բերանին,  
Ու աւազա՞նը մեր նորածիններուն ու միւռա՞նը անոնց ժակատին,  
Դու սո՞ւրբն ես նորանշան եւ ուխտատեղի՞ն հայածեալներուն,  
Ու զա՞նդը վերածնութեան ես սահմիքրա՞ն փառքի պողոտաններուն,  
Դու երդն ես մեր լեռներուն ու արձագա՞նքը որք ծործորներուն,  
Ու մոռո՞ւնչը մեր ամպրոպներուն ու կուրացնող շանթե՞րը անոնց,  
Դու խառնարա՞նն ես վերաբռնկուած մեր նախնի հերոսութեա՞նց,  
Ու սպառազէն հա՞յրը ազդին ու կուռ կա՞մքը անոր...

Որպէս քո՞ւրմը սրբազան արիւնլուայ հայրենիքի յոյսի՞ն զարևոր  
կանգնած պիտի ըլլաս անդրդուելիօրէն միշտ մեր ճակատագիրներու քա-  
ռուդիին վրայ,  
Քեզ ողջունելով՝ առջևեղ պիտի անցնին սերունդնե՞րը ֆիդայիներուն,  
Ու երգելով ողիտի երթան մեռնելո՞ւ հոն, ուր քու կա՞մքը կր սահմանէ...

Քեզ կը յուսան անապատները Տրտմութեա՞ն, հողմերը Հառաշանքի՞,  
Քեզ կը յուսան ստանանքները Արիւնի՞ն ու տափաստանները Սոխիրներո՞ւն,  
Քեզ կը յուսան հորիզոնները Թշուառութեա՞ն ու սահմանները Տանշանքի՞ն,  
Քեզ կը յուսան պատուհանները Սպասումի՞ն ու գրւները Այցի՞ն,  
Քեզ կը յուսան երդիքները Սուրգի՞ն ու սէմերը Հրաժեշտի՞ն,  
Քեզ կը յուսան օջախնե՝ ըր թափուր ու փարախնե՞րը անհօտ,  
Քեզ կը յուսան առաւտսները Տառապանքի՞ն ու իրիկունները Տարակ-  
ուսնքի՞ն,  
Քեզ կը յուսան ցորիկները Ոչիրի՞ն ու դիշերները Արհաւիրքի՞ն,  
Քեզ կը յուսան ժամբանները ամայի ու դաշտե՞րը անմշակ,  
Քեզ կը յուսան երդերը բանտերո՞ւն ու աղաղակները կախաղաններո՞ւն,  
Քեզ կը յուսան նայուածքները տնանկներո՞ւն ու աղոթքները որբերո՞ւն,  
Ու Քեզ կը յուսայ Մայր-Հո՞ղը զաւկրներուդ հպարտ գերեզմաններով...  
Չի Քեզի հնտ են շեփորները արգարութեա՞ն ու պատգամները խաղաղութե՞ան,  
Քեզի հնտ են ըմբիշները փառքի՞ւ ու հոկանները անձնուրացումի՞ւ,  
Քեզի հնտ են բիւրերը իրաւամարտներո՞ւն ու հարիւրակները ահարբեկիչ-  
ներո՞ւն,

Քեզի հնտ են վարդերը կոկո՞ն ու շուշանները հրաշափա՞ռ,  
 Քեզի հնտ են օրինութիւնը մայրերո՞ւն ու խրախոյսը կոյսերո՞ւն,  
 Քեզի հնտ են արյաւարքը ուժի՞ն ու զարձուրանքը մաքառումի՞ն,  
 Քեզի հնտ են մամբանները հերոսացումի՞ն ու վայրեանեները անմանացումի՞ն,  
 Քեզի հնտ են ծիածանները հաշուութեա՞ն ու տաղաւարները սիրո՞յ  
 Քեզի հնտ են միզերը գերմարդկայի՞ն ու ծրագիրները սարսափի՞ն,  
 Քեզի հնտ են տարափները զնդակի՞ն ու հրդեհները ռումբի՞ն,  
 Քեզի հնտ են աստղերը փամփուլցի՞ն ու անտառները հրացանի՞ն,  
 Քեզի հնտ են խոռոչները ոսւգի՞ն, ու հրաբուխները վրէժի՞ն,  
 Աւ քեզի հնտ են բոլոր այն հայե՞րը, որ զիտեն մեռնիլ...  
 Խոկ ջոկասներո՞ւդ առջեւէն կը քայլն սոռուերնե՞րը ինկած մեծ զաւակ-  
 ւակներո՞ւդ՝

Պայծառացեալ ուսերուն վրայ կրելով Տապանակդ փրկութեան...  
 Հճն են ու միջտ անոնց հնտ Վասոսշի Բազէնե՞րն անմահ,  
 Անընկճելի Սերոր-Փաշա՞ն հայրական, Հրա՞յրը պաշտելի ու Վահանը քաղցր,  
 Քեռի՞ն ահարկու, Արաքօ՞ն արիւնկակ ու Կարօ՞ն անձնուրաց,  
 Պետօնե՞րը ցուլական, Ավրօ՞ն աւարառու եւ Արամեա՞նը կամազօր,  
 Բարկէ՞նն առիւծասիրտ, Գնունի՞ն հապարտ ու Արտաշէւնե՞րն արի,  
 Խա՞նը քաջամարտ, Նեկրո՞ւզն առնական ու Վաղարշա՞կն անվեհներ,  
 Վազգէ՞նն ամփատ, Խշա՞նը վսիմ, Գրգօ՞ն իր հարսո՞վ,  
 Կորկո՞տն արծուասիրտ, Քահանա՞ն հուժիու, Գարենինը վրիժմառու,  
 Առիւծ-Սերո՞րն իր Կորիւններո՞վ, Կարասէֆէրեա՞նցը վրիժախանձ ու Մի-  
 քօ՞ն անդդ,

Գոլշեանն անվախ, Ազրիպասեա՞նը վիհանձն, Գուրգէ՞նը կրակոտ,  
 Յակո՞րը մարտար, Սիմօ՞նն անմնուէր, Նշա՞նն ամակեկիչ ու Նատօն կտրիծ,  
 Մալոեա՞նը մահատեաց, Եզիպտացի՞ն ժիր, Երկա՞մը անսանձ,  
 Կրետացի՞ն արթուն, Սիմալի Կարօ՞ն կուռ, Ստուշը մահախոյ,  
 Արսորդ Գէո՞րգը նշանառու, Թորգո՞մը սրտու, Սխալէր՞ն աներկիւդ,  
 Վարդենիսցի Մուրա՞տը ռազմիկ, Թէրփէթող Արդի՞ն արիւնախում և  
 Մշեցի Եղօ՞ն զանավէժ,

Աւուղցի Ցարութի՞նն անձնազո՞ն, Կէլիէկիւզանցի Զաթօ՞ն Ժայուհէն, Մշեցի  
 Տիկրա՞նն անխոնց,

Մուշե՞ղը ահրի, Մրա՞ւն յառաջապահ եւ Ստեփանեա՞նը քաջ,

Բաղչէ՞ն արհւնարբու, Խորէ՞նն րժիշ, Արա՞մն ու Արտէ՞մ,

Շերօ՞ն ու Ռաշօ՞ն, Մուրօ՞ն ու Պողօ՞ն, Մխօ՞ն ու Գալօ՞ն

Ըսի Թէ՛ Կրօշակներու՞ղ տակ մա՞նը քաղցրութիւնն ունի ծնունդի...  
 Եւ անտ այդ մա՞նը եղաւ արդա՞նդը բու հսկայուկան զաւակներո՞ւդ ան-

հասնար,

Որոնք մարառումներէ՞ն, բնդնարումներէն ու յաղթամնակներէ՞ն այսօր  
աւելի հզօրացած,

Պահակ են կեցած Գանձի՞դ շուրջը եւ Հրամաններո՞ւդ կը ծարաւին...

Ահա այդպիսի շարական—ներբողներով են փառաբանում  
«սուրբ գաշնակցութեան Գահի, կամքը, հրամանը և նրա նահա-  
տակ զինուորներին»: Այդ նոր ձեր հայութաւանութիւնը» իր  
հետեւղներին խոստանում է այս աշխարհում փառք ու իշխա-  
նութիւն, ապրուսա, իսկ մեռնելուց յետոյ դասում ի շարս ա-  
ռաքելոց, վկայից և սրբոց... Բնական է թէ ինչ մոլեուանդա-  
ցնող ազգեցութիւն ունի այդ անբարոյականացնող մանեօվրը  
խուժանամիտ և միամմիտ հաւատացեաների վրայ:

«Начальная русская хрестоматия для армянъ», составилъ Седракъ  
Мандианянъ 1-ая книжка. Խուժերէն հատընտիր հատուածներ հայերի հա-  
մար, կազմեց Ս. Մանդինեան, Ա. գրքոյկ. հրատարակութիւն «Գուտտեն-  
րերգ»-ի, Թիֆլիս, 1906 գինն է 55 կ.:

Վեհարանական կամարիլլայի և դաշնակցական բիւրօկրա-  
տիայի միացած ջանքերի շնորհիւ այնպիսի գրութիւնն է ստեղ-  
ծուել մեր գպրոցներում որ այդ պայմաններում լուրջ խօսել  
գպրոցական-մանկավարժական հարցերի մասին նորն է թէ՝  
ծանր հիւանդի մօտնատած քաղցլ զրոյցներ անել:

Եւ այդպիսի սպայմաններում Սեղբակ Մանդինեանը լոյս  
է ընծայում իր «Հատընտիրը» դառաւանդութեան բացատրու-  
թիւններով, նոր խօսք է ուղղում հասկացնել մեր ուսուցիչնե-  
րին... Գովելի՛ եռանդ:

Հեղինակի հիմնական միտքը յիշուած գրքոյկում այն է  
որ իւրաքանչիւր ազգի մանուկի հիմնական աշխարհայեցողու-  
թիւնները միատեսակ և միենոյն չեն կարող լինել: Ապա ու-  
րեմն ուսուերէն լեզուի գասագիրքը իւրաքանչիւր ազգի մա-  
նուկի համար ևս տարբեր կերպով պէտք է կազմուի. ուսուե-  
րէն մի այնպիսի գասագիրք, որ ճգնում է հաւասար չափով  
բաւարարութիւն տալ և հայ, և վրացի, և թուրք մանուկի  
բացուած մտքին—ըստ պ. Ս. Մ.-ի—մանկավարժական արտուրոց  
է: Հեղինակը պնդում է թէ լեզուի գասերից պէտք է ար-  
մատով վերացնել բաւական, նիւթական թարգմանութիւնը, և  
տեղը գնել խաստի, այն ևս հայացի թարգմանութեամբ: Լե-  
զուն ուսուցանելու համար պէտք է դասական և ընտիր հեղի-  
նակներից հատուածներ վերցնել: Իբրև անխախտ սկզբունք  
ընդունելով թէ մայրենի լեզուն պէտք է լինի հիմք, իսկ ոու-

սերէնը նրա վրայ հաստատուած շէնք, հեղինակը նախ մայրենի լեզուով մանուկի աշխարհայեացքը մշակում է, նախապատրաստում, ապա նիւթը անմիջապէս մատուցանում օտար լեզուով։ Այդ պատճառով նա իր ոռւսերէն գրքին կցում է այնպիսի հայերէն բաժին ևս իրբն հիմքն, որի վրայ ոռւսերէնը պէտք է հաստատուի:

Պ. Մանդինեանը պահանջում է որ ոռւսերէն գասերի ժամանակ աւելի կապակցական լեզուն տիրապետէ՝ փոխանակ բառեր անողիր անել տալու, աւելի կենդանի խօսքը, քան գիրքը, աւելի զուտ լեզուական ուսուցումը, քան նաև ծանօթութիւններով ծանրաբենութիւնը։ Լեզու ուսումնասիրելու համար ականջը միշտ աւելի գերադասելի է աչքից։

Ապա հատուածների վերջում ցոյց է տալիս դասաւանդման մեթոդը, շաւիլը, մանրամասն քննելով մի հատուած։

Հեղինակի յայտնած մտքերի ընդհանուր մասը երեխ այժըս էլ մասամբ գործածում է մի քանի ուսուցիչներից, որոնք կենդանի լեզուի դասաւանդութեան նորագոյն մեթոդների հետ ծանօթ են։ Անշուշտ մանուկը շատ աւելի լաւ կըմբռնի ոռւսերէն նիւթի զեղեցկութիւնը և լեզուի առանձնայատկութիւնները նախօրօք ծանօթամնալով այդ նոյն նիւթի հայերէն աջող փոխադրութեան հետ։ սակայն հազիւթէ գործ նպաստեն այնպիսի հատուածներ որոնք ամենահուաւոր նմանութիւնն անգամ չունին ոռւսերէնի բերած հատուածի հետ, օրինակ «Տերսիցի հայ երգերից» կտորը և Ռեչնա Լերմոնտու (երես 144—145) «Կարապների երգը» և Լեbedъ (130—131)։ Մնացած օրինակները գրքում այնքան աջող են ընտրուած որ այդ Խրեստոմատիան հայոց դպրոցների (Յ-րդ տարուայ դասընթաց) կարող է օգտակար ձեռնարկ համարուել և ուսուցիչներին մղել նոր շաւզով ընթանալու։ Միայն լուրջ փորձերից յետոյ արուած գիտողութիւնները հեղինակին կարող են ծառայութիւն մատուցանել։

Մի դիտողութիւն ես. աւելի լաւ չէ՞ր լինի ոռւսերէնը շեշտերով տպել, ինչպէս այդ արել է, օրինակ, Մարտընովսկին իր յայտնի խրեստոմատիայում։ Մի մոռացէք որ մենք մանաւանդ ներկայ ընթիմի տակ (ազգային) ունենք այնպիսի «ուսուցիչներ», որոնք ոռւսերէն բառերի շեշտադրութեան մասին իրանց աշակերտներից շատ էլ հետու չեն գնացել...

Արշակ Արայիքան Սալմաս. Նոր Զուղա, 1906 թ., գ. 1 ր.

Սալմաստի ժաման տեղագրական, ազգագրական, վիճակագրական մի ուսումնասիրութիւն է այդ, կատարուած բարեխղճութեամբ։ Գրքին կցուած է սիստեմատիկ մի քարտէզ։ Հետազոտողը նոր նիւթեր է հազորդում Պարսկաստանի Սալմաստի 23 և Խօյի 8 գիւղերի ժաման։ Վիճակագրական ցուցակից իմանում ենք որ Պալմաստում ընդամենը 1897 տուն կայ 9945 հայ բնակիչներով։ Պանդխտութեան մէջ են 1761 մարդ, բնիկ տղամարդ ազգաբնակութիւն մօտ 53%։

Խօյ գաւառակում հաշուում է 317 բնտանիք, 1552 բնակիչներով։ Արական սեռի բնիկներից 15% պանդխտութեան մէջ է։

Ազգաբնակութեան անտեսական-հասարակական վիճակի մասին տեղեկութիւնները թուուցիկ են։

### ՆՈՐ ՄԱՑԵՆԱԿԾ ԳՐԲԵՐ

---

- 1) Отчетъ объ общественныхъ работахъ, организованныя Тифлисскимъ городскимъ самоуправлениемъ лѣтомъ 1906 г. Приложение № 7 съ 23-му тому докладовъ Управы.
- 2) Գ. Պեհսանով, Ոյժ և բնուութիւն, 1907 թ., գ. 5 կ.:
- 3) Արշակ Աթայեան, Սալմաստ, Նոր-Զուղա, 1906 թ., գ. 1 ր.
- 4) Ա. Ահարոնեան, Աղատութեան ճանապարհն, գ. 80 կ.:
- 5) Լ. Պետրով, Երկու ծրագիր, գ. 20 կ.:
- 6) Մ. Յովհաննիսեան, Գորգեան հանգոյցը, գ. 2 կ.:
- 7) Մ. Յովհաննիսեան, Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները, գ. 50 կ.:
- 8) Գէդ և Լաֆարդ, Տնտեսական գարգացումը և սոցիալիզմը, № 29 «Յառաջ»-ի գրադարանի, Թիֆլիս, 1907, գ. 5 կ.:
- 9) Ազապի, Օրմաննեան ընտանիքն Միհրան էֆ. Տէր-Ներսիստանի ամուսին տիկին Ազապիի անմոռաց յիշատակին յուշարձան, Պոլիս, 1906.
- 10) Յուսիկ Եպիսկոպոս, Անապատականներ և վանականութիւն, Վաղարշապատ, 1906, գին. է 40 կ.:
- 11) Առու Եարձաննեան, հոգեվարքի և յոյսի գոհեր, Փարիզ 1907, գ. 1 քր. 25 սանդիմ։
- 12) Ասօ, Հաւսէ, պատկեր իրական կեանքից, Նիւեռը, 1907, գ. 10 սենտ.

## Հ. Յ. Դաշնակցութիւնը հայոց դպրոցներուն

Հայ ժողովրդի բախտի վրայ զօռով իրան տէր և տնօրէն յայտարարած այդ ընկերակցութիւնը, օգտուելով պետական ընդհանուր խառն գրութիւնից, ահարեկուած հասարակութեան տրամադրութիւնից և մեր փոտած, անգոյն, համակերպուող խուժանամիտ «ինտելիգենցիայի» ապիկարութիւնից, ինչպէս և էջմիածնում տիրող անդլսութիւնից, իր մեծաքանակ բիւրօկրատիան բոյոր շէֆերով և շրջիկներով մտցրեց մեր դպրոցների մէջ և սկսեց այնտեղ նոյն քայլքայիչ, այլասերող, ապականող գործունէութիւնը, որով փայլել էր այլ ասպարէզներում: Եւ երբէք մեր գպրոցները աւելի խառնակ վիճակի մէջ չեն եղել քան գտշնակցական բեմիմի տակ, ընդհովանեաւ վիճարանական կամարիլայի: Այդ գործութիւնը կայուն կացուցանելու նպատակով, ինչպէս տեսանք անցիեալ անդամ, հրատարակուեցան կոնդակով «Ժամանակաւոր կանոններ», որոնք այնքան գուրգուրանքով ողջունուեցան ազգային բիւրօկրատիայի պաշտօնական օրգան «Ժամանակում»: Այժմ՝ ըոլոր դպրոցներում տեղի են ունենում խլրտումներ և խառնակութիւնները: Որտեղ այդ հնարաւոր է մեր բիւրօկրատները աշխատում են ծածկել, երկան չհանել, բայց և այնպէս «մախաթը պարկի մէջ չես թազցնիլ»...

Մածուլի մէջ արդէն ամբարուած է առատ նիւթ եղբակացութիւններ անելու համար: Այս անդամ մէնք առաջ կը բերենք գետ միայն փաստերը:

Սկսենք վիճարանի քթի տակ գտնուող հայոց «բարձրագոյն դպրոց» ճեմարանից և թայֆայի ձևաքով կառավարուող ներսիսեան դպրոցից:

Պ. Գուրգէն Հայկունին № 68 «Հոսանքում» յայտնում է հետեւեալ փաստերը.

Աշխատենք ցոյց տալ փաստացի կերպով, թէ ինչ «անբարոյականացնող» գեր է կատարել Դաշնակցութիւն կոչուող կուսակցութիւնը դըմ-բացական կեանքում:

Դաշնակցական թունաւոր բացիները մտնում են դպրոցական ներքին կեանքի մէջ և կարծ միջոցում ալլասեսում պատճի աշակերտներին: Ամենուրեք կազմում են «աշակերտական միութեան» ճիւղերը, ո-

րոնք նպաստակ են զնում իրանց մէջ ամփոփել փոքրերից սկսած մինչև ամենամեծ աշխակերպը:

Ահա մի գեղեցիկ օր Տփխսից ձեմարտն է գալիս մի դաշնակցական պարոն, զաշնակցական հօտը հլութեամբ չոքում է անտառի մարգագետնի վրայ, իսկ աստուածային պատգամաւորը, շարունակում է զաշնակցական հաւտառամբը կարգալ և պատուիրաներ տալ հիպնոֆացած հօտին:

Ծուռով ճեմարանի ներսում կազմում են զաշնակցական խմբերը և օ զարմանք, նրա թիւը հասնում է 15-ի, սկսած Ա. գասարոնից մինչև լսարանները:

Ե.-րդ դասարանցի մի թիւրուս զաշնակցական մանում է 10—12 տար, փոքրերի մէջ, կազմում խմբեր և ահա ինչ սրտառուչ ճառ է արտասանում նրանց առաջ. «ղուք զիտէք, որ այժմ թուրքերն ամենուրեք ջարդում են հայերին, զաշնակցականները զէնքը ձեռքին պաշտպանում են հայ ժողովրդին, ուստի զուք էլ տուէք 1—1 բուրլի, ձեզ համար խոնչաներ առնեմ, պէտք կը գայ, զուք այսուհետեւ զաշնակցական կը կոչուիք և ամսավճար կը տաք ու շարունակ «Թրօշակ» կը կարդաք: Բայց վայ նրան, ով կը համարձակի դաւաճանել մեր սուրբ գաղափարին: Դրա համար տերը ըստական խմբակ է կազմում ահարեկելու փոքրիկ սերնդին Ո՞րպիսի հրեշտառութիւնն... Մասենում է փոքրիկը լացակամած պատմում է, որ իրանից վերցրել են 1 բուրլի և չեն վերտպարձնում, պարզում է ամբողջ իրականութիւնը՝ զաշնակցականների սիրազործութիւնը:

1906 թ. յունուարի 1-ին սօցիալ-գէմօկրատաների մի խմբակ ճաշարանում առաջին անգամ հնչեցնում է «Մարսելիէնքը», զաշնակցական խուժանը շրջոցներ ու զոռոցներ է արձակում և զարդարեցնում խրոխտ երգը:

«Պէտք է արմատախիլ անել դրանց ճեմարանից», բացարձակ կոչում էին տաքացած զաշնակցականները:

«Ճեմարանը պատկանում է զաշնակցականներին», կրկնում էին զաշնակցականները:

Գալրան սկզբներում ափալ-թափալ ներս է գլուրում հանրածանօթ է, Աթաքէկեանը և ամենամութ գոյներով սկսում է նկարագրել սօցիալ-գէմօկրատիաին և իր անփերջ ստախօսութիւններով կամենում է վարկարակել անել մարքսիստական աշխարհայեցողութիւնը, բայց ի՞նչ ասել կուզի, որ բանուելով ստախօսութեան մէջ, կարմրած թողնում է ճեմարանը:

Կայանում է Հայոց Դաշնակցական Դուման, «սօցիալիստ» յեղափոխականները շտապում են Մայր Էջմիածին:

Տիրահաչակ թոփշեանը կառքից իջնելով, մի փոքր հանգստանում, և ապա շտապում է զպրոց՝ ճառում և իր ազգային պարտականութիւններն այդպիսով կատարում է մի և նոյն ժամանակ անթիւ ծափահարութիւններ է ստանում մասն աշակերտներից:

Սուրբառ արքեն, «գաւաճանում է» աղդային շահերին, զաշնակցական հօտը շտապում է իր բարոյական պարտականութիւնը կատարել. ճեմարանի ուսանող զաշնակցական պրոպագանդիստ յառաջ է մղում ամբոխը գէպի անսպաշապան ծերունին, մի քաջ զաշնակցական ուսանող էլ թքում է ալեոր մարդու երեսին ու յագուրդ տալիս իր զազանական կըքին, ով զաշնակցական անսպատկան վերաբերմունք:

Ճեմարանական 5—6 պըրսպագանգիստներ հեծած «զաշնակցական» ձիերը զնում են գէտի «աշխատաւոր ժողովուրդը» զասակարգային դիտակցութեան բերելու, և այդպէս շարաթներով թափառում ու բացակայում են

դասերից, տեսուչն ու մանկ. ժող.-ը տեսնում էր այդ բոլորը, բայց լոռում ու ձայն չէր հանում:

Դաշնակցական աշակերտները դուրս են կանչում սօց.-դէմօկրատ ուսանողին և ապահովում. ասկայն քիչ յետոյ զալիս և հազար անդամ ներողութիւն են խնդրում: Տեսուչն անուշազրութեան է մատնում այս վայրագ գործողութիւնը:

Դաշնակցութեան «ազատութեան մարտիկները» ապահովում են սօցիալ-դէմօկրատ մի ընկերոջ և ատրճանակ քաշում միւսի վրայ. դաշնակցական աշակերտութիւնը զինուորների առաջ խրախուսում է նրանց:

Դաշնակցական ուսանողը հարուածում է ոօցիալիստ-բեվոլիցիօնէր մի ուսանողի, որովհետև վերջինս յանդքնում է պարզել նեմարանական գաշնակցականների ախտերը:

«Սպասեցէք, ձեր հերը կանիծենք», սպասնում է դաշնակցական ուսանողը սօցիալ-դէմօկրատ ընկերներին. այս արդէն պարզում է, թէ ինչ ինտրիգներ են լարել նախօրօք անալնիւ դաշնակցականները:

Մեսրոպ վարդապետը հղբայրասպան (հակաթուրքական) որոմիեր է սերմանում դաշնակցական շարքերում, նրան ուշադրութեամբ լուսմ ու հաւատութեան նշաններ են ցոյց տալիս...

...Դաշնակցական ուսանողութիւնն ու աշակերտութիւնը դեռ ևս վանդական շրջանում են ապրում, նրանց մէջ բացակայում է չափահաս քաղաքացյու խելանասութիւնն ու լրջմտութիւնը:

Դաշնակցական իդերը—յանձին զաշնակցութեան ներկայ վարիչների այլասեւել են մատաղ աշակերտութեան: Դաշնակցութիւնը իր վնասակար գործունէութեամբ անբարոյականացրել է մատաղ սերունդը:

Ի՞նչ է ներկայացնում իրանից ներսիսկան զպրոցը. աշակերտները թողած իրանից դասերը ազիտացիա են մրում յօդուտ «ազգային կառավարութեան» և շաբաթներով չեն յաճախում գասերին: Գաւառներն են ուղարկում աշակերտ-պերոպագանդիստ, որ յայտնի է մեզ իր խակութեամբ և տգիտութեամբ:

Դաշնակցութեան ձգտումն է եղել իր ձեռքն առնել բոլոր ազգային հաստատութիւնները, դրանց հետ միասին նաև զպրոցները. նա որոշ չափով հասել էր իր նպատակներին և կարելի է ասել քիչ բացառութեամբ դաշնակցականների ծեսքին են գտնուում թէ միշնակարգ և թէ ստորին ուսումնարանները. և հէնց այդ է զլխաւոր չարեքը, որ ապականել է զպրոցական մինուլուրը և աշակերտութեան մի մասի մէջ զագանական ինուտինկուներ ու ամենացած հակումներ է առաջ բերել:

Այդ է եղել դաշնակցութեան զերը զպրոցական կեանքում. նրա աղեցութիւնը մինչև այժմ շարունակում է խաւար աշակերտութեան յետընկած շարքերում և բարյացէս կազմալուծում նոր սերնդի մատաղ խաւերը:

Դաշնակցութեան բացասական զերը անուբանելի է զպրոցական կեանքում:

«Յեղափոխական կազմակերպութիւնը իր կորստարեր ու անբարոյական» քայլերով աղճատել է նոյն իսկ 10—12 տարեկան մանուկների միաբը...

Միք. Յովհաննիսեաններն են այդ բոլոր գծում կուսակցամոլութիւնների պատճառը...

Իսկ այս անգամ նա հրապարակ է եկել բացարձակ կերպով պրո-

վոկատորական որոշմանը ցանկու, առանց այդ էլ յետին միտումներով ղեկավարուող աշակերտութեան մէջ:

Եւ գեռ այդպիսի անհատներն են, որ յոխորտանք են կաբդում սօցիալ-դէմոկրատիայի դէմ և բանադրանքի ենթարկում սօցիալ-դէմոկրատական աշակերտութեան:

«Եղափսի սերունդ հարկաւոր չէ մեզ» արտասանում է ստորութեան և առախօսութեան ազբիւր Միք. Յովհաննիսեանը.

Ո՞րպիսի յինիկ արտայայտութիւն... սակայն այդ խօսքերը անջինջ կը մնան և զրականութեան մէջ և մի արտա էլ կաւելացնեն այն կուսակցութեան վրայ, որի ներկայացուցիչներն են ու ղեկավարներն են Միք. Տովհ., ու ԿՕ.-ն.։

«Հոսանքի» № 62-ում տպուած մի այլ գրութիւնից իմանում ենք հետևեալը.

«Կամենում է (Վ. Խ.) հերեւել որ իրը Դաշնակ.-ը չէ խանւել ծեմարանի յուզմունքներին, որ նոյն իսկ եջմիածնում Դաշնակ. զինուրներ էլ չկան, որ եջմիածնը մի զրախոտ է երկնային, որ ազատւել է զինուրից և նրա մտրակից. և իրը այդ մեծամասնութիւնը բոլորովին դաշ. չեն և այդ արել են ոչ կուսակցական հորի վրայ: Թող հաւատացողները հաւատան, իսկ մենք տեսնեք թէ որքան ճիշտ են պարոնի ասածները: Եթէ մենք 24-ականներս, տեսնելով պ. Վ. Խ., Զեր հէնց նախաձեռնութեամբ հիմնած գիլտատուրան և վարչութեանը տւած Զեր ուլտիմատումը՝ «ոչ մի զիջում չանել», մենք էլ զրինք մերը: Ո՞գ էր, ասացէք ինդքեմ, հարայ-հրոցով տարածել զիւղի ամբոխի մէջ, որ մենք ցանկանում ենք միայն սկիններով դուրս դալ. ով էր զրգուել այդ մութ ուժերին, որ մեզ համար անհնարին դարձաւ զիւղ գնալ-դալը. միթէ ձեր յարգելի ընկեր անփափափ հայդուկ պրօպագանդիստ աշակերտները: Եթէ չէք ճանաչում այդ հայդուկ աշակերտներին, ճանօթացէք, թող. Ս.-ի, նոր.-ի, Մուլխանին, Մ. Մ. Ս.-են և այն ընկերների հետ: Էւ միթէ չէք նկատում ինչնպէս անուշ անուշ սկիլ-բիլի էր անում այդտեղի ձեր գեներալ կօմիտէ Վարպետի տղան իր պաշտօնակից «վարժապետների» հետ, ինչպէս հայդուկային շայկայի ատաման, և ափունջին ուսերին մեծ եռանդով ներս ու դուրս անում ուսուցչանցից վերակացուանոց և վերակացուանոցից ձեզ մօտ... Եթէ այդ էլ չէք տեսնում, ապա թոյլ տուէք ասելու, որ «աչք զնն և ոչ տեսանէչք»: Եթէ չկային զինուրներ, ապա հմմիցն էինք ստանում այն բազմաթիւ նամակները հիմնալի ուղղագրութեամբ, «Յառաջ»—«Ալիքեան» հայնոյանքներով լի և զինուրներ ստորագրութեամբ սպատնական նամակներ, որոնք պահել ենք մեղ մօտ, որպէս ապացոյց ձեր և ձեր արբանիակների բարոյականութեան...»

Այն, ամեն տեղ Դաշ. կամենում է ապացուցանել, որ վերացրել է իր միլիցիան: Իսկ ովքե՞ն են այդ անպաշտօն—պաշտօնական զինուրները, եթէ ոչ պահեստի անդամներ պատեհ բոպէին յառաջ խաղալու համար: Եւ մենք տեսնելով Դաշ. անկոչ միջամտութիւնը տուինք մեր հրաժարականը, որ այնքան ուրախացրել էր ձեր «ազատամտին», որը և բղաւել էր «ազատացէք ճեմարանը»: Ասում էք նոյնպէս, որ անկուսակցական էք եղել և եղել են ձեր մէջ ո.-դ ներ, զիտեմ ումն էք ակնարկում. Գ. Մել.-ին, Վաչէին, որը անցեալ տարի տեսնելով, որ իր տեղ մի ուրիշ տնմեղ աշակերտ է զոհ-

ուում, քաջութիւն ունեցաւ լսելու, մենք դրանց էլ լաւ ենք ճանաչում, ահա զրանք են, որ կեանքում իրանք իրանց ուղարկած պիտի համարեն և Միք, Յովհաննիսեանների բերնի ծամոց գամնան: Թողնկլով ձեր օձիքը դառնում եմ «մեծ սոցիոլոգ» («») Ա. Յովհաննիսեանին: Տևսնում էք, ոլ. ահեղնազգորդ սոցիոլոգ, թէ աշակերտութեան որ մասն էր զբաղուած կուսակցական գործերով, եթէ զրանք բաւական չեն, էլի կասեմ. որ այդ բոլորի մէջ, զուք հայ պոգի պարագիտ շեֆերդ էք մեղաւոր, գուք չէլք արդեօք, որ եկիղեցական դումայի կատակերդութեան շրջանում, ձեմարանի ննջարանում, ձեր թութակեան ճառերով «զարթեցնում» էլք աշակերտների կուսակցական դիտակցութիւնը և կիրքը, քնած թողնելով «նրանց մէջ «ազնիւ կուսի գաղափարը», Գուք՝ ձեր Խաժակ, Աթարեկներն ուղարկում էլք մարդուութեան, և միջթէ ձեր, Կառուցկու քննադատ և. Աթարեկը չեր, որ հրապարակաւ, մէծ և փոքր աշակերտաց առաջ յայցանեց որ նշանաւոր Փրազը «աշխարհումն չկայ աւելի զգւելի բան՝ քան ուղարկերտ»: Խսկ աշակերտ և դաշնակցական, այն էլ պրօպագանդիստ, բիւլըտնէներ խարդախող ու ոչնչացնող, որը մի մասնէթի դաշ. ճառայրող, ամենասառաքինի և ազգասէր տնօնն է, չէ... Եւ ահա ձեր այդ ճառերի արդիւնքը չլո՞ր արդեօք, որ տենդային արադութեամբ սկսեցին մեր մէծ ընկերները խմբւել կազմակերպել և այն էլ տեռորիստուհայդուկային խմբեր, ա. դասարանից սկսեալ Հարցրէք այդ մասին Զ. գասարանցի Վ.-Տ. Թ-ին և Ա. զաս. Ռուր. Ան-ին: Հարցրէք նաև Նախկին ճեմարանական Ս. Գրուզին, թէ ինչ խաւերից էին կազմուած ճեմարանական խմբերը, որի կոմիտէն էք ինքը: Եւ ահա ձեր այդ սիրասուն աշակերտներն էին, որ աշխատեցին արմատախիլ անել «զըզուելի ուղարկութիւն» ճեմարանից: Զէ՞ որ ամբողջ ճեմարանը, սկսեալ լՎ պատրաստականից մինչև լլ լսարանը՝ կոչուած թամբալսանան, դաշնակցական են, իսկական, հոգով մարմնով գաշնակցական: Ահա թէ ինչու էք զուք էլ փաստում ալ. Ա. Յովհ., որովհետեւ այստեղ նկատում էք ձեր զրած «սաղմի» աճելն և սուճանալը ու տուած պտուղները... Լաւ պտուղ, խօսք չունեմ... Թող Աստուած մի երկրորդ եկեղեցական գումա էլ պարզեց ձեզ, որ միջոց ունենաք այցելելու ձեր հօաին:

Թէ ինչ սխրագործութիւններ են կատարել մեր զոչիրաշիները առհասարակ զափթելու համար մեր դպրոցները և ինչեր են արել երբ աջողուել է նուաճել այս կամ այն հաստատութիւնը—զայայտնի է 1906—1904 ուս. տարուայ ընթացքում Յովհաննեան ուս., Շուշուայ, Նոր Նախիջևանի դպրոցներում և բոլոր ծխական ուսումնարաններում տեղի ունեցած սկանտալիօց գէպքերից: Գաւառներում այդ խուժանապետների արարքները ի միջի այլոց պատկերացնում է հետևեալ զրուածքը «Հոսանք»-ում.

Հայոց տարրական դպրոցների ներկայ վիճակը  
(Նամակ գաւառից)

Մեր կեանքից վերջին հիւանդու տարիներում ինչեր ասես տեղի չունեցան, կեանքից զդիսող հարկադրիչ պահանջների առաջ մարդկանց գերեք փոխուեցան, շահերով հակառակ տէրն ու ծառան, շահողն ու շահագործուո-

ու մի ճակատի վրայ կանգնեցին, համբերութեան վարժուած մշակը հանդէս եկաւ բողոքաւորի և կռաւողի գերում. ուսման ծարաւի պատանին մոռացաւ նստարանն ու գիրքը: Կետեցը բացառիկ պահանջներ ուներ, պէտք էր նրանց բաւականութիւն առալ: Այդ նպատակով առաջ նետուեցին շատ շատերը, և գրանցից քչերը չէին, որ «առաքինի հանդիսացան»...

Այդ բոլորի հետ փոխուեց և այդ չափը, որով որոշում էր այս կամ այն մարդու արժանիթքը: Անցաւ փոխորիկը, իշման զգացմունքները, խաղաղուեցին կրքերը: Սկսեց խաղաղ կեանք և ինչ, մարդկանցից շատերն իրանց տեղում չէին. երէկուայ աղքատը անցած հեղեղի հունի մէջ ունէ էր գտել և այժմ նա հարուստ էր. աւազակն ու գողլը, որ գեռ երէկ անարկուած և հալածուած էր, այսօր նոխ սեղանների վրայ, մեծաղորդ ժողովներում յարգանքի և փայտայանքի առարկայ է:

Այսպէս փոխուեց մարդկանց գերը:

Այդ ընդհանուր փոփոխութիւնից անմտասը չմնացին և մեր ուսումնարմանները. այդեղ էլ հանդէս եկան վարժապետներ և վարժուհիներ, որոնք իրանց գերում չեն, իրանց պաշտօնին վայել բարձրութեան վրայ չեն կանգնած: Այդ մեր անցած ցաւազար կեանքի հիւնդոտ պատուղներն, դաշնակցութեան վիճուածքները:

Այն, մեր ծիական ուսումնարանները լցուեցին մի կարգ թերուս և բառիս բուն իմաստով տգէտ ուսուցիչ-ուսուցչուհիներով: Եւ շատ բնական էր. կեանքի մէջ «առաքինացած» «լուրայիններին» պէտք էր պարագ չթողնել. պէտք էր մի կերպ տեղաւորել, առանց նրանց պատրաստութիւնն ու արժանաւորութիւնն ի նկատի ունենալու. բաւական էր, որ մարդուկը զաշնակցական լինէր: Պէտք էր ուրեմն «գիտակից» ընկերներով ծածկել ամենուրեք: Եւ այդպէս վարուեց Թաշնակցութիւնը. փաթաթեց խեղճ ու ողորմելի հայ ժողովրդի վզին մի կարգ անփորձ, անպատճաստ տգէտների, որոնց արժանիթքը մեծ մասամբ մատուցէրի զործածութիւնն էր եղել կամ սրեէ շէֆական պաշտօն: Եւ այդպէս ժողովրդի ուսման և գաստիարակութեան գործն ապահովուած էր:

Բայց կեանքը հրապարակի վրայ է դնում այդ թերուսներին իրանց ամբողջ այլանդակութեամբ:

Անցնենք փաստերին:

Հեռու չգնանք. վեցիննենք թանաքեռ գիւղը, որի երկու ուսուցչուհիները վազարշապատի երկանեան ուսումնարանի աշակերտուհիներն էին գեռ անցեալ տարի. դրանցից մէկն է Ա. Վ. Նա կոչուած է զրագիտութիւն սովորցնելու, երբ ինքը տպէտի և անզրագէտի մէկն է. ինձ ոպատճել է կարդալ նրա զրածը, ուր երեք տողի մէջ 13 սիալ կար և այդ տպէտը պէտք է կրթէ և գաստիարակէ մանուկ սերնդին. նա, որ ոչ մանկավարժութեան հոտ է առել և ոչ ուսման ճաշակ: Իրաւամբ մի ուսանող անուանց նրան: «Սանկիւլուս գիտութեան մէջ»:

Բայց լնչակն, հարց կը տայ ընթերցողը, ինչպէս եղաւ, որ այդ ողորմելին ընկաւ Թանաքեռ—զուրս եկաւ վարժուհու զերում: Հանելուկը շատ պարզ է. թշուառի եղբայրը, Ս. Վ., զաշնակցական գաւառական շէֆերին է: Եւ ահա, զնորին զաշնակցական եղբոր միջնորդութեան, Քանաքեսի շէֆ հոգաբարձուն առանց խղճահարուելու փաթաթում է Ա. կոչուած տպէտին իրանց ուսումնարանի վզին:

Երկրորդ օրիորդը—նրա ընկերուհին, միենոյն մակարդակի վրայ կանդնած նոյնպիսի խղճուկին մէկն է:

Երրորդը—աւագ ուսուցիչ. Թ. Յա հինգ տարի հաշուապահի պաշտուար, 1907.

տօն էր կատարում Քանաքեռի ուսումնարանի հոգաբարձու Յարութիւնեանի խանութում, բայց վերջին տարիներում մոռացած էր պաշտօնն ու գործը այլ բաներով էր զբաղւում. խանութի կառավարիչը շատ անգամ էր մտածել ազատուել նրանից, բայց մաւզերի հրկիւղն ստիպում էր նրան լոել ու տանել, մինչև որ, մի գեղեցիկ օր, համոզեց նրան թողնել պաշտօնը և ուսուցիչ դառնալ իր խնամքին յանձնուած Քանաքեռի ուսումնարանում: Անցնում է մի քանի օր և պատեղին է կպչում Թ. Յ. եան ստորագրութիւնը կը ուղարկի յայտաբարութիւնը, լի անհերելի սփաներով:

Բայց անցնենք առաջ:

Ենորհիւ այն բանի, որ ուսուցիչը զաշնակցական լինելով բարձր կը պահէ նրա զրօշակլ ամեն տեղ, ուստի առանց խտրութեան ուսուցչի պաշտօնով ասպարեզ են իջնում:

Քալարա գիւղում Տ. Յովհաննէս քահանան, որ երկասնեան ուսումնարանի կրթութիւն ունի, Զափարաբադ գիւղում—Թաղէսո վարժապետը բ. զասարանի կրթութեամբ:

Փարաքարում Մարիամ անունով մէկը ծխականի ուսմամբ, Օչականում Ս. Թ. բ. գասարանի պատրաստութեամբ:

Բայց ամենահետաքրքիրը Կարմաղեար զիւղն է. ուր վարժապետութեան ամբիօնը զբաւել են «Զապատանոյ Համբօ» կոչւած մարդը և «Պրօֆեսօր Նիկողոս» անւանւած երիտասարդը:

Բայց վերին աստիճանի բնորոշիչ է հետեւալ դէպքը:

Մէկ անգամ «Զապատանոյ Համբօ» իմանում է, որ Փարաքարից Վարժապետը է գալու շէֆ Արտուրը և այցելելու է իր վարժաբանը, ուստի պատրաստում է իր սանիկներին զինուրական պատիւ տալու նրան: Մի քանի ըստէից յետոյ զալիս է նա. իսկոյն բացւում են դաները, «Զապատանոյ Համբօն» ընդուռած է ենում, շուտով Համբօ-ի առաջնորդութեամբ ներս է գալիս շէֆը, որին հետեւում է աշակերտների թնդաղին «ուրան» որով ողջունում են մեծապատիւ շէֆի մուտքը:

Մի քիչ յետոյ Արտաշն ենում է գնալու. բայց միւս գանից իսկոյն զոյզ զոյզ ենում են աշակերտները և սկսում են երգել զաշնակցութեան գինուրական հիմնը.—

Դաշնակցական իրումը

Գիւղնք մենք Սասուն...

Արտաշը միիմարւած հեռանում է. հեռից զեռ լսում էին յազդական քայլ—երգի խրոխտ ելեջները: Վերջապէս լոռում է երգը:

Եւ «Զապատանոյ-Համբօ» զո՞ն որտով շարունակում է պարապմանը նոյն հւզով, նոյն ողկորութնամբ:

Այն, պէտք է Պաշնակցութեան հոգին վառ պահնի և բառական է. վարժապետն արդէն արժանի է իր պաշտօնին և իր կոչման բարձրութեան վրայ է կանգնած:

Եւ ով գիտէ քանի-քանի «Զապատանոյ Համբօներ», «Պրօֆէսօր Նիկողոսներ կան, քանի-քանի գիւղերի խեց ու թշուտ մասուկներ մարգւում են այդ ուղղութեամբ ի վասու զաշնակցութեան և ի պատիւ զիւղայիւթեան շահների պաշտպանների:

Նուանելով գպրոցական ասպարէզը, մէր «ազգային ըիւրօկրատիան» իր տիրապետութիւնը քիչ շատ անդամական վարձնելու համար, մէր հասարակութեան ամբողջ կրթական զործը կենտրոնացրել է Փեղայիների ու Փեղայուհիների ձերգում: Մեր ուսումնական զործը զիւղերում գրւում է նոյն վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ՝ զոնուում էր, Տէր-Թաղիկների ժամանակ:

Բերած փաստերը բաւական են ցոյց տալու համար թէ  
յնչ սարփափելի դրութիւն են ստեղծել մեր դպրոցներում «թե-  
թեամտութեան», բթամտութեան և անմտութեան եռակի դաշ-  
նակցութիւնը, ըստ Իրաքնի «Բրանդի» բնորոշման... Ողորմե-  
լի ազգ որ ընգունակէ այդպիսի մի «կաղմակերպութիւն» պահ-  
պանել, էլ չենք ասում՝ ստեղծել...

## ՆԵՐԻՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երկրորդ Պետական Դուման.—Մեր կացութիւնը:

Փետրուարի 20-ին բացուեց Երկրորդ Պետական Դուման:  
Չնայած Սոոլիպինի կառավարութեան կողմից զործ դրած ա-  
մեն տեսակ ճնշումներին և աջակողմեաններին ցոյց տուած  
հովանաւորութեան, Տաւրիկեան պալատում այս անգամ ևս հա-  
ւաքուեց խիստ օպլոզիցիօն ժողովրդական ներկայացուցչու-  
թիւն։ Կառավարութիւնը կարող է յոյս դնել միայն 90 ձայնե-  
րի վրայ, մինչդեռ օպլոզիցիան ունի աւելի քան 350 ձայն։

Եւ հէնց սկզբից կառավարութիւնը արտայայտեց իր գըժ-  
գոհութիւնը, զրկելով Դումայի բացումը հանդիսաւորութիւնից։

Մի տարուայ բաղաքական կեանքը, թէկուզ կեղծ-սահմա-  
նաղբական կառավարութեան ներքոյ, այնուամենայնիւ ահա-  
զին փոփոխութիւն է մտցրել մասսաների գիտակցութեան մէջ.  
յեղափոխական մտածողութեան բովից անցած ժողովրդական  
միտքը այնքան հասունացել է, այնքան խոր կերպով ըմբռնել  
հին կարգերի ոչնչացման պատմական անհրաժեշտութիւնը որ  
առանց տատանուելու ուղարկեց գուման աւելի ծախ տրամա-  
գրուած ներկայացուցիչներին, քան առաջ։ Աջակողմեաններն  
էլ այս անգամ իրենցից աւելի ծայրայեղներին գերադասու-  
թիւն տուին, քան հոկտեմբերականներին։ Երկրորդ դումայի  
թողած ընդհանուր տպաւորութիւնը այն է որ նա տրամա-  
գրուած է աւելի բէալ տակտիկայի հետեւ, իրան զսպուած,  
զգոյշ պահել, որտէսդի զանազան ոլոգրոմչչիկներ և պրօվոկ-

ատօրներ չօգտուեն հսնդամանքից, օբստրուկցիա չսարքեն կամ ցրուել շտան այդ հակարիւրօկրատիական հիմնարկութիւնը:

Երկորդ Դումայում ևս ամենամեծ կուսակցութիւնը կազմում են կադէները (մօտ 115 ձայն): Հետեարար նա ձգտելու է ղեկավար գեր ստանձնել: Նրանից ձախ կանգնած կուսակցութիւններն են սօցիալ-դեմոկրատները (64 ձայն) և ձախուկողմեան ըլոկը, կազմուած սօցիալիստ-բեկոլիւցիօններից (50 ձայն), աշխատաւոր գրուպպայից (24 ձայն), համառուսական գիւղացիական միութիւնից և ժողովրդ. —սոց. (6 ձայն),

Աջակողմեան կուսակցութիւններից ամենաազգեցիկը «ռուս դաշնակցականներն» են («Սօյօզհիկ») Պավոլակիյ Կրուշեվանի, Պուրիշկեվիչի և Պլատոն Եպիսկոպոսի նման պարագլուխներով:

Երկրորդ Պետական Դումայի նախագահութիւնը (պրեզիդիում) կազմուած է հետեւեալ կերպով. նախագահ Ֆեօդօր Ալեքսանդրովիչ Գոլովին (356 ձայնով ընտրուած 102 դէմ), կազէ: Նախագահի օգնականներն են. Բերեզին և Պոլնանսկին, երկուսն էլ ձախակողմեան ըլոկի ներկայացուցիչներ:

Պետական Դումայի քարտուղարութեան կազմը հետեւեալն է. քարտուղար Զելնոկով (կ. դ.), օգնականներ. Ռւսպենսկիյ (ս. ր.), Խարլամով (կ. դ.), Կարտաշեվ (ս. դ.), Սալտըկով (ս. դ.) և Մակսիւտով (կ. դ.).

Պետական Դումայի նախագահ Ֆ. Ա. Գոլովինը հետեւեալ ճառով բացեց Դումայի առաջին նիստը.

«Պետական Դումայի կամքը նրա իւրաքանչիւր անդամի համար օրէնք է: Յիշելով այդ ես առանց տատանման ստանձնում եմ Դումայի նախագահի պարտականութիւնները:

«Մեծ է ինձ ցոյց տուած պատիւը ձեր կողմից, պարունակը. մեծ է իմ երախտագիտութիւնը դէպի ձեղ. կամեմ բոլորը, ինչ կարող եմ, որպէսզի արդարացնեմ ձեր վստահութիւնը դէպի ինձ: Չնայած մեզ բաժանող կարծիքների տարբերութեանը, մեզ միացնում է մի նպատակ: Այդ միակ նպատակը —սահմանադրական հողի վրայ աշխատելը, երկրի բարիքների իրագործումն է: Զգուելով ընդդիմախօսութիւնները անաշառ վարել և խօսքի ազատութիւնը պաշտպանել, ես իմ պարտքը կը համարեմ անշեղ նոգալ Դումայի արժանապատութիւնը պահելու. մենք բոլորս լաւ գիտենք թէ ինչ անհամբերութեամբ է մեր երկիրը սովասում Պետական Դումայից իր ծանր տանջանքների թեթևացում: Այդ մեծ նպատակի իրագործման ուղիղ ճանապարհը մատնանշուած է առաջին Պետական Դումայից և մնում է նոյնը և ներկայ ժամանակում: Կեանքի մէջ մտցնել հոկտեմբերի 17-ի մանիքեսով յայտարարած սահ-

մանակրաւկան սկզբունքները և սօցիալական օրէնսդրութեան իրագործում,—դրանք են առաջին պետական դումայից հերթական դարձած երկու մեծ նպատակները։ Անենք ամեն ինչ որ նրանք իրագործուած լինեն երկրորդ Պետական Դումայից։

Հզօր ժողովրդական ներկայացուցչութիւն! միանգամ կեանքի կոչուած նա այլ ևս չի մեռնիլ։ Միտպեսի հետ միացած նա անխուսափելիօրէն կեանքի մէջ կը մտցնի ժողովրդի կամքը և միտքը։

Պարոններ, օրէնքի համաձայն, դումայի նախագահը ալէտք է ներկայացնի Թագաւոր Կայսրին ընտրութեան մասին։ Այդ ինկատի ունենալով, յայտնում իմ ներկայ նիստը փակուած, իսկ յետագայ նիստի մասին դումայի պ. պ. անդամներին իմաց կը արուի առանձին ծանուցագրերով։

Դումայի նոր նախագահը մտ 40 տարեկան մարդ է և յայտնի է իրքն գեմստվօի շահերին նուիրուած հաստատակամի անաշառ մի գործիչ, որ օժտուած է ուրիշի կարծիքն յարգելու աղջիւ յատկութեամբ։

Այդպիսով լայնածաւալ և բազմացիղ Ռուսաստանի ազդարնակութիւնը այժմ ունի իր օրինաւոր ներկայացուցչութիւնը, որի մէջ արտացոլում են ներկայումս ժողովրդի մէջ նշմարուող բոլոր հոսանքները, սկսած սկ հարիւրակային բէակցիօներից և վերջացնելով ամենածայրացեղ ձախակողմեաններով, այն է պրօլետարական կուսակցութիւն՝ սոցիալ-գեմօկրատիայով։ Կէնտրօնը—կոնստիտուցիօն-դեմօկրատիական կուսակցութիւնը—իրան յարած ճիւղարութիւններով, ալէտք է հարուածներ ըստանայ աջից, որ քաշելու է նրան դէպի ին ըեժիմի վերականգնումը, և հարուածներ ձախից, սկզբունքային աւելի լայն և գենոմօկրատիական պահանջներ գնող կուսակցութիւններից, որոնցից մանր-բուրժուական սոցիալիստները (ա.ա. ժ.ա. և աշխատաւորական խմբակը) իրենց խառնաշփոթ ծրագրներով և ութոպիստական տակտիկայով այսքան ահուելի չեն, որքան գիտական-սոցիալիզմի ժայռանման հիմքերի վրայ գրուած սոցիալ-գեմօկրատիայի այն մասը, որի լիգերն (դրսում) կարող է համարուել Պլիսանովը։ Այդ մենշենիկները իրենց մշակած ծրագրով և բէալ տակտիկայով ամենից շատ են մօտենում գերմանական տիպի սոցիալ-գեմօկրատիային։

Դուման կամ պիտի լինի իսկսպէս պարլամենտ կամ՝ նոր կոնֆլիկտների բեմ։

Ստոլիպինի եօթամսեայ անկոնստրու և ճնշող րիւրօկրատիական կառավարութիւնը երկիրը հասցըել է ծայրացեղ թըշուառութեան։ Ֆինանսների ողբալի դրութիւնը երկեի կը ստի-

պի այդ իշխանասէր՝ բիւրօկրատիային ակամայ զիջումներ՝ անել, որպէսզի եւրոպական գոյցը լուրժուազիան չմերժի սովոր տոկոսով փող բաց թողնել նրան...

Մեր «հայկական» ներքին կեսնքի երևոյթների մէջ մենք առևնում ենք բացի ընդհանուր պետական կարգերի ստեղծած անօրմալ երևոյթներից և առանձնայատուկ արտայայտութիւններ։ Հայկան ճահճի մէջ կղերական-ասիտական միջնադարեան խառնաշփոթ կամայականութիւններին և ամսկարգութիւններին այժմ՝ միացել են սոցիալիստ-տիրացուների ստեղծած սումբուրն և քաօսը։ Երբէք մեր դպրոցներուն և գաւառներում չեն տիրել աւելի խայտառակ կարգեր քան վեհարանական-գաշնակցական միացած գործակցութեամբ։ Խլրտումներ տեղի են ունենում և պետական ուսումնարաններում, բայց նրանք բոլորովին այն ընութիւնը չունեն ինչ մեզանում։ Մենք առանձին յօվուած կը նուիրենք այդ դպրոցական հարցերին, իսկ այժմ ըսթերցողի ուշազրութիւնն ենք դարձնում այն փաստերի վրայ, որոնք արձանագրուած են այս համարում։

Զենք կարող ուշազրութիւն չդարձնել և այն աղաղակող անարդարութեան վրայ որ կատարուում է էջ, ճեմեանի մի խուռմը աշակերտների վերաբերմամբ, դրանք արդարակատութիւն են պահանջում «հասարակութիւնից»։ Եւ միթէ աղզային բիւրօկրատներին համակերպուելը աղզասիրութիւն համարող մեր ստրկացած հասարակութիւնը անտարբեր կը վերաբերուի դէպի այդ կոչը։ Ո՛չ, մենք այնքան յոսեած չենք ուզում լինել որ գիտակից մաս չգտնենք մեր հասարակութեան մէջ...

Ահա այդ կոչը.

«Մենք, ճեմարանից դուքս եկած ուսանողներս, ճեմարանում կատարուող վերջին դէպրերի ժամանեակ, մեր դատրանկացաներ յանձնել հասարակական ընոյթ ունեցող մի յանձնաժողովի, բայց վարչութիւնը տուանց որեւէ պատճառաբանութեան (գոնէ մեզ անյայտ պատճառներով), չընդունեց մեր այդ առաջարկը եւ մ'ենք, ի նկատի ունենալով ճեմարանի գոյութեան վերահս վտանգը, կամովին հեռացանք։

Մենք զանազան գրութիւններով ծանօթացրինք հասարակութեան զիտակից մասին կատարուած իրողութեան նետ եւ այժմ որպէս անդամ հասարակութեան՝ դիմում ենք հասարակութեան, մասնութի ներկայացուցիչներին եւ ընկերաշակերտներին, որպէսզի նրանք իրանց ձայնը բարձրացնեն

եւ պահանջեն անաշատ քննութիւն՝ մեր կեանքում՝ պարբերական ընսառութիւն ունեցող այսպիսի դէպքերի համար»:

Այդպիսի կոչեր յաճախ են լսուել և մեղանում չի գըտնուել մինչև այժմ կեանքի այդ աղաղակներին պատասխան տուող մի կազմակերպուած արձագանք:

Միթէ մի այլ հասարակութեան մէջ անտարբերութեամբ կը գիտէին թէ ինչ են անուամ զանազան «կանաչ հարիւրականեր»: Միթէ թոյլ կը տային որ յայտնի շարագործները և նրանց զեկավար զբդիչները զնդակահար տնէին նոյն իսկ զրչի հակառակորդներին: Իսկ մեղանում կան «ինտելիգենտներ» որոնք ձեռք են սեղմում, ճաշեր են տալիս այդ ոճրագործների մեղակիցներին, սատարում են նրանց ձևոնարկութիւններին... Դիակներ և խողովակներ...

Կրասնովդսկում սպանուում է «Մշակի» թղթակից Մուշեղ Տէր-Օհանեանը իր այն թղթակցութեան համար որ գիտեղել է նաև «Մշակի» № 27-ի մէջ: Եւ ահա «մաքի և խօսքի» ազատութիւն բաւող հոյկական բանդան կեանքի մէջ այդ կերպ է գործադրում աղատութիւնը: Ի՞նչ արաւ հասարակութիւնը այդ ոճերի զիմաց: Ոչինչ ինչ արաւ կովկասեան մամուլը լսեց կարծես առանձին ոչինչ էլ չի պատահել: Որքան տարբերութիւն մեր և ուռւս ինտելիգենտների մէջ, որոնք ցոյց տուին Հերցէնշտէյնի սպանութեան խնդրում որ հոգով և մոքով անհամեստ բարձր են կանդնած «զեղեցիկ կովկասի» վարտնոտ «ինտելիգենտներից»:

Ի՞նչ անուն տալ այդպիսի «հասարակութեան» որ բթացած սարկի պէս տանում է կատղած որիկաների ամենաըմարդի արարքները:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տնտեսական գարդացման ստեղծած յեղաւոր առժողով:

Եւրոպական կեանքը իր զարգացման մէջ առաջ է ընթանում մի լայն և հարթ ճանապարհով, որի վրայից արգէն հեռացրած են հին բռնակալական բեժիմի աւերուած շինութեան բոլոր աւերակները, և կապիտալ իզմը կատարում է իր պատմական գերը, իր աճման հետ առաջ բերելով և իրան յաջորդող սոցիալիզմի գործոնները: Կապիտալիզմի զարգացման հետ միասին աւելանում է բանուորութիւնը ոչ միայն թուով, այլ և իր գիտակցութիւնով, իր կաղմակերպութիւնով, իր ազգեցութեամբ երկրի հասարակական —քաղաքական կեանքի վրայ: Այդ պատճառով բոլոր այն պայմանները որոնք նպաստում են մի երկրի տնտեսական բարգաւաճման՝ միաժամանակ նպաստում են և արդի կարգերի հիմնական փոփոխութիւնների հասունանալուն: Եւ ընդ հակառակ, բոլոր այն գործելակերպերը որոնց հետեւանքն է մի երկրի տնտեսական քայլայում, աւեր ու անապատ—պէտք է համարուեն յետաղիմական, ըէտիցիօն, մի ժողովուրդ գէպի վայրենութիւն, թշուառութիւն մըզող, լաւագոյն ապագայից դարերով յետ դցող: Թող այդպիսի գործելակերպերի հեղինակները իրանց «յեղափոխական» անուաննեն, բայց եթէ գրանք հասարակական երևոյթների ըմբռնողութեան մէջ նոյնն են, ինչ դալլարը բժշկութեան մէջ, ալքիմիկը՝ քիմիայի մէջ, գրանք դe facto փալչիներ, իննութեր, ոճրագործներ, բէսակցիայի գործակիցներ են և ոչ կեանքը գէպի լաւագոյն ապագան յեղագրչողներ: Այդ տիովի ըէտակցիօն կեղծ յեղափոխականներ են օրինակ, հայկական աղքային «յեղափոխականները», որոնց նմանները քաղաքակիրթ երկրներում մի քանի անորմալ անհատներ, գործով անարխիստներ են կամ պարզ ոճրագործ ընկերակցութիւններ և լամաֆիա, կամորա: «Յեղափոխական» շայկանները իրենց անձնական քաջազործութիւններով նոյնքան անզօր են յեղափոխութիւն առաջացնելու, որքան տգէտ մի դալլարի ածելին հի-

ւանդի երակներից առողջանալու համար անհրաժեշտ արիւնը թափելով ոյժ ունի բժշկութիւն կատարելու կապիտալիզմի զարգացման հետ երուպական երկրներում հասունացել է լայն խաւերում գիտական հասկացողութիւնը կեանքի երևոյթների մասին և բունտարները ու բանդաները անախրոնիզմ են այն տեղ:

Բունտարական—բանդայական գործելակերպերը իրեն հին յեղափոխական լուժանատիզմի մնացարդներ պահպանուել են դեռ տնտեսապէս յետամմաց և մտաւորապէս տհաս հասարակութիւնների կեանքում: Սեփական շահերի խոր գիտակցութիւն, այդ շահերի պաշտպանութեան համար ուժեղ կազմակերպութիւն, կուլտուրական ոյժի միջոցով կոփի—ահա արդի յեղափոխութիւնների գէնքը: Եւ այժմ կանայք էլ իրանց դատը պաշտպանելու համար այդ շաւղի վրայ են կանգնել արդէն: Անզիայում, իտալիայում այդ շարժման ալիքները արդէն ներս են խուժել պարլամենտական դահլիճները և ալիկածում են մտքերը: Բիւրաւոր ստորագրութիւններով ծածկուած խնդրագրերի հետ հրապարակական ցոյց են լինում, կազմակերպուած պրօպագնական է մղում: Եւ երբ այդ շարժումը ինտելիգենտ-բուժուական խաւերից տարածուի և վարձու աշխատանքով ապրու կանանց շարքերում, ժողովրդական մասսաներում՝ այլ ևս «տգեղ սեռի» ընդդիմադրութիւնը կը կորցնի իր ոյժը «գեղեցիկ սեռի» գրոհի առաջ: Այդպէս, տնտեսական կառուցուածքի յեղաշրջման հետ միասին առաջ են գալիս սօցիալական խոր փոփոխութիւններ հասարակական կեանքի մէջ: Առանց այդ տնտեսական ամուր հիմքի եղած քաղաքակական խլրտումները պատահական խառնակութիւնների, մի խումբ դաւադիր-ուտուպիստների յարուցած փոթորիկ է մի բաժակ ջրի մէջ և մակերեսային ալեկոծութիւն առաջացնելով չի տոգորում մասսան: Միայն այստեղ ուր հասարակական շերտաւորումը կատարուած եղելութիւն է, գասակարգային գիտակցութիւնն էլ զարգացած է շատ յստակ կերպով, առաջ է գնում սօցիալական էվոլյուցիան, մաքրուելով ամեն տեսակ մնահաւատութիւններից, նախապաշտուածներից, խակմութեան ստեղծած խառնուրդներից: Այդպիսի խառնուրդները ցեղական, կրօնուկան, իմաստակային և մագիական խառնաշփոթութիւնն են մտցնում միայն մինչեւ այն ժամանակ, մինչև որ դասակարգային գիտակցութիւնը մթագնած է: Իսկ երբ հասարակութիւնը սկսում է տնտեսական բարգաւաճման շնորհիւ խիստ շերտաւորուել—նա սկսում է գիտակցել և գիտական, օբեկտիվ պրիզմով գիտել իր շուրջ կատարուող երևոյթները, քննադատարար վերաբերուել, իսկ դանագանը ելլե-

տրիստներ», ո թոպիստներ և ծալ փիլիսոփաներ կորցնում են «ղեկավար» լինելու արտօնութիւնը նոյն կերպ, ինչ ձևով քուրմերը և քահանայապետները դաւարում են պատգամախօսների նշանակութիւն ունենալու հենց որ կրօնը բաժանուում է դիտութիւնից:

Այժմ հասարակագիտութիւնից բաժանուում է վեղարուսաւը, և հասարակական ցաւերի զարման գանողը դառնում է միայն և եթ գիտութիւնը: Ահա հասարակական երևոյթների քննութիւնը՝ քրմերի և գեղարուեստագէտների ձեռքերից խլողը և դիտութեան յանձնողը եղան Մարքոսը և Էնգելսը:

Բնականարար ամենուրեք ուր սկսում է որոշ կերպով նըշմարուել դասակարգային շերտաւորումը, զարթնել գիտակցութիւնը սիմֆամոնակ երևան է գալիս հին հայեացքների խիստքնադատութիւն, կրօնը, գեղարուեստը հեռանում են հասարակական քաղաքական ասպարեզից, որ զրաւում է դիտութիւնը:

Այդ պրօցեսը եւրոպական այն երկրներում, ուր տնտեսական զարգացումը շատ ասած է զնացել հիմա կարելի է վերջացած համարել: Եւ այդ պարզ ճշմարտութեան ամենահետևողական կողմնակիցը ամեն տեղ սոցիալ-դեմօկրատիան է: Այդ պրօցեսը իր զարգացման մեծ շրջանում է Խուսաստանում, իսկ գեւ սաղմային դրութեան մէջ է Պարսկաստանում, Թիւրքիայում: Այդ է պատճառը որ Պարսկաստանի յեղափոխութիւնը մի պվտոր, քառային անորոշութիւն ունի, հին-հին զարոց նախապաշտրմունքների մշուշը դեռ չի փարստուել, որովհետեւ անտեսական յետամնացութիւնը գեւ առաջ չի քաշել խոշոր, հզօր յեղափոխական մի րուրժուազիա, ուրեմն և նրա կեանքով կեանքի կոչուող պրոլետարիատ... Պէտք է լինի լաւ շիրա և նպաստաւոր պայմաններ որ եփուի և գինի դասնայ, այլապէս մի թրթուած զիսաշուր, քացախ կը ստացուի... Պէտք է լինի խոշոր րուրժուազիա որ «աշխատաւոր մասսայից» դուրս գայ իսկապէս յեղափոխական, իսկապէս սոցիալիզմի յաղթանակով շահագրգռուած մի գիտակից հասարակական դործոն-բանուորութիւնը, որը միակ գասակարգն է որ ոչինչ չունի կորցնելուներկայ կարգերում և ամեն բան կը ստանայ ապագայում: Արհետաւորութիւնը, զիւղացիութիւնը իբրև մանր սեփականատէրեր սին յոյսերով կապուած եր ներկայ կարգերի հետ, ուստի կիսատպատա, անորոշ թոիչքներով ցնցումներ են անում, բռնկուում և մարտում, իսկ երբէք յարածուն չեն աճում և սարից վար իջնող ձեան գնդակի նման իր թափի մէջ օրէցօր մեծանում, հզօրանում: Այդ պատճառով ամեն մի քայլ Պարս-

կաստանում, որ նպաստում է տնտեսական բարգաւաճման, որ արագացնում է ուժեղ բութուազիսյի երևան գալլ—աւելի մեծ յեղափոխական ակտ է քան զանազան դաւադրական գաղտնի կազմակերպութիւնների ֆիդայաձի էքսպերենտները... Այդ կոնսպիրատիւ-դաւադրական «կառավարութիւնները» վերջիվերջոյ գառնում են աւելի մեծ չարիք քան հին բէժիմը, որովհետեւ այլասիրուելով վերածում են մաֆիական ընկերակցութիւնների: Թիւրբիայում այս 20 տարիների ընթացքում տնտեսական բարգաւաճումը ինքն իրանով բիւր անգամ աւելի նպաստած կը լինէր յեղափոխական գործին, քան զանազան փող շորթողների, մարդասպանների և խենթուելների անմիտ, թեթևամիտ և բթամիտ դաւադրական էքսպերենտները: Այս, ամեն մի բութուա իր տնտեսական գործունէութեամբ անգիտակցաբար շատ աւելի է նպաստում բուն յեղափոխութեան նախապատրաստութեան, քան իրանց յեղափոխական համարող ամեն տեսակի քաղաքական ալբինիկների և «արիւն զօթող» փահլելաններ:

27 դեկտ.

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՑ

ՄՈՍԿՈՒԿՅԵՒՑԻՑ պլ. Աղրիեվ Արտեմ նուիրել և 1907 թ. «Մուրճի» մի օրինակ Մաղրասա դիւղի ուսումնարանին. պլ. Մարտին Ա. Բաղդասարով՝ Ալէքսանդրապոլի մի որևէ ուսումնարանի (մենք ուղարկում ենք օր, ուսումնարանին), պլ. Թարտով և պլ. Ստեփան Պօղով թողնում են մեր տրամադրութեան տակ. որոշեցինք ուղարկել Դաղանչի և Զնաբերդ գիւղերի հասարակութիւններին:

Խմբագիր—Հրատարակիչ Ա. Սարգսիան  
Խրատատեր Ա. Բանսանեան

ԲԱՑԻԱԾ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 թիւն

## “ՀՈՍԱՆՔ,,

ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ՕՐԱԹԵՐԹԻ

Բաժանորդագինն է թիվլիսում և գաւառներում՝ տարե-  
կան 6 բուքլի, ամսական 50 կոպէկ:

Մինչև 1906 թւականի վերջը՝ բաժանորդագինն է 50 կոպէկ:  
Յայտարարութիւնների վճարն է. առաջին երեսում իւրաքան-  
չիւր տողին պետիտով 6 կոպ. վերջին երեսում 3 կոպէկ: Տա-  
րեկան և տևողական յայտարարութիւնները՝ փոխադարձ հա-  
մաձայնութեամբ:

### «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» զրախանութում

Վաճառում են Լեհոն ՍԱՐԴՍԵՆԻ հետևեալ գրքերը.

1) Ժողովրդի կրթութեան զործը մեզանում, 1892 թ.	գինն է 20 կ.:
2) Հին ցաւ (հրապարակախոսական խոհեր—մելո կղե- րի մասին), 1900 թ.	» 30 կ.:
3) Մ'ի քանի օր Արցախում և Սիլիքում՝ » 20 կ.:	
4) Այց Թիւրքաց Հայաստանին, 1890 թ., » 60 կ.:	
5) «Մայրենի խոռ» ընթերց. ձեռնարկ 3-րդ և 4-րդ տարիների համար:	» 80 կ.:

ԱՌԱԵԶԱՐԻ

Աշտի ծիծաղը (պատմուածքների ժողովածու) գ. 1 թ.:

### ՍՈՐԳԻԾ ՍԱՐԳՍԵԱՆԻ

Ազուեցոց բարբառը, կեզուաբ.. հետազ. գինը 2 թ.

## LA REVUE

(Ancienne «revue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration Ret édaction:

12 Avenue de l'Opéra

Paris

1907

**Ա Խ Ո Ւ Թ Ե Ա Ն**

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

ՈՐ ԼՈՅ Է ՄԵԽՆԵԼՈւ ԱՌԱՋԻԿԱՅ ՅՈՒՆԼԱՐԻ մէջ

Ա Լ Է Բ Ս Ա Ն Դ Բ Ա Վ Օ Լ Ո Ւ Ժ

- ԾՐԱԳԻՐԸ.— 1. Կառավարչական կարգադրութիւններ.  
 2. Առաջնորդող յօդուածներ. 3. Քրոնիկոն և տեղեկութիւններ.  
 4. Հեռագիրներ. 5. Թղթակցութիւններ. 6. Ներքին տեսութիւն.  
 7. Արտաքին տեսութիւն. 8. Ֆէլիքտօն. 9. Գրական բաժին.  
 10. Գիւղատնտեսական բաժին. 11. Առողջապահական բաժին.  
 12. Խառն լուրեր. 13. Յայտարարութիւններ:

«Ախուրեանը» ունենալու է յառաջադիմական ուղղութիւն  
 և ձգտելու է ծառայել ժողովրդի կուլտուրական յառաջադիմութեան տնտեսական շահերին:

Խմբագրութեան անդամներն են՝ Ատրակտ, Լեւոն Մանուկ-  
 եան, Նրդ. Հաւատարմ. Յովհ. Հէր-Մարտիրոսեան:

ՄԱՍՆԱԿՑԵԼ ԽՈՍԱՑԵԼ ԵՆ ՆԱԵՒ ՇԱՏ ԳՐԱԿԱՆ ՈՅԺԵՐ

Բ ա ժ ա ն ո ր դ ա զ ի ն ն է

Տարիկան	Կէս տարին
Ալէքսանդրապոլում 3 բուր.	2 բուր.
Ուրիշ տեղերը 4 »	2 » 50 կ.
Արտասահման 12 ֆր.	7 ֆր.

Սռանձին համարը ամէն տեղ 2 կոսլ.

Կարելի է վճարել նաև ամսէ ամիս:

«Ախուրեանը» լոյս է տեսնելու ամենայն օր, ըացի կիւրակի և տօներին յաջորդող օրերից:

Խմբագրութեան հասցէն՝ Александровль, Редак-  
 ция газеты «Ахурянъ». Արտասահմանից՝ Alexandropol  
 Rédaction «Akhourian» (Caucase),

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կ. Ափինեան

На 1907 годъ  
Открыта подписка на исторический жур-  
наль

## „ВЫЛОЕ“

Журналъ—внѣпартійный и посвященный исторіи освободительного движенія—издается подъ редакціей В. Я. Яковлева—Богучарского и П. Е. Щеголева при ближайшемъ участіи В. Л. Бурцева по слѣдующей программѣ.

Статьи и изслѣдованія по истории освободительного движения въ Россіи

Біографії д'яцтвів, воспоминання про нихъ, ихъ собственные мемуары. дневники, письма, статьи, стихотворенія и проч.

Документы и другие материалы, касающиеся движений.

Отдѣльные факты и эпизоды изъ исторіи движенія

#### Історическая бібліографія.

Журналъ будеть выходить по прежнему ежемѣсячно, книжками въ 20 печатныхъ листовъ каждая.

Въ журналѣ помѣщаются—на отдельныхъ листахъ и въ текстѣ—портреты дѣятелей, факсимиле, рисунки, имѣющіе отношеніе къ исторіи движения.

Цѣна съ пересылкой и доставкой: на годъ (съ 1 янв. по 1 янв.)—8 руб.; на  $\frac{1}{2}$  года (съ 1 янв. по 1 июля)—4 руб.; на  $\frac{1}{4}$  года (съ 1 янв. по 1 апр.)—2 руб. Переѣзда адреса—30 коп. (При перемѣнѣ адреса контора просить подписчиковъ сообщать старый адресъ, внесенную сумму и срокъ подписки). Книжные магазины при подпискѣ получаютъ 5% скидки.

Цѣна отдельной книжки въ книжныхъ магазинахъ—1 руб., для покупающихъ въ конторѣ—85 коп.. для выписывающихъ изъ конторы—1 руб. 10 коп. съ пересылкой. Книжнымъ магазинамъ на отдельные книжки—30% скидки.

Подписка принимается въ конторѣ журнала—(ежедневно, кромѣ праздниковъ, отъ 9 до 4 час. днія)—С. Петербургъ, Лиговская ул., 44.

Редакція помѣщается въ С. Петербургѣ на Знаменской  
ул. д. 19.

Личные объяснения съ редакторами—по понед., вторн. четверг., пятницамъ (кромѣ праздниковъ) отъ 3 до 5 час. дня.

Редакторы { В. Я. Богучарский.  
П. Е. Щеголевъ. Издатель Н. Е. Парамоновъ.

Вышла январьская (первая) книга ежем.  
литер.—нолим. изд.

## „РУССКАЯ МЫСЛЬ“

Продолжается подписка на 1907 годъ.

Условія подписки (безъ гербоваго сбора),

Съ дост. и перес.	годъ	9 м.	6 м.	3 м.	1 м.
		12 р.	9 р.	6 р.	3 р.
За границу		14 р.	10.	50 7 р.	3.

50 1. 25

Книгопродацамъ дѣлается уступка въ размѣрѣ 50 копъ полнаго годового экземпляра. Съ подписаніемъ въ разерочку уступокъ имъ не дѣлается.

Подписанія принимается: Въ Москвѣ въ конторѣ журнала — Въ здвиженка, Ваганьковскій пер. д. Куманина, кв. № 1. Въ Петербургѣ въ отдѣленіи конторы журнала — при книжномъ магазинѣ Н. Б. Карбасникова, Гостиный Дворъ, со стороны Невскаго, д. 19. Въ Кіевѣ въ книжномъ магазинѣ Н. Я. Оглоблипа, Крешатикъ. Въ Варшавѣ въ книжномъ магазинѣ Н. Б. Карбасникова, Новый свѣтъ, д. № 69. Въ Вилькѣ въ книжномъ магазинѣ Н. Б. Карбасникова, большая, д. Гордона.

Редакторъ О. К. Арнольдъ.  
Издатель: Т—во И. Кушнеревъ и Ко.

Բայցուծ է լամարովդագրովին

## ՀԱՅԵԼԻ

Գեղարվեստական երգիծարանական պատկերազարդ

Շաբաթաթերթի

Համբէն՝ Տիֆլիս. Редакція «Ալել» Դարձոյ սլ. № 3.

Կամ Tiffis Rédaction du Journal «Haeli».

Открыта подписка на 1907 годъ  
на газету

## ТИФЛИССКИЙ ЛИСТОКЪ

Газета будетъ выходить ежедневно, кроме послѣ праздничныхъ и по-  
недѣльниковъ. Чтобы иметь возможность своевременно доставлять га-  
зету городскимъ и особенно иногороднимъ подписчикамъ, контора из-  
дания проситъ записаться на газету своевременно, такъ какъ заго-  
товка адресовъ гг. подписчиковъ требуетъ на мало времени.

### ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой въ тифлисъ: \* Съ перес. въ другіе города:  
На 12 мѣс.—5 р., на 6 мѣс.—\* На 12 мѣс.—7 руб., 6 мѣс.—  
3 руб., на 3 мѣс.—1 р., 75 к., \* 4—р., на 3 мѣс.—2 р., 50 к..

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но только съ 1 числа  
каждаго мѣсяца, исключительно въ конторѣ издания. Головин-  
скій проспектъ, № 15.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНИЯ: Для Закавказья за мѣсто, занимаемое строкой  
петита, передъ текстомъ—10 коп. и послѣ текста—5 коп. Извѣщенія  
о зреющихъ печатаются на первой страницѣ по—20 коп. за строку и  
на 4—по 10 коп. За объявленія въ справочномъ отдѣлѣ взимается по  
8 коп. за строку. Объявленія вѣдь предѣловъ Закавказья принимают-  
ся исключительно въ центральной конторѣ торгового дома Л. и. Э.  
Метцль и Ко въ Москвѣ, Мясницкая, д. Ситова и въ отдѣленіяхъ его—  
въ С.-Петербургѣ, Большая-Морская, № 11; въ Варшавѣ, Краковское  
предмѣстье, № 53, по 24 к.—передъ текстомъ и 12 коп. послѣ текста.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1907 ГОДЪ  
на газету

## == ЗАКАВКАЗЬЕ ==

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ—8 р., на 6 тыс.—  
5 руб., помѣсячно 1 р.

Плата за объявленія: впереди текста за строку пе-  
тита 15 коп. послѣ текста 8 коп.

Тифлисъ, Головинскій пр., д. Пондоева, рядомъ съ го-  
родской аптекой.

Редакторъ-издатель П. А. ГОТУА.

223

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՏԻՏԵԽԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՍՍԱԳԻՐ

(Նոր լրջան ԴՊ տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Տարեկան	10 ր.	Տարեկան	12 ր.	(32 ֆ.)
կէս տարբին 5 »	40կ	կէս տարբին 7 »	(18 ֆ.)	
ամսական	90 կ.	ամսական	(3 ֆ.)	

Բաժանորդագինը կարելի է վճարել նախ մասս (5—5 ր.), եթէրորդ վճարը լինում է մայիսին։ Տարր զպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիտացիների և բանուորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 սուբլի տաքեկան, որ կարելի է վճարել մասմաս (4-4) ր.։

Հասցեն. Տագան «Մորչ» Tiflis «Mourtch»

ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագործից՝ զրել բարզ մասնաւանդ բաերը, յատակ տնօւնենք ուսուր բառերը, և բերքի մրայն մի եւեսի փայ, ու անձնապիս ու կորանել կէտաղրութեան, ուղղագործեան եւ նույն պարերութիւնները ուռուակի լինեն փայ։ Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նոն բնագիրը։

2. Չընդունուած մեծ յօդուածները (36 երեսէց ա.ելի) պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յնուոյ ոչնչացնուում են Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհախսը։ Փաքը յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնուում։

3. Գրուաժների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը Խմբագրութեան առանց պայմանների ուղիւրկուած ձեռագիրները համարուում են անվճարելի։

4. Խմբագրութիւնը իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրնատելու իրաւունքը։

5. Խմբագրութեանը զանազան հարցութեանով դիմող անձինք պէտք է պատասխանի համարուղարկեն նամակադրում կամ պոստային բլանկ։

6. Հասցե փոխիում համար պէտք է ուղարկել 40 կոպէկ։ Հասցեի փոփոխումը պէտք է ստացուի իրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցեռվ։ Նոր հասցեի հետ պէտք է յաւանել նաև հին հասցեն։

Խմբագիր՝ Լեհոն ՍԱՐԳՍԵԱՆ